Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝
https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Վիպակ, Արձակ
13+

Շիրվանզադե
Չար ոգին
I

Այն քաղաքը, ուր կատարվել է այս անցքը, այժմ էլ այնպես աննշան է և աշխարհից մոռացված, որպես շատ տարիներ առաջ: Նրա բնակիչները աղքատ են, տները մեծ մասամբ ավերակ, փողոցները քարերի ու հողի կույտերով լի, տխուր, ամայի:

Գեղեցիկ է միայն այդ քաղաքի բնությունը: Օդը քնքուշ է, երկինքը կապույտ ու պայծառ, շրջակա դաշտերը ծաղկազարդ, ձորերը հովասուն: Այնտեղ գարնանը գիշերը մինչև լույս երգում են սոխակները գավիթների բարձրագագաթ բարդիների վրա, իրանց գեղգեղանքը խառնելով տերևների մեղմիկ սոսափյունի հետ:

Մի խումբ երեխաներ, մի կիսավեր տան փլատակների վրա ցրված, վազվզում էին այս ու այն կողմ, ծիծաղում, աղաղակում, կենդանություն տալով կիսավեր քաղաքի ամայի փողոցին: Նրանց մեջ կար և՛ մի յոթ տարեկան աղջիկ, որին ընկերուհիները կոչում էին «Սիրուն» Սոնա: Ոտաբաց, գլխաբաց, մի ձեռին բռնած մի կտոր հաց, մյուս ձեռով ճակատի վրա սփռված ոսկեգույն մազերը ուղղելով, կանգնած էր մի հողաբլրի վրա և աղաղակում էր.

— Եկե՛ք, եկե՛ք, եթե կարող եք, ինձ բռնեցեք:

Նրա սևորակ աչքերը վառվել էին սև ադամանդների պես: Նա ուրախ էր, որովհետև ոչ ոք նրա պես վազել չգիտեր, Արդեն երեք-չորս անգամ պտտել էր բլրակի շուրջը, և խաղընկերները չէին կարողացել նրան բռնել: Արդարև, նա սիրուն էր: Արեգակը այրել և սևացրել էր այտերն ու քիթը, քարերը քերել էին ոտները և կոպտացրել, բայց, այնուամենայնիվ, սիրուն էր: Սիրուն նույնիսկ այն երկու կտոր ցնցոտիների մեջ, որ հազիվ հազ ծածկում էին նրա մարմնիկը և որ չքավորների լեզվով կոչվում են «հագուստ»:

— Եկե՛ք, եկե՛ք, թե կարող եք, ինձ բռնեցեք...

Դարձյալ խաղընկերները հարձակվեցին նրան բռնելու: Նորից կամեցավ փախչել, բայց այս անգամ պատահեց մի բան: Մի քանի քայլ չարած, հանկարծ մի վայրենի ճիչ արձակեց և երեսնիվեր ընկավ հողաբլրի վրա: Ոչ այնպես, ինչպես սովորաբար ընկնում են նրա հասակակիցները և իսկույն ոտքի կանգնում: Նա ուղղակի թավալվեց ինչպես գնդակահար եղած մի փոքրիկ գազան, մռնչալով ստացած վերքից:

Խաղընկերները մի ակնթարթում մոտեցան նրան բարձրացնելու: Նա մի տարօրինակ շարժում գործեց: Ամենը սարսափած դես ու դեն ցրվեցին: Նրա ամբողջ մարմինն ու երեսի մկանունքները ընդարմացել էին: Աչքերը կիսաբաց էին, բիբերը խոշորացած և անշարժ: Բերանից հոսում էր փրփրալի թուքը թանձր շարավի պես: Նրա ձեռների բութ մատները, ինչպես ոլորուն պարան, ծռվել էին դեպի ափերը և սեղմվել մյուս մատների տակ, իսկ ոտների ոլոքները ցցվել էին չորացած ընկույզների նման: Դեմքը առաջին վայրկյան դեղնեց, հետո սկսեց կապտել, մթագնել, վերջապես, բոլորովին կարմրեց: Շնչառությունը մի քանի վայրկյան ընդհատվեց, ապա վերադարձավ: Այս դրության մեջ մնաց մի րոպեի չափ: Հետո նրա ձախ երեսի մկանունքները սկսեցին ցնցվել, ապա ցնցվեց աջ երեսը, պարանոցը և այնուհետև — ամբողջ մարմինը: Այժմ նա շնչում էր արագ-արագ, ուժգին և, կարծես, հառաչելով:

Այս անսպասելի դեպքը ապշեցրել էր նրա խաղընկերներին: Տասը քայլ հեռու հավաքված, նրանք նայում էին իրանց ընկերուհուն: Բոլորի դեմքերի վրա նկարված էր և՛ երկյուղ, և՛ հետաքրքրություն: Ի՞նչ պատահեց սիրուն Սոնային: Մի րոպե առաջ վազվզում էր ամենից արագ, ինչո՞ւ այժմ, գետնին թավալված, երկյուղալի շարժումներ է անում: Ո՞վ գիտե, քարով խփեցին նրան: Բայց ոչ ոք Սոնային ձեռ չէր տվել: Նա ինքն ընկավ, այս տեսան բոլորը:

«Սևիկ» Մարգարիտը վազեց Սոնայի ծնողներին լուր տալու: Տանը ոչ ոք չկար: Սոնայի հայրը շուկայումն էր, իսկ մայրը գնացել էր ուրիշների համար հաց թխելու: Նա շրջիկ հացթուխ էր: Ա՛խ, եթե իմանար, ի՜նչպես նրա միակ զավակը, անտեր, անօգնական, ընկած է փողոցում, արեգակի տակ, ի՜նչպես նրա մազերը գզգզվել են, փոշով ծածկվել և ի՜նչպես նա խրխռում էր վիզը կտրած գառնուկի պես:

— Գիժ-Դանելը, գիժ-Դանելը, — գոչեցին մանուկները միաբերան և մի վայրկյանում ցրվեցին այս ու այն կողմ:

Փողոցի ծայրից գալիս է մի մարդ, հաստ ու երկայն գավազանը կրծքի վրա սազի պես բռնած, բարձր ձայնով թուրքերեն երգելով: Նա ոտաբոբիկ էր և գլխաբաց: Նրա սևացած և բրդբրդոտ կուրծքը բոլորովին մերկ էր, ալեխառն միրուքն ու մազերը կեղտոտ և փշերի պես ցցված: Նրա հագուստը բաղկացած էր

հաստ կտավից կարած մի շապկից և կարճ անդրավարտիկից, որ ծածկված էին թանձր կեղտով: Ո՞վ չէր ճանաչում գիժ-Դանելին և չէր տեսել նրան: Օրը մինչև երեկո նա պտտում էր կիսավեր քաղաքի փողոցներում, մերթ ողբալով փլատակները, մերթ վազվզելով և երբեմն չորքոտանի ման գալով, որ ավելի վախեցնի վախկոտ մանուկներին և ծիծաղեցնի անվեհերներին:

Նա մոտեցավ Սոնային, բղավեց նրա վրա: Աղջիկը չվերկացավ, չշարժվեց: Դանելը զարմացավ. այն ո՞ր հանդուգն երեխան է, որ գիժ-Դանելից չի սարսափում: Եվ նայեց աղջկա երեսին: Այժմ Սոնայի ձեռներն ու ոտները չէին կծկվում, միայն նա շատ գունատ էր և զարմացած աչքերով մտիկ էր անում Դանելի երեսին: Նրա բերնի փրփուրը, խառնվելով գետնի փոշիի հետ, ցեխոտել էր երեսն ու մազերի մի մասը: Նա հանդարտիկ բարձրացրեց ծանրացած գլուխը և նստեց:

— Քեզ խփե՞լ են, — հարցրեց գիժ-Դանելը:

Սոնան լուռ նայում էր նրա երեսին: Նա իր մարմնի մեջ զգում էր սաստիկ թուլություն: Ոչինչ չգիտեր այն հանկարծահաս հարվածի մասին, որ նրան թավալեց գետնին:

— Գլուխս ցավում է, — արտասանեց նա նվաղած ձայնով:

Գիժ-Դանելը խեթ-խեթ նայեց նրա երեսին, և հանկարծ սովորական բարկությունը փոխվեց մի անսովոր մեղմության:

— Մանիշա՛կս, Մանիշա՛կս, — գոչեց նա, — լավ միտս է, նա էլ չէր խոսում, չվերկացավ: Դու վերկաց, ես քեզ կօգնեմ:

Նա բռնեց Սոնայի բազուկներից և ոտքի կանգնեցրեց, հետաքրքրությամբ նայելով նրա աչքերին, հասակին, մազերին: Հետո նայելով իր չորս կողմը, այնպես որ, կարծես, վախենում էր տեսնեն, համբուրեց Սոնայի ճակատը, գրկեց նրան և բարձրացրեց:

— Է՛յ, լակոտներ, եկե՛ք, ցույց տվեք Մանիշակիս տունը, ես ասլան Դանելն եմ, պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ:

Ուրիշ ժամանակ Դանելի այս սովորական սպառնալիքը կստիպեր փոքրիկներին անհետանալ: Այս անգամ, տեսնելով, որ նա հայրական խնամքով գրկեց ընկերուհուն, սիրտ առան, և առաջ գալով, ցույց տվին Սոնայի բնակարանը:

Փողոցի միջին մասում, երկու փոքրիկ տների մեջտեղ, երևում էր տասը քայլ երկայնությամբ մի պատ, որ կազմված էր միմյանց վրա առանց շաղախի դարսած քարերից: Երկու հնամաշ տախտակներ, իրարու հետ բևեռված, ծառայում էին դռան փոխարեն:

Գիժ-Դանելը, Սոնային գրկած, մտավ մի կեղտոտ բակ, որի խորքում գտնվում էր Սոնայի բնակարանը, գյուղական խրճիթի պես մի բան: Նա զգուշաբար բեռը դրեց խրճիթի դռների առջև և, դառնալով մանուկներին, հարցրեց.

— Այս երեխան մայր ունի՞:

— Մայր էլ ունի, հայր էլ:

— Հաա՞: Մանիշակս մայր չուներ, մազերը այսպես էին, ճակատն էլ աչքերն էլ: Է՛յ, լակոտներ, այստեղից չհեռանաք մինչև նրա մոր գալը. իմացա՞ք, պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ:

Նա չոքած էր Սոնայի առջև. հենվեց գավազանի վրա, որ բարձրանա: Այդ միջոցին խրճիթին մոտեցավ մի կին տեղական հագուստով, կռնատակին բռնած երկու թաժա հաց: Հակառակ քաղաքի սովորության, այդ կնոջ երեսը բաց էր, չնայելով երիտասարդ հասակին: Տեսնելով խրճիթի առջև խմբված մանուկներին, նա թույլ ձայնով արտասանեց.

— Էլի քամբախտը...

Բայց երբ նկատեց Սոնային, ձեռքերը թուլացան, հացերը կռնատակից վայր ընկան: Նա հարձակվեց իր աղջկա վրա, գոչելով.

— Էրեխա՛ս, էրեխա՛ս...

Քրտինքը անձրևի պես թափվում էր երեսից: Այտերը այնչափ կարմրած էին, որ այրված աղյուսի էին նմանվում: Աչքերը լի էին արյունով, պարանոցը փքված, կոկորդի երակներն ուռած և կապտած: Այդ օրը հացթուխ Շուշանը մի քանի հարյուր անգամ գլխիվայր թեքվել էր վառ թոնրի մեջ: Կրակը կիզել էր նրա այտերը և արյունը խփել գլխին:

— Դրսումը ընկած էր, ասլան Դանելը բերեր այստեղ, — ասաց խենթը:

— Դրսո՞ւմ, ընկա՞ծ, — կրկնեց հացթուխը, — ինչո՞ւ էր ընկել:

— Բերանից փրփուր էր գալիս, կարմրել էր քեզ պես, ոտները տափին էր խփում...

Հացթուխը ընդհատեց խենթի խոսքը մի ճիչով: Նայեց Սոնայի ապուշ աչքերին և, կարծես, մի մոռացված բան մտաբերեց: Ձեռները բարձրացնելով, խփեց իր գլխին և բացականչեց.

— Վա՛յ նրա մորը...

Մի քանիսը Սոնայի խաղընկերներից, միմյանց խոսքը կտրելով, պատմեցին պատահած անցքի մանրամասները: Քանի նրանք պատմում էին, այնքան հացթուխի դեմքը փոխվում էր: Նա շարունակ գլխով հավանական շարժումներ էր անում ամեն մի խոսք լսելիս: Երբ բոլորը ուշադրությամբ լսեց, դարձյալ խորը-խորը նայեց Սոնայի երեսին և այժմ նրա կասկածը բոլորովին փարատվեց: Վերջին տարվա ընթացքում այդ երրորդ դեպքն էր, որ պատահում էր Սոնային: Առաջին և երկրորդ անգամ Սոնան տանն էր: Բացի ծնողներից ոչ ոք չտեսավ նրա դժբախտությունը: Իսկ այժմ փողոցո՞ւմ, խաղընկերների մո՛տ...

— Գնացեք, — գոչեց Հացթուխը, դառն սրտմտությամբ դառնալով մանուկներին ու աղջիկներին, — ի՞նչ բան ունեք մեզ հետ, մենք անբախտ ենք: Դանել ապեր, գնա՛, ոչ ոքի չասես, եթե հոգի ունիս: Երեխա է, ընկավ, ի՞նչ անենք, ուրիշներն էլ ընկնում են… Ի՛նչ փրփուր, ի՛նչ կապտել, կարմրել, սուտ է…

Վշտացած կնոջ դառը խոսքերը Դանելին խորհրդավոր թվացին: Նրան խնդրում էին լռել, և նա զգաց, որ այս խնդիրը մի լուրջ իմաստ ունի: Նա ձեռով ծածկեց բերանը, մեջքից թեքվեց և, դառնալով երեխաներին, շշնջեց.

— Սուսս, ոչ ոքի… պատառ-պատառ կանեմ, հում–հում կուտեմ:

Հետո, գավազանը շարժելով, փախցրեց բոլորին և ինքն էլ նրանց հետևից դուրս գնաց, թուրքերեն երգելով,

«Չար որսորդի նետը մտավ

Իմ ձագուկի սրտի մեջ…»

Հացթուխը գրկեց Սոնային, տարավ խրճիթի ներսը, հանեց սենյակի միջին պատի մեծ խորշից անկողին և սփռեց հատակի վրա: Պառկեցրեց այնտեղ հիվանդին և ինքն էլ նստեց նրա մոտ, իր խանդակաթ հայացքը հառելով նրա երեսին: Սոնան լուռ էր և տակավին ապշած նայում էր այս ու այն կողմ: Մոր հարցերին անորոշ պատասխաններ էր տալիս: Գանգատվում էր միայն, թե գլուխը ցավում է, հոգնած է, մարմնի վրա զգում է ինչ-որ ծանրություն:

Մի քանի րոպե անցած ներս մտավ հացթուխի ամուսինը — պայտառ Ոսկանը և, կանգնելով աղջկա գլխի կողմում, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել:

Մոտ քառասուն տարեկան մի մարդ էր Ոսկանը, միջահասակ և տգեղ: Նրա ձեռները, երեսը, պարանոցը ածուխի մրով սևացած էին: Նրա սրածայր քիթը ծածկված էր փոքրիկ արյունագույն բշտիկներով: Իսկ ականջների տակ, ծնոտի վրա երևում էին երկու կապտագույն բծեր, որ փոքրիկ աչքերի ու թավ ունքերի հետ միասին հրող ազդեցություն էր անում մարդու վրա:

Հացթուխը չնայեց նրա կողմը: Միայն աչքերը բարձրացրեց դեպի վեր և ձեռները տարածեց օդի մեջ: Նա երկնքից համբերություն էր աղերսում: Ոսկանը իր թերմաշ չուխայի տակից ձգեց հատակի վրա գույնզգույն թաշկինակի մեջ փաթաթած մի կտոր միս, ասելով.

— Վե՛ր կաց, խորովիր, քաղցած եմ...

Տասնումեկ տարի էր հլու կինը չարչարվում էր այդ մարդու ձեռքին, ինչպես վաճառված ստրուկ: Միայն Ոսկանի գռեհիկ բնավորությունը չէր հացթուխին տանջողը: Հաճախ նա տուն էր գալիս հարբած: Այդ ժամանակ կնիկը նայում էր նրա փոքրիկ և դեղնագույն աչքերին: Վա՛յ նրան, եթե սխալ էր հասկացել այդ աչքերի իմաստը: Առանց այլևայլի իր մեջքի վրա պիտի ընդուներ կոպիտ պայտառի բռունցքի հարվածները:

Ծույլ ու պղերգ մարդը, կարծես, կնոջ վիշտը ավելի կատարյալ անելու համար մի սովորություն ևս ուներ: Օրվա մեծ մասը հորանջելով պտտում էր ուրիշների խանութները, պատահած տեղը ընդունելով սրանից նրանից մի բաժակ օղի: Այդ էլ բավական չէր: Նա բոլոր մեռելներին ուղեկցում էր մինչև գերեզմանատուն, երբ «մեռելահաց» ուտելու հույս ուներ: Ամենից ավելի հացթուխին վիրավորում էր այս ձրիակերությունը: Չքավորի վիճակը այդ կնոջ սրտում չէր ոչնչացրել, ընդհակառակը, հիվանդության աստիճանին էր հասցրել պատվի զգացումը: Օրը

մինչև երեկո քրտինքը երեսին կրում էր տաժանակիր աշխատանք իր ընտանիքի օրվա պարենը վաստակելու համար:

— Տեսնում ես ինչ օրի ընկավ երեխաս, — գոչեց հացթուխը, առաջին անգամ համարձակվելով իր կսկիծը բարկացկոտ ձայնով արտահայտել: — Կատարվեց չար երազս: Հայրդ նստած էր մի սև ձիու վրա, երեխայիս էլ դրել էր քամակին… գնում էին, գնում, չգիտեմ որտեղ… Ինչո՞ւ, նրա գերեզմանը տակն ու վրա լինի, ինչո՞ւ երեխայիս հետը տարավ.. Ընկնավո՞ր, տեր-աստված, ո՞ր մեղքիս համար…

Այս գանգատը արտասանեց մի այնպիսի ազդու կսկծալի եղանակով, որ Սոնան դարձրեց դեպի նա թախծալի աչքերը և սկսեց հանդարտիկ լաց լինել: Արտասուքի խոշոր կաթիլները գլորվում էին նրա գունատ այտերի վրայով և թրջում մոր կուրծքը: Կարծես, հացթուխի հուսակտուր խոսքերի մեջ զգաց և հասկացավ, թե ինչ պատուհաս էր եկել իր գլխին:

Ոսկանը սևացած մատներով երկաթյա ունելիքի պես ճանկեց՝ կոշտ ավելի նման միրուքը: Կնոջ խոսքերն ու աղջկա արցունքները ազդեցին նրա վրա: Նա արդեն հասկացել էր, ինչ չարաբաստիկ դեպք է տեղի ունեցել: Նա միայն հարցրեց.

— Էլի ո՞րտեղ ընկավ…

— Փողոցում, ընկերների առաջ…

Տիրեց մի ճնշող լռություն: Մայրը գրկել էր աղջկա գլուխը, աչքերը հառել առաստաղին և մտքում աղոթում էր: Սոնան դեռ լալիս էր, ձեռները փաթաթած մոր պարանոցին: Ոսկանը անցուդարձ էր անում յոթ-ութ քայլ երկայնություն ունեցող սենյակում: Նա կանգ առավ, մատները հանեց միրուքի միջից, թեքվեց, գրկեց Սոնային և համբուրեց նրա ճակատը:

Դա առաջին հայրական համբույրն էր այն օրից, երբ Սոնան կարող էր զգալ ծնողների համբույրը: Նա բռնեց հոր կոշտ ձեռը և սեղմեց շրթունքներին…

II

Այդ օրից «Սիրուն Սոնային» ընկերուհիները այլևս չէին տեսնում փողոցում: Մայրը փակեց նրան տանը այն հասակում, երբ դեռ մի-երկու տարի մնում էր ազատ վազվզել դրացի աղջիկների հետ:

Կարող էր Սոնայի թշվառության լուրը տարածվել քաղաքում, այն ժամանակ նրա ապագան փչացած էր: Ո՛վ կհամաձայնվեր նրան կին առնել: Այսպես էր մտածում հացթուխը: Նա չէր հոգում, թե դիցուք Սոնայի ցավը հաջողվեց թաքցնելու մինչև նրա ամուսնանալը, հետո մի՞թե մի օր իրականությունը չպիտի հայտնվեր: Նա հույս ուներ աստծու գթության վրա և չէր ուզում հավատալ, որ իր զավակը բռնված է անբուժելի ախտով:

Դեռ մի տարի չէր անցել չարաբախտ օրից, Սոնան արդեն երկու անգամ ուշաթափվել էր: Վերջին անգամ ընկավ ուղղակի հոր գիրկը: Այդ միջոցին Ոսկանը ծալապատիկ նստած էր հատակի վրա: Նա նոր էր վերադարձել մի հարուստ մեռելահացից: Համբարձում աղային էին թաղում, մի՞թե կարելի էր

քաղաքի առաջին մարդու հոգու համար «արքայություն» չմաղթել, նրա ազգականներին էլ «աստծով մխիթարվեք» չասել:

Նա կարծեց, թե Սոնան անզգուշաբար սայթաքեց և ընկավ: Ձեռի մի շարժումով բարկացած շպրտեց նրան մի կողմ:

Հիվանդը ընկավ սենյակի մեջտեղն ու սկսեց խրխռալ: Այն ժամանակ միայն հարբած պայտառը զգաց նրա ցավը: Նա վերկացավ, դրեց աղջկան իր ծնկների վրա, նայեց նրա ամուր փակված աչքերին, որ ծռվել էին դեպի վեր և մտել ունքերի տակ: Նորից հիվանդին բաց թողեց դեպի հատակը և ինքը, երեսին խաչակնքելով, ետ ու ետ քաշվեց:

Օրը գարնանային էր: Բնությունը նոր նոր սկսել էր ծաղկել: Սենյակի օճորքի տակ բուն դրած ծիծեռնակները ճախր էին գործում սիրուն Սոնայի գլխի վրա, ծլվլալով և իրանց ձագուկների համար կերակուր որսալով: Արևի պայծառ ու դուրեկան լույսը տարածվել էր դեպի խրճիթի ներսը: Նրա մի շողը խաղում էր հատակի վրա թավալված Սոնայի բաց ճակատին, որի շուրջը գանգուր ոսկեգույն մազերը կազմել էին մի սքանչելի պսակ: Դրսից լսվում էին վազվզող աղջիկների և մանուկների ուրախ ձայները: Պատի տակ նստած էր հարբած պայտառը և, նայելով իր աղջկան, քթի տակ ինչ-որ մրթմրթում էր:

Երբ հացթուխը ներս մտավ, Սոնան արդեն սթափվել էր: Սենյակը աղմկվեց Շուշանի կսկծալի աղաղակով: Նա վազեց և հարձակվեց աղջկա վրա, կամեցավ գրկել և համբույրներով հեկեկար: Բայց Սոնան այնքան թույլ էր, որ մոր գրկում չկարողացավ շունչ քաշել: Գլուխը դրեց հատակին, կամացուկ արտասանելով:

— Ոտներս ու մեջքս ցավում են:

Դարձյալ լսվում էին դրսում խաղացող երեխաների ձայները: Հացթուխը, ատամները կրճտելով, կուրծքը եղունգներով ճանկռտելով, վերկացանվ և խրճիթի դռները ծածկեց: Օհ, ո՜րքան ծանր ազդեցություն էին գործում նրա վրա այդ առույգ ձայները, ի՞նչպես նախանձի և ատելության զգացումը կրծում էր նրա սիրտը:

— Այս էր իմ օրն էլի, — կրկնեց նա երրորդ անգամ և, դառնալով ամուսնուն շարունակեց.-Գնա՛, չոքիր եկեղեցու դռների առջև, ճակատդ քսիր քարերին, աղաչիր աստծուն, ասա. «տեր, դո՜ւ չարը հանես երեխայիս միջից. տեր, դո՜ւ նրան ազատես...»

Բայց բևեռագործը վաղուց էր մոռացել եկեղեցու ճանապարը և վաղուց էր սառել դեպի աստված, ոչ այն պատճառով, որ հավատ չուներ: Ո՜չ, նա չգիտեր ինչ ասել է աղոթք, սրբություն, աստված: Մի անտարբերություն տիրել էր նրա հոգուն և այնտեղ մեռցրել ամեն մի զգացում: Քանի՛ տարի էր նա հարփում էր: Նրա ուղեղը օրից-օր բթանում էր, միտքը կաշկանդվում: Ահա ինչու չեր զգում հոգեկան մխիթարության կարիք: Նա դարձել էր մի անբան կենդանի և վարում էր լոկ բուսական կյանք:

Այնինչ հացթուխը ամեն առավոտ և ամեն երեկո այցելում էր քաղաքի կիսախարխուլ եկեղեցին, կանգնում էր մոմերի ծխից սևացած սյուներից մեկի տակ և աղոթում: Երբեմն ամբողջ ժամերգության միջոցին մնում էր մերկ

քարահատակի վրա չոքած: Նրա աղոթքը ոչ երկար էր, ոչ բարդ: Հասարակ «Հայր մերն» անգամ ուղիղ չգիտեր: Նա միայն աղերսում էր:

«Տե՛ր, դո՛ւ իմ երեխային փրկիր չարից, տեր, ինձ տուր նրա ցավը...»

Քանի՛-քանի՛ անգամ էր օրվա ընթացքում կրկնում այս դարձվածը: Ոչ միայ տանը ու եկեղեցում, այլև փողոցներում, այլև ուրիշների տներում, ժամանակ — անժամանակ: Հաճախ նա, գլուխը դուրս բերելով վառ թոնրի միջից, երեսի քրտինքը սրբելով իր կոշտ գոգնոցով, աչքերը դարձնում էր դեպի վեր: Ներկա եղողները լսում էին նրա շշնջյունը, բայց չգիտեյն ինչ է մրմնջում:

Զուր էին անցնում նրա ջերմ արցունքները, հավատով լի, աղերսանքները: Սոնան ոչ միայ չէր փրկվում, այլև օրից-օր ավելի ու ավելի էր ենթարկվում «չարին»: Հուսահատությունը երբեմն հավատացյալ կնոջ սիրտը ձգում էր մի տեսակ կասկած սատվածային արդարամտության մասին: Մի՞թե աստված փակել էր իր լսելիքը նրա աղոթքների համար: Շատ անգամ իր ամբողջ շաբաթվա վաստակի կես մասը բաժանում էր մուրացկաններին, մյուս կեսով մոմ էր գնում և վառում եկեղեցում այս կամ այն սրբի պատկերի առջև: Բայց սրբերն էլ չէին օգնում, և նրա հառաչանքները ցնդվում էին դատարկ օդի մեջ: Իսկ Սոնան ամեն օր մորմոքում էր նրա սիրտը:

— Մայրիկ, ինձ ե՞րբ կթողնես փողոց գնամ:

— Այժմ դու մեծ աղջիկ ես, փողոց դուրս գալը ամոթ է:

Ուրիշ պատասխան չէր կարողանում գտնել մայրը: Այնինչ՝ Սոնայի ութ տարին դեռ նոր էր լրացել: Նա շատ լավ գիտեր, որ իր հասակակիցները տակավին վազվզում են դրսում: Մատաղահաս աղջկա սիրտը ուժգին բաբախում էր, երբ դրսից լսում էր իր ընկերուհիների զվարթ քրքիջները կամ լացն ու աղաղակները: Թևերը կտրած թռչունի պես, ամբողջ օրը պտտում էր փոքրիկ գավթում, չէր համարձակվում դեպի փողոց նայել անգամ, երբ ծնողները տանն էին: Իսկ երբ հայրը շուկայումն էր լինում, մայրը աշխատանքի գնալիս, գցում էր նրան խրճիթ և դռները դրսից կողպում: Թող այնտեղ ընկնի, եթե մեռնի էլ գոնե ուրիշները չեն տեսնիլ:

Այդ ժամանակ Սոնան ավելի էր զգում իր թշվառությունը: Խրճիթը լուսամուտ չուներ: Լույսը գալիս էր միայն դռների վերին կողմի մի փոքրիկ մասից, որը ծածկված էր յուղած թղթով: Ստեպ-ստեպ նա մոտենում էր դռներին և նրանց արանքով նայում դեպի դուրս: Այնտեղ աքաղաղները կռվում էին, հավերը կչկչում, ծտերը ծլվլում: Նա երանի էր տալիս այդ թռչունների ազատությանը: Հետո լալիս էր, հոգնում էր, պառկում հատակի վրա և նիրհում: Գալիս էր մայրը, բաց էր անում դռներ, գրկում էր նրան և, կատաղի համբույրներով երեսը ծածկելով, թևից բռնած դուրս էր տանում ու ասում.

— Տե՛ս աստծու լույսը:

Երբեմն նա Սոնային թույլ էր տալիս բարձրանալ խրճիթի տափակ հողային կտուրի վրա, իսկ ինքը հսկում էր նրան արթուն աչքերով: Ամեն վայրկյան սպասում էր սարսափելի երևույթի կրկնվելուն: Սոնայի մի թեթև ճիչը, մի արագ շարժումը ցնցումն էր պատճառում նրան: Նայում էր հիվանդ աղջիկը այս կողմ այն կողմ, տեսնում էր միայն հարևան գավիթների թթենիները կամ կիսավեր

տների պատերը: Շուտով ձանձրանում էր և խնդրում մորը ցած բերել իրան կտուրից:

Բայց ժամանակը հետզհետե ստիպեց Սոնային ընտելանալ իր վիճակին: Մոր համառ մերժումները բոլորովին կոտրեցին նրա հույսերը երբևէ տեսնել իր ընկերուհիներին: Նա սկսեց ինքն իր համար զվարճալիքներ որոնել տանը: Մայրը բերում էր նրա համար զանազան լաթերի կտորներ: Սոնան կավից խաղատիկիններ էր շինում, հագցնում էր նրանց այդ կտորներից կարած գույնզգույն շապիկներ, դնում էր նույնպես կավից շինած մի տեսակ պատվանդանի վրա և խաղում նրանց հետ: Յուրաքանչյուր խաղատիկին ուներ հատուկ անուն, որ Սոնան ընտրել էր իր ընկերուհիների անունների մեջ: Նա խոսում էր ամեն մեկի հետ համաձայն այս կամ այն ընկերուհու բնավորության:

— Մարգարիտ, թևս մի՛ կծիր. Մանան, շապիկդ կեղտոտեցիր. ի՜ֆ, տափը մտնես, Ջավահիր, տես Զառվարդը ի՞նչ խելոք է…

Օրեցօր նա հասունանում էր: Ինչպես ջերմոցի քնքուշ ծաղիկ, չնայելով բնական շրջանից անջատված լինելուն, փակ մթնոլորտի մեջ աճում էր և հետզհետե ստանում բնությունից սահմանված բոլոր ձևերն ու գեղեցկությունը: Մայրական փաղաքշանքները և գգվանքներն էին կազմում նրա կյանքի ամենակենսատու հյութը: Ծծում էր այդ հյութը ամբողջ հոգով և նրա մանկական սիրտը լեցվում էր որդիական սիրո ու երախտագիտության զգացումներով: Այլևս չէր տխրում, այլևս չէր ձգտում դեպի փողոց: Ձանձրալի էին նրա համար այն ժամերը, երբ մայրը տանը չէր, որ խաղատիկինները բազմեցներ նրա առջև, ցույց տար յուրաքանչյուրի զգեստը, ուրախանար նրա հետ:

Կար և՛ մի ուրիշ անձ, որ ուրախակից էր Սոնայի ուրախությանը և վշտակից նրա վշտին, ո՜վ գիտե, գուցե ոչ պակաս քան նրա մայրը:

Այն օրից, երբ տեղի ունեցավ տխուր անցքը, գիժ-Դանելը շաբաթը մի երկու անգամ մտնում էր հացթուխի գավիթը և հարցնում Սոնայի մասին: Մի զարմանալի հոգատարություն էր ցույց տալիս այդ փողոցային խենթը փոքրիկ աղջկա վերաբերմամբ: Կարծես, այն օրվա դեպքը պարտականություն էր դրել նրա վրա՝ հետաքրքրվել Սոնայի ճակատագրով, ինչպես մի փափկասիրտ արյունակից:

Սկզբում հացթուխը փորձեց թաքցնել նրանից իր աղջկա ցավը, մանավանդ, որ խենթը երբեք չէր հիշեցնում այդ մասին: Նա հավատացած էր, որ վաղուց Սոնայի ուշաթափվելը մոռացել են թե գիժ-Դանելը և թե աղջիկներն ու մանուկները: Բայց մի օր Սոնան ընկավ գավթի մեջ խենթի ներկայությամբ, և այդ օրից անկարելի էր գաղտնիքը նրանից թաքցնել:

Գիժ-Դանելը ծանոթ էր այդ տեսակ ցավերին, կյանքում ընկնավորներ տեսել էր:

— Սուրբ է, — ասաց, երեսին խաչակնքելով, — տեսնենք ինչ մարգարեություն է անում:

Նա չոքեց Սոնայի առջև, պատկառանքով ականջ դրեց, բայց հիվանդի խրխռոցից ոչինչ չհասկացավ:

— Դանել-ապեր, հիմա ամեն բան իմացար, — ասաց հացթուխը աղերսական ձայնով, — թող երկնքում աստված, երկրում միայն մենք իմանանք:

— Սո՛ւսս, Մանիշակս քնած է, — շշնջաց խենթը ձեռով ծածկելով իր բերանը:

Այդ վայրկյանին նրա դեմքն այնքան խորհրդավոր էր, որ հացթուխը կարիք չզգաց իր խնդիրը կրկնելու:

Այնուհետև խենթն ավելի հաճախ էր այցելում հացթուխի խրճիթը: Երբեմն գալիս էր պայտագործի հետ միասին: Թվում էր, Ոսկանը մի տեսակ համակրանք էր տածում դեպի այդ անկոչ բարեկամը: Գուցե պատճառն այն էր, որ երբ պայտագործը հարբած էր լինում, խենթն էր նրա թևի տակ մտնում ու տուն բերում: Կամ գուցե այն, որ նա էլ Ոսկանի պես սիրում էր մեռելներին ուղեկցել մինչև գերեզմանատուն: Բայց ուղեկցում էր ոչ թե քելեխ սիրելուց, այլ ուներ մի գաղտնիք, որ տակավին հայտնի չէր պայտագործին: Այսպես թե այնպես, նա Ոսկանի համար մի սքանչելի ընկեր էր: Նրանք միշտ միասին էին գնում գերեզմանատուն, միասին ծալապատիկ նստում բաց օդի տակ, կանաչազարդ գետնի վրա սփռած սեղանի շուրջը, միասին «արքայություն» մաղթում հանգուցյալին և շատ անգամ միևնույն ամանից ուտում: Խենթն ինքը շատ քիչ էր խմում, բայց եռանդով կատարում էր իր բարեկամի խնդիրը — միմյանց հետևից լցնում էր նրա բաժակը, կրկնելով.

— Որսկան աղբեր, ներսդ տաքացրո՛ւ:

Երբեմն հանկարծ թողնում էր սեղանը և, գերեզմանաքարերի միջով ոստոստալով, հեռանում էր: Թե ո՛ր էր գնում — հայտնի չէր: Կես ժամ անցած՝ վերադառնում էր, գլուխը կրծքին թեքած, քթի տակ երգելով ինչ-որ տխուր երգ:

Ամեն անգամ նա մեռելահացից բաժին էր բերում Սոնայի համար — մի քանի խաշած ձու կամ մի կտոր միս, իսկ մեծ մասամբ բարակ լավաշի մեջ փաթաթած «հալվա», որ ալյուրից, յուղից և մեղրից պատրաստած մի տեսակ տեղական քաղցրավենի էր: Հացթուխը հոգով դեմ էր այդ բաժիններին, բայց ներում էր խենթին: Նա երախտապարտ էր համարում իրան այդ մարդու առջև և չէր ուզում ոչ մի բանով նրա սրտին դիպչել: Շատ անգամ հրավիրում էր խենթին ճաշի, նստեցնում էր իր ամուսնու մոտ և երկուսին էլ հավասար խոնարհությամբ ծառայում:

Իսկ Սոնան օրիցօր ընտելանում էր գիժ-Դանելին: Չկար այլևս առաջվա երկյուղը այդ մարդուց: Այժմ ծիծաղում էր իր նախկին ընկերուհիների վրա, որ այնպես փախչում էին Դանելից: Օ՜օ, նա բոլորովին գիժ չէ, բարի է, խաղաղ, անվնաս: Բայց ինչո՞ւ համար է այնքան ցավակցում Սոնային: Այս հարցը երբեմն Սոնային ձգում էր մտատանջության մեջ: Առհասարակ նա հետզհետե դառնում էր մտախոհ, մելամաղձոտ: Թվում էր, որ նրա փոքրիկ գլուխը անգործ չէ, և շատ մտքեր են նրան զբաղեցնում: Ամենից պարզ զգում էր մի բան, այն՝ թե կա մի ցավ, որ թունավորում է իր մոր կյանքը: Ի՞նչ է այդ ցավը: Հոր արբեցությո՞ւնը, կոպիտ վարմո՞ւնքը: Եթե այդ է, ինչո՞ւ առաջ նրա մայրը այնպես տխուր չէր, ինչպես այժմ: Նա չէր զգում միայն իր սեփական ցավը, չգիտեր, որ ինքն է մոր թշվառության առաջին պատճառը: Այդ նրան ոչ ոք չէր ասում: Մի անգամ, անգութ հարվածից հետո ուշքի գալով, տեսավ իր մորը հեկեկալիս ու հարցրեց,

— Մա՛յրիկ ես հիվա՞նդ եմ:

— ՉԷ՛, որդի…

— Գլուխս էլի ցավում է. քնա՞ծ էի:

— Հա՛, որդի...

— Բաս ինչո՞ւ ես լաց լինում:

Հացթուխի լեզուն պապանձվեց, չկարողացավ պատասխանել: Նա միայն գրկեց Սոնայի գլուխը և համբուրեց նրա շքեղ մազերը, սպիտակ ճակատը, գունատ այտերը: Ժամանակը թշվառ մորը հաշտեցնում էր իր վշտի հետ: Նա տանջվում էր, բայց ոչ առաջվա չափ: Նա բողոքում էր իր ճակատագրի դեմ, բայց և՛ օրհնում էր նախախնամության կամքը:

«Ասում են, երբ աստված մեկին շատ է սիրում, նրան շատ է տանջում,– մխիթարում էր ինքն իրան հուսահատ րոպեներին,— ո՛վ գիտի, կարելի է աստված ինձ շատ է սիրում»:

Նա ձգտում էր իր թշվառության համար արդարացուցիչ պատճառներ գտնել: Շատ խիստ էր ճակատագրի վճիռը, և չէր ուզում հաշտվել այն մտքի հետ, թե այդ վճիռը կայացնողը կարող է, առանց մի մեծ պատճառի, լինել այդքան անիրավ, այդքան անողոք: «Աստված արդար է և ողորմած», հնչում էին նրա ականջին այս խոսքերը, որ ամեն օր լսում էր եկեղեցում: Մի՞թե քահանան կարող է սուտ ասել, մի՞թե թե եկեղեցին կարող է խաբել:

— Մեղա քեզ, մեղա քեզ, — կրկնում էր հացթուխը ամեն անգամ, երբ սրտում զգում էր կասկածի նշույլ, և այդ նշույլը նույն վայրկյանին անհետանում էր, տեղի տալով խորին հավատի զգացման:

III

Ամեն օր հացթուխ Շուշանը, աշխատանքի գնալիս տեսնում էր խումբ-խումբ տղաներ և աղջիկներ, որոնք գրքերը կռնատակերին, աշխույժ-աշխույժ խոսակցելով, ուսումնարան էին գնում: Աղջիկների ուսումնարանը նոր էր բացվել: Հացթուխը լսել էր, որ այնտեղ բացի գրել-կարդալուց, սովորեցնում են սիրուն շալեր ու սփռոցներ հյուսել: Ախ, ի՜նչ լավ կլինի, որ Սոնան էլ այդ ուսումնարանը գնա: Թող նա էլ ուրիշների շարքն ընկնի, թող ոչ ոքից ետ չմնա, իր ծնողների մի հատիկ զավակն է:

«Ի՞նչ անենք, որ հայրը հարբեցող է, ես հացթուխ: Չեմ ուտիլ, չեմ խմիլ, բերանիցս կկտրեմ, երեխայիս համար գիրք կառնեմ, հագուստ կառնեմ»:

Այսպես էր մտածում Շուշանը, երբ Սոնայի հիվանդությունը դեռ չէր հայտնվել: Այժմ երևակայել անգամ չէր ուզում այդ երջանկության մասին: Ի՞նչ, որ ամբողջ ուսումնարանը իմանա՞ Սոնայի ընկնավոր լինելը: Չէ, ավելի լավ է նա ետ մնա իր ընկերուհիներից, քան թե նրանց ծաղրի առարկան դառնա: Թող բախտավոր մայրերի բախտավոր զավակները գրել-կարդալ սովորեն:

«Ինձ նման մի անբախտի աղջկան այնքանն էլ հերիք է, ինչքան մայրը գիտի...»

Եվ հացթուխը սկսեց Սոնային սովորեցնել այն, ինչ որ ինքը գիտեր. հոր հագուստը կարկատել, գուլպաներ հյուսել, սենյակի պատերը և հատակը շաբաթը մի անգամ շիրայել, այսինքն ներկել տեղական կապտագույն թրջած կավով: Նա սովորեցնում էր Սոնային և՛ աղոթել: Ամեն առավոտ և ամեն երեկո արտասանել էր տալիս. «աստված, դու ինձ փորձանքից ազատես...»:

Շատ անգամ երեկոները Սոնան, ճրագի առջև նստած, գուլպա էր հյուսում մինչև ուշ գիշեր: Մայրը թախանձում էր նրան չհոգնեցնել իր աչքերը: Իսկ հայրը պատվիրում էր հյուսել ու հյուսել, որ շուտով զույգը վերջանա: Եվ այս դեպքում աղջիկը հոր պատվերն էր կատարում: Վաղն ուրախ — ուրախ կհանձնի նրան մի զույգ նոր գուլպա, որ տանի շուկայում ծախի: Ի՜նչ անենք, որ գուլպաների գինը սովորաբար օղեվաճառին էր տրվում: Այդ Սոնայի գործը չէր:

Եվ այսպես, արբշիռ պայտագործը հարստահարում էր հիվանդոտ աղջկա աշխատանքը դեռ այն ժամանակ, երբ նրա մատները հազիվ հազ սովորել էին կտրել ու հյուսել: Քանի՜-քանի՜ անգամ այս պատճառով ընդհարումներ էին ունեցել մարդ ու կին:

— Չէ, դու խղճմտանք չունիս: Երեխաս մի շալ չունի ուսերին գցելու, ցրտից սրսռում է, դու ամեն օր խմում ես նրա աշխատած փողով...

— Քո բանը չի, Սոնան իմս է, — պատասխանում էր պայտագործը: — Այնպես չէ՞, Սոնա, դու հորդ սիրում ես, չես թողնիլ, որ մի բանի կարոտություն քաշի:

Մանկահասակ աղջիկը, հավասար սիրով և գգվանքով համբուրելով թե՛ մեկին և թե՛ մյուսին, վերջ էր տալիս իր ծնողների վեճին: Այնինչ այն օրից, երբ պայտագործի համար բացվեց եկամտի մի նոր աղբյուր — իր աղջկա ձեռքի վաստակը — նա ավելի ու ավելի ծուլանում էր: Միևնույն ժամանակ, ավելի ու ավելի պահանջող, քմահաճ և կոպիտ էի դառնում: Շատ անգամ տուն էր վերադառնում դատարկ ձեռներով և հրամայում իսկույն ուտելիք պատրաստել: Կինը երբեմն պատասխանում էր, թե տանը ոչինչ չկա, թե ինքն այսօր ոչինչ չի վաստակել:

— Պատճա՞ռը, — գոռում էր պայտագործը:

— Այսօր ինձ ոչ ոք հաց թխելու չի կանչել:

— Հոգիդ դուրս գա, գնա՛, ողորմություն հավաքիր, խոմ քաղցած ապրել չի կարելի: Հը՛մ, դու ասա, Սոնա ջան, մարդ քաղցած փորով կարո՞ղ է ապրել: Տեսնում ես, մայրդ ինչ աներես ու քարասիրտ է: Համ ասում է տանն ուտելու բան չկա, համ էլ ինձ չի թողնում գերեզմանատուն գնամ մեռելահաց ուտելու...

— Օրիցս դեն ուր ուզում ես — գնա՛, կե՛ր, խմի՛ր, քո բանը պրծած է:

— Որ մեռել չկա, ո՞ւր գնամ:

Այս խոսքերը պայտագործը արտասանում էր այնպիսի եղանակով, որ կարծես, մարդիկ չէին մեռնում հենց նրան քաղցած թողնելու համար:

Մի անձրևային օր նա ճաշի միջոցին ներս մտավ աչքունքը կիտած: Երեք օր էր չէր խմել, ուստի սաստիկ վատ տրամադրության մեջ էր: Իսկ քրիստոնյաները երդվել էին չմեռնել, և Ոսկանը անիծում էր բոլոր կենդանի հարուստներին:

Սոնան խրճիթի առջև ծալապատիկ նստած, կարկատում էր հոր հնամաշ արխալուղը: Ուրախացավ հորն արթուն տեսնելով:

— Մայրդ տա՞նը չի:

— Չէ՛:

— Վե՛ր կաց տեսնեմ, ի՞նչ ես տալիս ուտելու:

Սոնան մտավ խրճիթ և այնտեղից բերեց, հաց, պանիր և մի քիչ կարագ:

— Դա ի՛նչ է, — ասաց պայտագործը, ծուռ-ծուռ նայելով Սոնայի բռնած սկուտեղին, — շատ հարկավորս է քո կարագը: Փա՛հ, երեք օր է չեմ խմել, սիրտս էլ չոր-չոր բան է ուզում, մի կտոր ձուկ կամ միս, իսկ դա ինձ կարագ է տալիս, այն էլ ծտի աչքի չափ: Դե՛նը տար...

Սոնան վշտացավ: Կարագը իր բաժինն էր, պահել էր հատկապես հոր համար: Սկուտեղը ձեռին՝ նայում էր պայտագործին այնպիսի դեմքով, որ, կարծես, ոտից գլուխ մեղավոր էր նրա առջև:

— Դու ինձ ա՛յն ասա, Սոնա ջան, մայրդ փող ունի:

Հարցը Սոնային նեղը գցեց: Գիտեր, որ մայրը պատի մեծ խորշի մեջ թաքցրած ունի մի քանի արծաթի ու պղնձի դրամներ: Դա հացթուխի սեփական վաստակն էր: Կոպեկ-կոպեկ հավաքել էր, և Սոնան չգիտեր ինչու համար:

— Հը՛մ, ինչո՞ւ չես պատասխանում, ասա՛, մայրդ փողից-բանից ունի՞...

— Չեմ իմանում:

— Դրուստն ասա:

— Չեմ իմանում, — կրկնեց Սոնան, աչքերը անգիտակցաբար դարձնելով դեպի այն խորշը, ուր թաքնված էին մոր կոպեկները:

— Ի՞նչ ես դես ու դեն մտիկ անում, դրուստն ասա, սուտ ասելը մեղք է:

Այո՛, տասներկու տարեկան աղջիկը շատ անգամ էր մորից լսել, թե սուտ ասելը մեղք է, թե սուտ ասողին աստված պատժում է: Եվ նա երբեք սուտ չէր ասել: Բայց գիտեր և այն, որ գողությունն էլ մեղք է և ավելի մեծ մեղք:

— Չեմ իմանում, կա թե չկա, չեմ իմանում, — կրկնեց նա:

Ձայնը և դեմքի այլափոխվելը մատնեցին նրան:

— Սոնա, — գոռաց պայտագործը, — դու հորդ խաբում ես, այս տանից փողի հոտ է գալիս, ես քաղցած ու ծարավ եմ:

Սոնան տատանվեց: Նրա սիրտը տանջվում էր խղճի խայթից: Նա ինքն իր հետ կռվում էր. մի կողմից ստախոսություն, մյուս կողմից գողություն: Մի կողմից հոր աղաչանքը, մյուս կողմից մոր դառն աշխատանքը, որի գնով ձեռք էին բերված այնտեղ թաքնված կոպեկները:

— Որ՞ը ընտրել:

— Ինչպես տեսնում եմ, մորդ հետ խոսք ես կապել ինձ քաղցած ու ծարավ թողնել: Դուք ինձ խաբում եք, տանջում եք: Որ այդպես է, Է՛լ իմ երեսը չեք տեսնիլ: Գնա՛, Սոնա ջան, գնա՛ քեզ համար ինձանից լավ հայր ճարիր:

Նա քայլերը բարկացած ուղղեց դեպի դուռը: Դա մի խորամանկություն էր, որ իսկույն ունեցավ ցանկալի հետևանք: Ո՛չ. Սոնան ուրիշ հայր չի ուզում: Աշխարհի երեսին պայտագործից ավելի լավ հայր չկա: Նա մոտեցավ Ոսկանին, իր փոքրիկ ձեռներով բռնեց նրա կոշտ, սևացած ձեռը, համբուրեց և արտասվեց: Հետո մոտեցավ պատի խորշին, կանգնեց մի քանի վայրկյան անշարժ և նայեց հորը: Ա՜խ, վատ բան էր ուզում անել, այդ ինքն էլ գիտեր և երկյուղից դողում էր: Բայց այնտեղ, սենյակի մեջտեղում, կանգնած էր հայրը, աչքերը ագահաբար հառած նրա երեսին: Եվ ի՜նչպես փայլում էին այդ աչքերը: Երևի պայտագործը արդեն զգում էր օղիի սքանչելի հոտը և վաղորոք ճաշակում քաղցրություն:

— Մի՛ վախենար, Սոնա ջան, մի՛ վախենար, ես մտիկ եմ տալիս, հենց որ եկավ — կասեմ:

Սոնան սկսեց խորշի մեջ որոնել այն ցնցոտին, որ մայրը խնամքով թաքցրել էր անկողինների տակ:

— Ի՜նքդ վերցրու, — ասաց դողդոջուն ձայնով և գունատվեց, — ես վախենում եմ: Ա՛յ, այն կապույտ կապոցի մեջ է:

Պայտագործը շտապեց վերցնել կապոցը, ծանր ու թեթև արեց ձեռի ափի մեջ և դրեց արխալուղի գրպանը:

— Քեզ համար ծամոն կբերեմ, — ասաց համբուրելով աղջկան, և շտապեց դուրս:

Երբ նա անհետացավ, Սոնան վազեց սենյակի անկյունը, ընկավ երեսի վրա և սկսեց հեկեկալ: Նրա գեղեցիկ թիկունքները չթյա արխալուղի տակ ուժգին բարձրանում էին և ցած իջնում ալիքների պես: Նրա սպիտակ պարանոցը ուռել ու դողդողում էր: Նա կողոպտեց իր սիրելի և խեղճ մորը, որ օրը մինչև երեկո արյուն-քրտինք է թափում մի քանի հատ հաց կամ մի քանի պղնձի դրամներ վաստակելու: Նա գողություն արեց, ինչո՞ւ, ո՞ւմ համար: Ա՜խ, մի՞թե բոլոր աղջիկների հայրերն այդպես են…

Արտասուքը սպառվեց, բայց վիշտն ավելի համակեց Սոնայի սիրտը: Նա խորհում էր իր անելիքի մասին:

Գիշերը ցերեկ կանի, չի ուտիլ, չի քնիլ, գուլպա կիյուսի, հորը կտա ծախելու, փողերը կդնի այնտեղ: Չէ՛, չէ՛, մայրիկին չի ասիլ, նա լաց կլինի. Սոնան թակվելուց չի վախենում, մայրը լաց կլինի: Ի՜նչ վատ բան է, տեր աստված, ի՜նչ վատ բան է գողությունը...

— Այս դռներն ո՞վ բաց արավ, — լսեց Սոնան իր մոր ձայնը և սոսկալով ոտքի թռավ:

Հացթուխը կռնատակին դրած էր սովորական երկու թաժա հացերը և ափի մեջ ամուր սեղմած մի քանի պղնձի դրամներ: Նա ներս մտավ թե չէ՝ պառկեց հատակի վրա, ծանր հառաչելով և արտասանելով.

— Փառք քեզ, աստված, որ ինձ նման խեղճերն էլ կարող են պառկել. հոգիս դուրս եկավ...

Ահա՛ նա, այդ խեղճ կինը, ի՞նչպես երեսն ու ձեռները այրվել են թոնրի կրակից. ահա՛, ում կողոպտեց Սոնան:

— Ինչո՞ւ ես տխուր նստել, մո՛տ եկ, Սոնա, ե՛կ մի քիչ ուսերս տրորիր...

Սոնան լուռ մոտեցավ մորը:

— Հայրդ եկե՞լ էր, էլի գնա՞ց, բան կերա՞վ:

Սոնան հառաչեց:

— Ինչո՞ւ ես հառաչում: Երևի, հորդ քեֆը լավ էր:

— Չէ, խմած չէր, քաղցած էր...

— Բաս ո՞րտեղ գնաց քաղցած փորով:

— Չեմ իմանում:

— Աղջի, դու լա՞ց ես եղել:

— Չէ, չէ, — կրկնեց Սոնան շտապով, երեսը մի կողմ դարձնելով:

Մայրը զգաց, որ անշուշտ մի բան է պատահել, և, իհարկե, կասկածեց, թե ինչ կարող է պատահած լինել: Բայց նա մի խորը հայացք ձգեց Սոնայի աչքերի մեջ և այնտեղ չնկատեց այն տարօրինակ բթությունը, որ երևում էր ամեն անգամ «հարվածը» ստանալուց հետո:

— Սոնա, հայրդ քեզ վրա գոռացե՞լ է, թթու խո՞սք է ասել, ով գիտե, ծեծել է...

Այլևս Սոնան չկարողացավ իրան զսպել: Գլուխը թաքցնելով մոր գրկում, երկրորդ անգամ հեկեկաց, և այս անգամ ավելի ուժգին: Քանի մի րոպե անցած, նա անկեղծորեն խոստովանեց իր հանցանքը: Մի վայրկյան հացթուխը մոռացավ հարազատ զավակի թշվառությունը, հրեց նրան ուժով, կատաղեց և գոռաց: Նա մինչև անգամ ձեռը բարձրացրեց Սոնային խփելու: Բայց իսկույն ուշքի եկավ և, երկու ձեռները ծնկներին զարկելով, գոչեց.

— Քանդվի հորդ տունը:

Նա հայտնեց գողացված փողերի գաղտնիքը: Նա մտադիր էր զատկին մի գառ գնել, եկեղեցու դռների առջև մորթել և աղքատներին բաժանել Սոնայի համար: Ուրեմն Սոնան իր «մատաղի» փողե՞րը գողացավ: Այս միտքը մասամբ թեթևացրեց աղջկա վիշտը:

— Ես մատաղ չեմ ուզում, — ասաց նա, կարծելով, թե դրանով կարող էր հանգստացնել մորը:

— Բաս որ գողություն ես արել, գո՛ղ ես, — գոչեց հացթուխը, մի քանի անգամ կրկնելով «գող» բառը:

Ավելի մեծ պատիժ չէր կարող լինել Սոնայի համար, քան այս հանդիմանությունը: Նրա մանկական անմեղ աչքերի մեջ փայլեց ահ ու սարսափ: Ինչպես երկչոտ նապաստակ թփի տակ, սեղմվեց սենյակի անկյունում, աջ ու ձախ նայելով: Կարծես, սպասում էր իր հանցանքի արժանի պատժին: Մայրը մոտեցավ, ձեռից բռնեց, չոքեցրեց երեսը դեպի արևելք և ասաց.

— Խաչակնքի՛ր երեսդ, ասա «մեղա աստծու», երեք անգամ. հա, այդպես, ասա. «աստված, այս անգամ բաշխիր, էլ չեմ անիր»: Դե լավ, վե՛ր կաց, էլ չանես:

— Չեմ անիլ, — կրկնեց Սոնան, փաթաթվելով մոր պարանոցին:

Իրիկնադեմին պայտագործը տուն վերադարձավ ոտից մինչև գլուխ ցեխոտված: Ներս մտավ թե չէ, թավալվեց հատակի վրա: Հացթուխն այդ օրն առաջին անգամ հայհոյեց նրան լսելի ձայնով: Պայտագործը աշխատեց տեղից վերկենալ, նորից ընկավ. կրկին հենվեց ձեռների վրա, ոտքի կանգնեց և, բռունցքը բարձրացնելով, մոտեցավ հացթուխին: Կինը խույս տվեց, և մարդը իր հարվածի ուժգնությունից նորից ընկավ հատակի վրա:

Այս այլանդակ տեսարանի միակ վկան, սենյակի մի անկյունում կուչ եկած, լուռ դիտում էր: Հանկարծ մի սուր ձայն արձակեց: Այդ վայրկյանին մատաղահաս աղջկա աչքին հարազատ հայրը թվաց իսկական գազան: Եվ ի՜նչ տարօրինակ գազան, ահագին, երկար ժանիքներով, ահռելի բերանով և սարսափելի աչքերով: Կարծես, այդ բերանը ահա՛ ահա՛ պետք է բացվեր և կլաներ թե՛ Սոնային և թե՛ նրա մորը:

— Վախենում եմ, վախենում եմ, — արտասանեց Սոնան, հեռու ու հեռու խույս տալով իր հորից:

Նա վազեց, մտավ պատի մեծ խորշը և գլուխը թաքցրեց անկողինների մեջ: Հացթուխը շվարել էր: Մոտեցավ աղջկան, բռնեց նրա գլուխը, նայեց երեսին: Հետո վազեց դուրս, սառը ջուր բերեց, սրսկեց երեսին:

Սոնան մի փոքր սթափվեց: Բայց ի՜նչպես գունատ էր, և ի՜նչպես դողում էր: Նա ընկավ մոր գիրկը, երկու ձեռներով ամուր սեղմեց նրա պարանոցը, կրկնելով.

— Մի՛ հեռանար, մի՛ հեռանար ինձանից...

— Անե՛ծք քեզ, չար սատանա, անե՛ծք քեզ, չար սատանա, — կրկնում էր հացթուխը, խաչակնքելով մերթ իր, մերթ աղջկա երեսը:— Կորի՛ր, — դարձավ ամուսնուն — կորի՛ր այս տնից, անաստված, անսիրտ, անհոգի, դու սպանեցիր երեխայիս...

«Ոտաբոբիկ թափառում եմ սար ու ձոր,

«Ես Քյարամն եմ, ինձ ղրկեցին Ասլիից:

«Խաբար տարեք խեղճ աշուղիս հոր ու մոր,

«Սազս ղըրկեն, ես վլախչում եմ դունյայից...»

Այս ձայնը սթափեցրեց Սոնային: Նա մի վայրկյան գլուխը բարձրացրեց մոր կրծքից, ականջ դրեց ինչպես մի սոխակ, երբ քաղցր սուլոցի ձայն է լսում, հետո վազեց դուրս: Կարծես այնտեղից գալիս էր նրա համար մի երկնային օգնություն:

— Սոնա խաթուն, ե՛կ, ե՛կ, քեզ համար նշխարք եմ բերել:

Գիժ-Դանելը մի կտոր թղթի միջից հանեց նշխարքի մի փշրանք, դրեց իր շրթունքներին, հետո ճակատին և ապա տվեց Սոնային, ասելով.

— Հիսուս Քրիստոսի զորությունը քեզ պահի, պահպանի... Բա՛հ, աղջի, ինչո՞ւ ես դողում, սպրդնել ես… Շուշան բաջի, Սոնա բալիս ի՞նչ է պատահել:

Հացթուխը, արտասուքը աչքերին, կանգնած էր խրճիթի շեմքի վրա և նայում էր Սոնային ու խենթին:

— Գնա՛նք ներս, — ասաց խենթը, բռնելով Սոնայի ձեռից:

Աղջիկը խլեց նրանից իր ձեռը և հեռացավ խրճիթից:

— Բա՛հ, ումի՞ց ես վախենում, ասա, ես ցույց կտամ քեզ վախեցնողին, պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ:

Հացթուխը բռնեց խենթի թևից և ներս տանելով ասաց.

— Նրանից է վախենում:

Սենյակի իրիկնային կիսախավարի մեջ գիժ-Դանելը ճանաչեց իր քելեխասեր բարեկամին:

— Կոնծել է ու ընկել. էհե՛. համը տանում է, էլ ես նրան քելեխի չեմ տանիլ: Շուշան բաջի, երազ եմ տեսել: Տասնութ աժդահա դուրս եկան առաջս: Քյոռօղլին կանգնեց բուրջի գլխին: Ղռաթի բերանից կրակ էր դուրս գալիս: Ա՛յ այսպիսի մազեր ուներ, անունը Սոնա չէր, Մանիշակ... մեծ-մեծ քարեր էին ընկել, մեկը ճակատին, մյուսը — կրծքին: Մայրը հորումն էր: Գլխից արյուն էր գալիս: Ասլան Դանելը խեղճ մարդ էր, գլուխը քաշ դարզություն էր անում: Ասեղս առան, աչքս կոխեցին. մկրատս վերցրին, սիրտս կտոր-կտոր արին մահուդի պես: Սոնա խաթուն, Մանիշակ ջան, ինչո՞ւ փախար ձեռքիցս... Էգուց կգնամ գերեզմանը տեսնելու, սիրտ չունիմ, սիրտս մեռավ.... Շուշան բաջի, Սոնան լավ աղջիկ է, յա ալլա՛հ գալիս եմ... Ֆարհա՛դ, Ֆարհա՛դ, տունդ տակնուվրա լինի...

Արտասանելով այս անկապ և օտարոտի խոսքերը. խենթը գավազանը օդի մեջ շարժեց և ոստոստալով դուրս վազեց:

Այդ գիշեր Սոնան զառանցում էր, ստեպ-ստեպ քնից զարթնելով: Մայրը «աղոթում էր» նրա վրա, սեղմելով նրա ուսերին և գլխին իր աջ բռունցքը, որի մեջ սեղմված էր մի բուռն աղ:

Արեգակը նոր նոր բարձրանում էր քաղաքի շրջակա լեռան հետևից, երբ Սոնան աչքերը բաց արավ: Որքան նման էր նրա դեմքի գույնը այն վաղ-առավոտյան թույլ– դեղնագույն ճառագայթին, որ խրճիթի դռներով ընկավ հատակի վրա: Նրա մռայլ և անշարժ աչքերը նայում էին դեպի մի անորոշ տարածություն: Կարծես, մտքերը սավառնում էին հեռու: Նրա գլխի կողմը նստած էր մայրը և թախծալի հայացքով նայում էր նրա շրթունքներին, որ տակավին սեղմված էին:

— Քեզ համար թուզ եմ գնել, — ասաց հացթուխը, կամենալով խոսեցնել աղջկան:

Սոնան մռայլ աչքերը դարձրեց դեպի մայրը: Մտաբերում էր երեկվա տեսարանը, հիշում էր իր սարսափելը հոր կերպարանքից: Սա ակամա նայեց հոր կողմը: Պայտագործը դեռ քնած էր ծանր և անհանգիստ քնով: Սոնան հագնվեց, մոտեցավ հորը, նայեց նրա երեսին: Այժմ գազանային ոչինչ չկար այդ դեմքի վրա: Ինչ վախկոտ աղջիկ է Սոնան, ինչո՞ւ այնպես գոռաց: Ահա՛ շուտով կզարթնի պայտագործը: Սոնան նրա ձեռներին ջուր կածի, որ երեսը լվանա, կխոսի հետը:

Եթե չբարկանա, կաղաչի, կպաղատի, որ էլ մորը չծեծի, չկռվի նրա հետ: Կասի. «Քեզ համար երկու օրը մի գուլպա կգործեմ, մի՛ ծեծիր, մի՛ գոռար, մի՛ կռվիր...»

Պայտագործը զարթնեց սաստիկ գլխացավով:

Նախընթաց օրվա քեֆից հետո զգում էր անտանելի տխրություն: Մտաբերեց երեկվա իր վարմունքը և զգաց խղճի մի թեթև խայթոց: Կամեցավ Սոնային մի քիչ փաղաքշել և սրա համար դիմեց մի տարօրինակ կատակի: Ոլորեց իր միրուքը խողովակի ձևով, թելով կապեց, ծայրից քաշ արավ մի մեծ ավել, ուսերին տակնուվեր ձգեց ձմեռային մուշտակը, դուրս եկավ և կանգնեց խրճիթի դռների առջև:

Այդ միջոցին Սոնան, մեջքից թեքված, ավելում էր բակը: Դեռ նրա աչքի առջև էր երեկվա տեսարանը: Նա գլուխը բարձրացրեց երեսին սփռված մազերն ուղղելու, տեսավ հորը և սարսափեց: Ավելն ընկավ նրա ձեռքից, դարձյալ լսվեց մի սուր ձայն: Սոնան ցնցվեց և կողքի վրա տարածվեց գետնին:

Հոր կոպիտ կատակի հետևանքն եղավ աղջկա մարմնի փետանալը, ապա կծկվելը, ցնցվելը և անզոր կերպով թավալվելը:

Արևն իր շողը ձգեց ընկնավոր աղջկա գունատ ճակատի վրա, որի շուրջը մազերը դարձյալ մի գեղեցիկ պսակ էին կազմել: Սոնան ընկած էր երեսն արևելք, դեպի ուր աղոթում էր նրա մայրը...

IV

Տասնուվեց տարեկան հասակում Սոնան արդեն զգում էր բնական ցավի բոլոր ծանրությունը: Եվ այն միտքը, թե թշվառ է, նրա մատաղ հոգու վրա գործում էր ճնշող տպավորություն: Ժամերով առանձնացած, անձնատուր էր լինում իր մելամաղձիկ մտածումներին:

Նրա նորահաս խելքը ձգտում էր գտնել թշվառության հիմնական պատճառը և ոչինչ չէր կարողանում որոշել կյանքի մթության մեջ: Լալիս էր, լալիս, և միայն արցունքներն էին որպեսզի թեթևացնում նրա սիրտը:

Նա անում էր այն բոլորը, ինչ որ հարկավոր էր աստծու գութը շարժելու համար և ինչ որ սովորել էր իր մորից: Պահում էր տարվա բոլոր պասերը, իսկ մեծ պասը — կրկնակի: Տարեկը մի անգամ ամբողջ յոթնյակ ծոմ էր պահում: Իր մոր հետ այցելում էր քաղաքի շրջակայքում գտնվող սրբավայրերը: Բայց բոլորը զուր:

— Ինչո՞ւ, — ահա հարց, որ զբաղեցնում էր Սոնայի միտքը: Ինչո՞ւ աստված չի լսում նրա ձայնը, չի խղճում. ո՞ր մեղքերի համար: Կյանքում մի անգամ մի հանցանք գործեց — ցույց տալով հորն իր մոր խնայած կոպեկների տեղը: Հայրը գողացավ և վատնեց այդ ողորմելի կոպեկները: Բայց ո՛րքան զղջաց, ո՛րքան աղոթեց և ո՛րքան արտասվեց այդ հանցանքի համար: Ո՛չ, այդ չէ պատճառը:

«Մայրս ասում է, որ վեց տարեկան էի, երբ առաջին անգամ ուշաթափվեցի...»

Ուրեմն, ինչո՞ւ, ինչո՞ւ: Եվ որքան հասարակ հարցը գրգռում էր Սոնային, այնքան նրա մտքերը շփոթվում էին: Նույն հարցը նա տալիս էր մորը, և միշտ ստանում միևնույն պատասխանը.

— Դա աստծու կամքն է:

— Այո՛, դա աստծու կամքն է: Բայց մի՞թե աստված առանց պատճառի մի բան կատարում է:

— Մայրիկ, ինչո՞ւ մեկը ստեղծվում է առողջ և բախտավոր, մյուսը — հիվանդ և թշվառ:

Երկյուղած և աստվածապաշտ հացթուխը սարսափում էր աղջկա հոգու մեջ ծագող կասկածներից: Կար ժամանակ, որ նրա մեջ էլ ծագում էին այդպիսի կասկածներ: Բայց շուտով խեղդեց նրանց իր սրտում և դարձյալ հաշտվեց այն մտքի հետ, թե աստված արդարամիտ է,անաչառ և գթառատ:

— Մի՛ ասա, որդի, մի՛ ասա. աստծու դեմ տրտնջողի գլխին երկնքից կրակ կթափվի:

Սոնան զսպում էր իր լեզուն: Սակայն անխուսափելի հարցը հետևում էր նրան ստվերի պես: Ի՞նչ անի, ի՞նչպես չբողոքի: Ինը տարի է փակված է իր հայրական խրճիթի չորս պատի մեջ, և մի՞թե պետք է հավիտյան անջատված մնա աշխարհից: Մի՞թե գոնե իր ընկերուհիներին այլևս չպիտի տեսնի մի հարսանիքում, մի մեռելատնում, կամ եկեղեցում զատկի և ջրօրհնեքի երեկո:

Նրա ընկերուհիներից մի քանիսն ամուսնացել էին, ոմանք մայրեր էին արդեն: Նա հեռվից լսում էր յուրաքանչյուր պսակվողի հարսանիքին ածվող զուռնայի ձայնը: Այսօր այն սևիկ և ծիծաղկոտ Մարգարիտն է պսակվում: Երանի թույլ տային Սոնային մի անգամ տեսնել նրան: Արդյոք, ի՞նչքան է մեծացել նա, ի՞նչպես է հասակը, գեղեցկացե՞լ է, թե էլի նիհար է ու չոր շագանակի կեղևի պես:

Սոնան հիշում էր, որ իր ընկերուհիներն իրան կոչում էին «Սիրուն Սոնա»: Առաջ նրա համար դա ոչինչ նշանակություն չուներ, այժմ էր հետաքրքրում նրան: Ճշմարի՞տ է, որ ինքը սիրուն է, թե՞ ընկերուհիները ծաղրում էին: Նա կանգնում էր

ամեն օր պատից քաշ արած այն հասարակ հայելիի առջև, որ մայրը, իբրև օժիտ, ստացել էր մի ազգականից իր հարսանիքի օրը:

Նրա խիտ և գանգուր մազերը շքեղ հյուսվածներով սփռված էին մեջքին: Տնային ծանր աշխատանքը, կարծես, մազու չափ չէր ազդել նրա կազմվածքի վրա: Նա միջին հասակից քիչ բարձր էր, կանոնավոր իրանով: Այո, այժմ ավելի էր սիրուն, քան մանուկ հասակում: Միայն նրա երեսը չուներ իր տարիքին հատուկ կայտառությունը: Նրա գույնը նվազ էր, հիվանդոտ. մի նուրբ դեղնություն պատել էր ամբողջ դեմքը, նույնիսկ ականջները: Սևորակ և խոշոր աչքերի բիբերն ավելի խոշորացել էին: Այնտեղ երևում էր հոգու ծանր թախիծը: Որպե առ որպե, երբ բարձրանում էին համրաշարժ կոպերը, այդ աչքերի մեջ նշմարվում էր մի տեսակ ապշություն:

Նա նայում էր հայելուն, բայց չգիտեր սիրո՞ւն է ինքը, թե՞ տգեղ: Չկար մեկը, որի հետ համեմատեր իրան կամ նրա կարծիքը հարցներ: Մայրը ասում էր, թե Սոնան իրան է նմանվում: Արդարև, կար նմանություն մոր և աղջկա մեջ, թեև տարիքը և ծանր ու տաժանակիր աշխատությունը վաղուց հացթուխի դեմքից ջնջել էին բնական գեղեցկությունը:

— Մայրի՛կ, երևի դու շատ սիրուն ես եղել...

Դա մի անմեղ խորամանկություն էր, որի միջոցով Սոնան ուզում էր խոսք քաշել իր մորից: Մայրը այդ չհասկացավ և պատասխանեց.

— Մարդ պետք է բախտ ունենա, գեղեցկությունն ինչի՞ն է պետք:

Մի օր հացթուխը ասաց Սոնային, որ այդ երեկո վաղ պառկի քնելու:

— Ինչո՞ւ:

— Էգուց պետք է շուտ զարթնես, ոտով գնալու ենք սուրբ Կարապետի մասունքը համբուրելու:

— Էգո՞ւց է ուխտի օրը...

— Մյուս օրն է: Մենք էգուց կգնանք, գիշերը սրբի ոտքին կմնանք, մյուս օրն ուխտներս կկատարենք, հետ կգանք:

Վերջապես, դարձյալ մի երջանիկ օր, երբ Սոնան կարող է մարդու երես տեսնել: Երկար ժամանակ այդ գիշերը չէր կարողանում քնել: Իսկ երբ նիրհեց, երազները պաշարեցին նրան: Նա շտապում էր դեպի սրբավայրը, բայց գնում էր, գնում, չէր հասնում: Ամեն քայլափոխում արգելքների էր հանդիպում: Մի տեղ նրա առջև բարձրանում էր մի պատ և կտրում ճանապարհը, մյուս տեղ բացվում էր ճահիճ, որի միջով պիտի անցներ: Այստեղ կորցնում էր գլխի շալը, այնտեղ կոշիկները և այլն, և այլն…

— Վե՜ր կաց, օրը լուսացել է, — լսեց նա մոր ձայնը և աչքերը բաց արեց:

Հացթուխն արդեն վաղուց պատրաստվել էր ճանապարհ ընկնելու: Սոնան շտապով ոտքի թռավ և հագնվեց: Մայրը տվեց նրան մի թեթև կապոց, որ պարունակում էր երկու օրվա ուտելիք, իսկ ինքը բռնեց գավթում թռչկոտող մեծ աքաղաղին, ոտները կապեց, դրեց կռնատակին: Նրանք ճանապարհ ընկան:

Արևն արդեն բավական բարձրացել էր, երբ քաղաքից դուրս եկան: Հացթուխը հրամայեց Սոնային կոշիկները հանել և ոտաբաց քայլել: Նույնն արեց և ինքը: Նախընթաց օրը իմացել էր, որ քաղաքից մի քանի ընտանիքներ էլ պիտի գնան ուխտ: Ահա ինչու կանուխ ճանապարհ ընկավ, որպեսզի աղջկա հետ մենակ չգնա ամբողջ յոթ վերստ ճանապարհը: Հարյուր տեսակի մարդիկ են անցնում, ո՛վ գիտե, ի՛նչ կարող է պատահել:

Հեռվում երևացին մի քանի սայլեր: Հացթուխը ասաց Սոնային, որ քայլերը արագացնի: Նրանք շուտով հասան սայլերին: Ջահիլ աղջիկների մի խումբ գնում էր ոտով, իսկ պառավ և հասակավոր կանայք նստած էին սայլերի վրա: Ջահիլները դհոլ էին զարկում, հարմոնիա էին ածում. երգում էին, ծիծաղում, հռհռում, թռչկոտում, ազատ, համարձակ, երեսները բաց:

Սոնան իր մոր հետ և նրա ցանկությամբ գնում էր սայլերից հեռու, ճանապարհից դուրս, կանաչ խոտի միջով: Ուղին հարթ չէր: Երեք օր առաջ անձրև էր եկել, և անցուդարձ անող սայլերի անիվները թանձր ցեխի մեջ խոր ակոսներ էին գոյացրել: Ցեխը չորացել էր և ճանապարհը ծածկել դերբուկներով: Անկարելի էր այնտեղ ոտաբոբիկ քայլել: Բացի դրանից, հացթուխը խույս էր տալիս ոտով գնացող աղջիկների խմբից: Ո՛վ գիտե, մի գուցե հանկարծ Սոնան ուշաթափվի, ինչո՛ւ ուրիշները տեսնեն: Այնինչ, Սոնայի սիրտը մղվում էր դեպի աղջիկների խումբը: Ախ, որքա՜ն նա փափագում էր միանալ այդ խմբին, նույնպես երգել, զվարճանալ: Բայց հեռո՛ւ, հեռո՛ւ այն ճանապարհից, որով գնում են ուրիշները: Նա միայն առողջների և բախտավորների համար է բաց...

Սայլերին առաջնորդում էր մի ձիավոր, գդակը ծուռը դրած, մտրակը ծնկան վրա հենած, հանդարտ երգելով: Երբեմն նա ձիու գլուխը դարձնում էր ետ և սպասում սայլերին: Մի անգամ ետ մնաց և, ձիու սանձը քաշելով, կանգ առավ, նայեց երկու ուխտավոր կանանց:

— Սոնա, շալդ քաշիր երեսիդ, — ասաց հացթուխը:

Սոնան ծածկեց երեսը, հետո շուտով բաց արավ: Մի՞թե այդ արձակ դաշտումն էլ իրավունք չունի մի քիչ ազատություն վայելելու: Նա ուզում էր լսել իր հասակակիցների երգը, ծիծաղը, ուզում էր մի քիչ մոտենալ նրանց: Եվ մոտենում է:

— Ա՛յս կողմով, Սոնա, ա՛յս կողմով, — կրկնեց հացթուխը, ցույց տալով դաշտի խորքը:

Այդ միջոցին ձիավորը մոտեցավ հացթուխին:

— Ո՞ւխտ ես գնում, — հարցրեց նա:

— Հա՛, որդի:

— Ընդունելի լինի:

— Ամեն. քոնն էլ:

Ձիավորը չհեռացավ: Նա ընթանում էր հացթուխի և նրա աղջկա հետ հավասար քայլով, մինչդեռ սայլերն արդեն բավական հեռացել էին:

— Հոգնած կլինեք, համեցեք, սայլերի վրա տեղ կա, նստեցեք, — առաջարկեց նա հացթուխին:

— Շնորհակալ եմ, աստված քեզ պահի, որդի, ուխտ ենք արել ոտով գնալ, գնում ենք:

Ձիավորը մի խոր հայացք ձգեց Սոնայի վրա: Աղջիկը շտապեց երեսը շալով ծածկել: Հացթուխը այլևս չէր խոսում: Ձիավորը մտրակեց ձիուն և հասավ սայլերին:

Այդ միջոցին Սոնան լսեց մի ծանոթ ձայն.

« Պսպղում էր սև օձի պես մերկ թուրը,

«Սլանում էր բազեի պես քյոհլան ձին,

Քամուն տալով բերնից վազող փրփուրը:

«Կատաղել էր, կոտորում էր Քյոռօղլին: »

Սոնան հետ նայեց և տեսավ գիժ-Դանելին, որ, գավազանը պարանոցին հորիզոնաձև դրած, ձեռները հովվի պես հենած ծայրերին, քայլում էր առաջ, ոտաբոբիկ, գլխաբաց:

— Սուրբ Կարապետը մուրազիդ հասցնի, Շուշան բաջի, — ասաց նա, շուտով հավասարվելով հացթուխին: — Խաթուն Սոնա, բարով տեսանք:

Սոնան ուրախացավ խենթի անսպասելի կերպով երևալուն: Նրա հետ արգելված չէ խոսել, այժմ գոնե կարող է հարցուփորձ անել սայլերի հետ գնացող աղջիկների մասին:

— Մերոնք են, — պատասխանեց գիժ-Դանելը, — ուխտ ենք գնում: Երկու ոչխար, մեկ ղոչ ենք տանում: Սոնա խանում, տեսնո՞ւմ ես, քո լվացած հալավն եմ հագել, — դարձավ նա Սոնային, ցույց տալով իր շապիկը, որ, սովորականին հակառակ, մաքուր էր:

— Ամեն շաբաթ բեր լվանամ, — ասաց Սոնան:

— Չէ, նորը պիտի կարես: Ես կտոր կառնեմ, դու կկարես: Նա չէր կարում, պստիկ էր, մատներ ուներ շիմշադի պես...

— Էլի կոշիկներ չե՞ս հագել: Ի՞նչ արիր քեզ համար հյուսած գուլպաները:

— Պահում եմ, Սոնա խանում, հարսանիքիդ պիտի հագնեմ: Հարսանիք, հարսանիք, չմեռնեմ, Մանիշակիս տեսնեմ սուրբ սեղանի առաջ: Տվեք քարը — կրծքիս խփեմ, վայ կանչեմ, տվեք հողը — գլխիս ածեմ, լաց լինեմ: Շուշան բաջի, լավ մտիկ արա այն ձիավորին: Հետը խոսում էիք, տեսա, Է՛է, ասլան Դանելը մի բան է իմանում, շատ լավ բան, շատ լավ բան...

Արտասանելով վերջին բառերը, ոստոստաց առաջ, գավազանով ջարդելով ճանապարհի եզրին բուսած մորենի թփերը և երգելով. «Քյոհլան ձիու վրա նստած

է Քյոռօղլին, է՛յ ջամահաթ ճամբա տվեք Ղռաթին»: Հետո նա, գավազանը բարձրացնելով, գոռաց. «Մուրադ, հեյ, հեյ, Մուրադ, քշի՛ր, քշի՛ր, ասլանը եկավ»:

Նա վազեց դեպի ձիավորը, հետո հանկարծ կանգ առավ և սպասեց հացթուխին: Նրա հատուկտոր խոսքերից հասկացվում էր, որ սայլերից երկուսի վրա գնում են նրա ազգականները: Ձիավորը խենթի եղբոր որդին էր, անունը Մուրադ:

— Էգուց էլ մեծ եղբայրը կգա: Նրանց մոտ չեմ մնալ, կգամ ձեզ մոտ: Բազարով անցնելիս, Ոսկանին պատահեցի: Չէ, Շուշան բաջի նա կոնծած չէր: Ասաց. «Դանել աղբեր, աղջկաս լա՛վ մտիկ արա»: Մի՛ վախենալ, Սոնա խաթուն, աչքիս լույս, քեֆիդ դիպչողին պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ...

Նա անցավ հացթուխի կողմը և սկսեց շշնջալ: Սոնան ոչինչ չէր լսում, բայց գուշակում էր, որ խոսակցությունը լուրջ բանի մասին է: Խենթը շուտ-շուտ երեսին խաչակնքում էր և սուրբ Կարապետի անունով երդվում:

— Բա՜ն եմ ասում, աչքովս եմ տեսել, ականջովս լսել, — լսվում էին միայն այս խոսքերը:

Նրանք հասան սրբավայր: Դա մի ամայի վանք էր բավական ընդարձակ գյուղի ծայրում: Պահապան տիրացուն այնքան բարի գտնվեց, որ հացթուխին հատկացրեց մի առանձին խուց շրջակա կիսախարխուլ շենքի մեջ: Մայր ու աղջիկ տեղավորվեցին այնտեղ: Գիժ-Դանելը, հակառակ հացթուխի ցանկության, վազեց ու իր ազգականներից բերեց մի փոքրիկ կարպետ, մի բարձ և մի դոշակ:

— Սոնա խաթունիս համար է, հոգնած է, թող հանգստանա, — ասաց նա, հայրական խնամքով կապերտը սփռելով խցի մերկ հողահատակի վրա:

Մյուս օրը, առավոտյան կանուխ զարթնելով, խենթը մորթեց հացթուխի աքաղաղը և բաժանեց գյուղի մերկանդամ մանուկներին: Սոնան հեռվից նայում էր այդ ոտաբոբիկ էակներին և հիշում էր իր կյանքի այն միջոցը, երբ ազատ վազվզում էր փողոցներում: Անցա՜վ այդ երջանիկ պահը, որ այնքան կարճ տևեց նրա կյանքում: Այժմ նա սրտից արձակում է կսկծալի հառաչանքներ, աղոթում է սրբերին, լիզում է նրանց գերեզմանների հողը, իր ցավի համար ճար աղերսելով: Նա լսում էր գիժ-Դանելի առասպելական անկապ, անսկիզբ և անվերջ պատմությունները սրբերի հրաշքների մասին: Քանի՜-քանի՜ կաղեր, կույրեր և համրեր են բժշկվել հենց այս խարխուլ վանքում:

— Աչքովս եմ տեսել, մեկ-մեկ կարող եմ ցույց տալ, — հավատացնում էր խենթը: — Նասր-Էդդին շահի գալու տարին էր, երկինք, երկիր չորացել էր: Ռաշպարը կուրծք էր թակում, աստված կանչում: Եկան մասունքը առոք-փառոք տարան քաղաք, թափոր էր: Արևը մարդ էր խաշում, եղունգիս չափ թուխպ չկար երկնքում: Մեկ էլ տեսնենք աղոթարանի կողմից մթնեց՝ անձրև բռնեց, ի՜նչ անձրև, ճիպոտ-ճիպոտ: Այն սարի ցորենի խալվարը ծախվեց հինգ մանեթով:

Մինչ խենթը պատմում էր, այնտեղ, վանքի գավթում ուխտավոր աղջիկները նվագում էին, պարում և երգում: Կարծես, նրանք ոչ մի ցավ չունեին, եկել էին այդ սրբավայրը հատկապես զվարճանալու և Սոնայի նախանձը շարժելու համար: Բա՜հ, միթե մե՞ղք չի սրբի մասունքի մոտ ծիծաղել ու հրհռալը: Բայց ի՜նչ լավ սազ է գալիս այդ զվարճությունը ջահիլ աղջիկներին վանքի կանաչ գավթում, այդ

մամռապատ քարերի շուրջը, այդ վայրենի թփերի մոտ: Մռայլ երկյուղածության զգացումը Սոնայի սրտում տեղի էր տալիս նախանձի զգացմանը: Հասակակիցների անզուսպ զվարճությունը նրան թվում էր իբրև մի տեսակ նախատինք, որ նա ցավագար է, աստծուց պատժված, մարդկանց երեսից զրկված:

Ճաշից հետո, ուխտավորները, իրանց իրեղենները թողնելով վանքում, ցրվել էին գյուղից դուրս զբոսնելու: Գիժ-Դանելը գնացել էր վանքից ոչ հեռու գտնվող մի ձորակի աղբյուրից ջուր բերելու: Սոնան իր մոր հետ բարձրացավ մի փոքրիկ դալարազարդ բլրակի վրա և այնտեղից նայում էր հեռավոր ձյունագագաթ լեռներին: Վանքի պատի առջև նկարվեց մի տղամարդի կերպարանք: Սոնան իսկույն շալը քաշեց երեսին: Մի քանի վայրկյան անցած, կրկին երեսը բաց արավ: Այս անգամ ճանաչեց այն բարեսիրտ ձիավորին, որ նախընթաց օրը առաջարկում էր նրանց սայլը նստել: Գդակը դարձյալ ծուռ դրած, մի ձեռը հենած դաշույնի դաստապանին, մյուսը դրած դեղնագույն չուխայի տակ, համարձակ աչքերով նայում էր Սոնային: Երբեմն շփում էր իր բարակ ընչացքը և նայում կրծքին, կարծես, ինքն իրանով հիանալով: Եվ իրավունք ուներ հիանալու: Նրա բարձր հասակը, առույգ դեմքը և առողջ կուրծքը միասին գումարած՝ տեղական չափահաս աղջիկների համար ներկայացնում էին մի գրավիչ փեսացու քսանուվեց տարեկանից ոչ ավելի: Սոնան դարձյալ երեսը ծածկեց: Երիտասարդը տեսնելով, որ աղջիկն ամաչում է, համեստությամբ հեռացավ և թաքնվեց պատի ետևում:

Այդ միջոցին գիժ-Դանելը սառը ջրով լի կուժը իր կիսամերկ ուսի վրա դրած, մոտենում էր վանքին: Սոնան նրա դեմքի վրա նկատեց մի խորամանկ ժպիտ, որի նմանը առաջին անգամն էր արտահայտում այդ դժբախտ դեմքը: Երբ մայր ու աղջիկ վերադարձան վանքի գավիթը, գիժ-Դանելը գավազանը սազի պես կրծքին բռնած, երգում էր: Տեսնելով հացթուխին, վազեց առաջ և սկսեց նրա հետ շշնջալ: Նա խոսում էր դեղնագույն չուխավոր երիտասարդի մասին: Պնդում էր, թե այդ երիտասարդը շատ է հավանել Սոնային և մտքում դրել է նրան «ուզել»: Առաջին անգամ Սոնային տեսել է փողոցով անցնելու ժամանակ, դռների միջով, երբ Սոնան իրանց տան գավիթը ավլելիս է եղել: Նա հարցրել է անծանոթ աղջկա մասին իր տնեցիներին: Ոչ ոք չի ճանաչել: Մի անգամ էլ երիտասարդը նույն փողոցով անցնելիս, տեսել է, որ Դանելը դուրս է գալիս այդ տնից: Նա հարցրել է Դանելին, և «ասլանը» այնքան գովել է Սոնային, որ Մուրադի «աչքերը պսպղել են»:

— Ես քեզ ասում եմ գժվել է, գժվել, — ավարտեց խենթը խոսքը, ձեռը բարեկամաբար խփելով հացթուխի ուսին: — Այսօր էգուց մարդ կուղարկի, էլ չի համբերիլ...

Մի ժամ հետո խցի առջևով անցան երկու կին — մեկը պառավ, մյուսը դեռ երիտասարդ — և հետաքրքրությամբ նայեցին Սոնային: Խենթը ասաց հացթուխին, որ պառավը Մուրադի մայրն է, իսկ երիտասարդը — եղբոր կինը:

Հացթուխը վերջին անգամ աղոթեց վանքում և Սոնայի հետ ճանապարհ ընկավ դեպի քաղաք: Խենթը նրանց ուղեկցում էր: Նա շարունակ խոսում էր Մուրադի մասին, գովում էր նրա խելքը, գեղեցկությունը, տունուտեղը: Մինչև այդ ժամանակ խոսում էր բոլորովին առողջ մարդու պես: Հենց որ բարձրացավ ճանապարհի վրա գտնվող մի մեծ բլուրի գագաթը, որտեղից երևում էր քաղաքի

շրջակայքը, գիժը հանկարծ փոխվեց: Նա ընդհատեց իր խոսքը, ձեռով ցույց տվեց քաղաքից երկու վերստաչափ հեռու գտնվող գերեզմանատունը և աղաղակեց.

— Այնտեղ է, ա՛յ այնտեղ…

Վազեց առաջ, գավազանը բարձր բռնած, գազանի պես մռնչյուններ արձակելով: Առաջին անգամն էր Սոնան խենթին տեսնում այնպես կատաղած: Նա չվախեցավ: Հարյուր քայլաչափ վազելուց հետո գիժ-Դանելը կանգնեց և, գավազանը գլխի վրա հորիզոնաձև բռնած, խոշոր քայլերով մոտեցավ իր ուղեկիցներին, արտասանելով.

— Յա՛, սուրբ Կարապետ, յա՛, սուրբ Կարապետ...

Նա իրանից ձևացնում էր մի լարախաղ, աչքերը հառած դեպի մի որոշ կետ և ուսերը շարժելով: Սոնան նայում էր նրան, արտաքուստ ժպտում, ներքուստ ցավում: Ինչո՞ւ այդ մարդը պատժվել է աստծուց, մի՞թե նա էլ մեղք է ունեցել: Զգում էր, որ խենթի հոգեկան հիվանդությունը ունի պատճառ: Բայց թե ինչ էր — չգիտեր և չէր համարձակվում ակնարկել անգամ: Միայն, երբ խենթը մոտեցավ, Սոնան հարցրեց.

— Դանել ապեր, հիմա գիշերները ո՞րտեղ ես քնում:

— Ժամհարի մոտ:

— Ինչո՞ւ եղբորդ որդիների տանը չես քնում: Խենթը, պատասխանի փոխարեն, սկսեց երգել մի պարսկերեն երգ, ամեն տնից հետո կրկնելով.

«Սիրտդ քար է որսորդ,

«Ինչո՞ւ բալիս խփեցիր,

«Ինչո՞ւ բալիս խփեցիր...»

V

Այժմ գիժ-Դանելը ամեն օր էր այցելում իր բարեկամներին: Նա բերում էր իր ազգականների մասին ամեն անգամ նոր տեղեկություն և միշտ կրկնում, թե ահա, ահա այսօր-վաղը նրանց կողմից միջնորդ կգա «Սոնային ուզելու Մուրադի համար»:

Հացթուխը նրա ասածը հաղորդեց ամուսնուն: Պայտագործն ուրախացավ և սկսեց ավելի բարեկամաբար վերաբերվել խենթին:

— Ինչո՞ւ չէ, — ասաց նա մի օր, ձեռը խփելով Դանելի ուսին, — Սոնայիս պես աղջիկ ո՞վ ունի... դե, ինձ էլ ճանաչում ես, Դանել ջան, բանը փողը չէ, մենք էլ մարդ ենք, քաղաքում անուն ունինք: Թող մեկը դուրս գա ու ասի — Ոսկանն այսպես է, այնպես է: Պատվավոր մարդու տղա, պատվավոր մարդ ենք: Եղբորդ որդին թող ուրախությունից գլխի վրա քյալլա-մալլաղ կանգնի, որ իմ փեսան է դառնում: Ինձի Ոսկան կասեն, հանաք-մասխարա չիմանաս…

Խենթը համաձայնվեց նրա ասածներին, բայց միևնույն ժամանակ նրան թվաց, որ իր բարեկամը շատ էլ պարծենալու իրավունք չունի: Ասենք, Ոսկանը նամուսով է, գլխին տղամարդի գդակ ունի, միայն ժամանակ-ժամանակ իրան կորցնում է:

— Խոսքս այն զահրումարի մասին է, քի՛չ ածա փորդ, տնաքանդ, խոմ ներսդ չե՞ս այրելու:

— Ասում ես, օրինակ, էլ չկոնծե՞նք Է՛լի: — հարցրեց պայտագործը :

— Կոնծի՛ր, ո՞վ է ասում, քիչ-քիչ, մեկ-մեկ, երկու-երկու, ավելի չէ...

Խենթի խրատը ըստ երևույթին, շատ ծիծաղելի թվաց արբշիռ պայտագործին: Մի աչքը փակելով, նա գլուխը ծռեց դեպի ուսը և հեգնաբար ասաց.

— Արի, Դանել ախպեր, եպիսկոպոս ձեռնադրվիր, խիստ լավ ես քարոզում:

Հետո, ձեռը խփելով բարեկամի ուսին, ավելացրեց.

— Դու ինձ ասա, տեսնեմ, աղջիկս բախտավոր կլինի է՞լի:

— Ասում եմ, էլի՛ կասեմ, ինքդ էլ կտեսնես:

— Բաս, ապրես, Դանել ջան, լավ մարդ ես: Խելքդ ինչ է կտրում, օրինավոր ազգականներ ունենալ լավ բան է, չէ՞: Դու այն ասա, որ փո՛ղ շատ ունենա, փո՛ղ, թե չէ, ես նրանց աղջիկ չեմ տալ, ձեռնատու չէ: Մենք էլ պատվավոր մարդ ենք, գրպանի ծախք է հարկավոր... Իսկի չլինի, մի բաժակ հացի յա ջաջի արաղ կտան, որ կենացները անուշ անենք, հը՞ մ...

Խենթը զգաց, որ բարեկամը լավ բան չի ասում: Առանց այդ էլ նրա գլուխը ձանձրացել էր լուրջ խոսակցությունից: Նրա աչքերը հանկարծ պսպղացին, գավազանը ձեռին դողաց:

— Ոսկան աղբեր, ճանաչո՞ւմ ես ասլան Դանելին, — գոչեց նա կատաղած:

Պայտագործը վախեցավ: Խենթի կերպարանքը շատ մոլեգին արտահայտություն էր ստացել:

— Լա՛վ, մի՛ չարանար, Դանել ջան, — ասաց նա, բռնելով իր բարեկամի ձեռը:

— Կնիկդ, աղջիկդ լաց են լինում գիշեր-ցերեկ, ճանաչո՞ւմ ես ասլան Դանելին, քի՛չ խմիր:

— Է՛հ, չեմ խմիլ, վաս սալամ, արաղ քաշողի էլ հերը գյոռբեգյոռ լինի...

Այս խոսքերը մի փոքր հանգստացրին խենթին: Նա գավազանը դրեց կռնատակին:

Այդ օրից նա պայտագործին այլևս չէր առաջնորդում դեպի գերեզմանատուն քելեխ ուտելու: Եվ միշտ հացթուխին հարցնում էր. ի՞նչպես է Ոսկանը վարվում նրա հետ, խոմ չի՞ ծեծում նրան կամ Սոնային: Կարծես, մեկը նրա վրա պարտականություն էր դրել ամեն բանում հովանավորել աղքատիկ ընտանիքին:

Նրա սպառնալիքը Ոսկանի վրա չազդեց: Շաբաթը երեք-չորս անգամ պայտագործը տուն էր վերադառնում օրորվելով և հայհոյանքը բերանին:

Մի օր խենթը, վազելով, մտավ հացթուխի խրճիթը և շնչասպառ ասաց,

— Հիմա կգա, աչքովս տեսա, ականջովս լսեցի, բա՜նդ տես...

Ասաց ու ինքն իսկույն անհետացավ: Հացթուխը հասկացավ ում մասին է խենթի խոսքը. շտապով կարգի բերեց խրճիթը և սկսեց ականջ դնել դեպի դուրս: Արդարև, մի քանի րոպե անցած, լսեց քայլերի ձայն և Սոնային հրամայեց թաքնվել պատի մեծ խորշում, վարագույրի հետևում: Ներս մտավ մի փոքրահասակ կաղ կին, համարձակ դեմքով և շարժվածքով: Քաղաքի հայտնի միջնորդն էր դա, որին կոչում էին «Չոլախ Սահարնազ»:

Սա առանց պատասխանի և հրավերի սպասելու, նստեց հատակի վրա, սենյակի վերին կողմում:

— Ինչպես տեսնում եմ, մարդդ տանը չէ, — ասաց աջ ու ձախ նայելուց հետո: — Շատ լավ է, կնկա բանը կնիկը շուտ կդրստի: Մոտդ խեր խաբարով եմ եկել:

— Խերում մնաս, ասա, տեսնենք...

Առանց երկար հառաջաբանի, Չոլախ Սահարնազը անմիջապես հայտնեց իր այցելության նպատակը: Ինչ խոսք, որ Շուշան բաջին «չորաթան» Զառնիշանի տղա Մուրադի մասին լսած կլինի: Ամբողջ քաղաքի աչքն է, նմանը չկա, ջահիլ, գեղեցիկ, շիր ու շնորհքով: Չի հարբում, չի ծխում, ղումարբազ (խաղամոլ) չէ, գլուխը քաշ իր բանին է:

— Քաղաքում աղջիկ շատ կա, — շարունակեց Սահարնազը, — ով ասես, որ չորաթան-Զառնիշանի ոտները չպաչի: Բախտը քեզ է ընկել: Մուրադը տեսել է աղջկադ, հավանել է: Հիմա դու էլ կնիկ ես, գլխիդ խելք ունիս, մտածիր, ինձ էլ մի խոսք ասա, գնամ...

— Ի՞նչ ասեմ, — պատասխանեց հացթուխը, մի քիչ մտածելուց հետո, — փառք աստծո, որ տղան ինքն է հավանել: Է՜հ, աղջիկ է էլի, լավ-վատ գիտի կարել, կարկատել, եփել: Ծնողների պատիվը ճանաչող, խոնարհ, աստծո գառն է. մարդ տեսնելիս շալը հինգ ծալ է անում երեսին: Մի խոսքով, աղջիկ է, էլի. եթե ուրիշներից լավ չէ, վատ էլ չէ:

Մինչ երկու կանանց բանակցությունը շարունակվում էր, Սոնան հետաքրքրությամբ ականջ էր դնում, աշխատելով ոչ մի բառ բաց չթողնել: Նրա սիրտը բաբախում էր հուզմունքից: Չգիտեր, ինչ մտածեր իր ապագայի մասին. բոլորը թողել էր մոր կամքին: Ծնողն իր հարազատ աղջկա վատը չի կամենալ, թող ինչպես խելքը կտրում է, այնպես անի, միայն թե այդ խեղճ կնիկը մի քիչ բախտավորվի:

Հացթուխը վարագույրը ետ քաշեց և Սոնային հրամայեց դուրս գալ խորշից: Ամոթից կարմրած ու քրտնած՝ կանգնեց տասնվեց տարեկան աղջիկը միջնորդի առջև, աչքերը խոնարհեցնելով հատակին և շրթունքները հուզմունքից կրծոտելով:

Չոլախ Սահարնազը դիտեց նրան ոտից գլուխ իր փորձառու աչքերով, խոսեցրեց, որ իմանա՝ համր չէ՞ արդյոք, հարց ու փորձ արավ «խելքը չափելու» համար և ուղարկեց մի բաժակ ջուր բերի խմելու, որ քայլվածքը տեսնի և իմանա, կաղ չէ՞, արդյոք:

Երեք օր անցած, հացթուխի տունը ներկայացնում էր մի տեսարան, որի նմանը այնտեղ դեռ չէր կատարվել և չպիտի կատարվեր հավիտյան: Պայտագործը մաքուր լվացվել էր, գզգզված միրուքը սանրել և հագել քսան տարի առաջ պսակադրության համար կարած արխալուղը: Հացթուխը գլխին գցել էր մի նոր շալ և մեջքին կապել մետաքսյա կարմիր գոտին — ուրախության նշանը: Հատակի վրա վառվում էին հարևաններից ժամանակավոր բերված մի զույգ կանթեղներ, լուսավորելով աղքատիկ խրճիթի ողորմելի կահ-կարասին: Սենյակի մի անկյունում դրված էր մատուցարանը մի շիշ օղիով և երկու տեսակ մուրաբայով, որ, աստված գիտե, ո՛ր ժամանակից էր պահել հացթուխը: Պայտագործը հուզված անցուդարձ էր անում անկյունից անկյուն, ստեպ-ստեպ նենգամիտ հայացքներ ձգելով օղիի շիշի վրա և ծոծրակը անհամբերությամբ քորելով:

Սոնան կանգնած էր սենյակի վարի անկյունում, ձեռները կրծքին դրած, դողալով, ամաչելով: Երկու դրացի կանայք նստած էին հացթուխի աջուձախ կողմերում և խոսում էին օրվա հանդեսի մասին:

— Գալիս են, առա՛ջ գնա, — ասաց հացթուխը ամուսնուն և ինքն էլ իսկույն ոտքի կանգնեց:

Պայտագործը շտապեց դուրս՝ հյուրերին ընդունելու:

Նախ ներս մտավ տեր Մարկոսի գավազանը, ապա երևացին նրա գորգագույն ֆարաջայի փեշերը, հետո ինքն ամբողջովին, իր երկայն ու տափակ գդակով, որ թիակի էր նման:

Նրա հետևից երևաց փեսացվի մայրը — «չորաթան» Զառնիշանը, առանց չարսավի, մի կինամոնագույն շալ ուսերին գցած: Իսկ-որ այդ կինը «չորաթան» էր, այնքան ցամաքած էր: Նրա ոսկրոտ դեմքին, լայն կզակին, մեծ բերանին մի առանձին խստություն էին տալիս այն մի զույգ սուր աչքերը, որ պսպղում էին ինչպես վառված ածուխի կտորներ: Սոնայի մարմնով անցավ մի ցնցում, երբ նրա հայացքն ընկավ այդ կնոջ վրա. մի ցնցում, որ մարդ կարող է զգալ, երբ հանդիպի շարժուն կմախքի, որի աչքերի խորշերի մեջ տեղավորված են երկու փայլուն որդեր: Բայց պառավի քայլվածքն այնքան կենդանի է, որ, ըստ երևույթին, նա բնավ ցանկություն չուներ երբևէ կմախք դառնալու:

Դռների մոտ, օդի մեջ ցցվեց Բուխարի մորթուց կարված մի սրածայր գդակ, որի տիրոջ մարմինը, հայտնի չէր ինչու, տատանվում էր ներս մտնել:

— Համեցե՛ք, խնամի, համեցե՛ք, — կրկնում էր պայտագործը դրսից:

Վերջապես խրճիթի շեմքի վրա երևաց մի մարդկային ոտ սպիտակ գուլպայով ծածկված, ապա երկրորդը, ապա մի երկայն չուխա: Հայտնվեց, որ նրանց տերն է — փեսացվի ավագ եղբայրը: «Չոփուռ» Կարապետը — այսպես էին կոչում ներս մտնողին — մոտ քառասուն տարեկան տղամարդ էր ամուր կազմվածքով,

փոքրիկ աչքերով և դուրս ցցված այտերով, որոնց վրա ծաղիկը խոր փոսեր էր թողել:

Սոնայի մարմնով դարձյալ մի սարսուռ անցավ, երբ նա շալի տակից նայեց այդ մարդու կերպարանքին:

Վերջապես, ներս մտավ չորրորդ և վերջին հյուրը — Կարապետի կինը՝ Գյուլնազը, ոտից գլուխ չարսավի մեջ փաթաթված:

Բավական երկար ժամանակ տևեց, մինչև որ հյուրերը համաձայնվեցին նստել այն կարգով, որ ցանկանում էին տանտերերը: «Չոփուռ» Կարապետը անպատճառ ուզում էր դռների մոտ նստել, հարկավ, համեստություն ցույց տալու համար: Պառավ Զառնիշանը համառությամբ իր մեջքից վերցնում էր և մի կողմը ձգում, իսկ հացթուխը նույն համառությամբ սեղմում էր նրա մեջքին մի փափուկ բարձ: Այնինչ, պառավի հարսը — Գյուլնազը, կարծես, վճռել էր պայտագործին համբերությունից հանել, այնքան ծանրուբարակ էր շարժվում: Երբ երևան եկավ նրա դեմքը, Սոնան դարձյալ մի սարսուռ զգաց:

Այդպիսով, նա երեք անգամ ցնցվեց, և երրորդ ցնցումն ամենից զորեղն էր:

Նրա հայացքը մի անբացատրելի զորությամբ հառվեց իր ապագա տեգրկնոջ երեսին: Ինքնըստինքյան այդ կնոջ դեմքը առանձին ուշադրության արժանի բան չէր ներկայացնում: Նա տակավին երիտասարդ էր, ոչ նիհար, ոչ գեր, ոչ այնքան բարձր և ոչ էլ ցածր հասակով: Նայելով նրա շիկագույն ունքերին, պետք էր ենթադրել, որ գլխի մազերի բնական գույնն էլ շեկ է, բայց նրանք հինայած էին, ուստի և մուգ-կարմրագույն: Տարօրինակ էին միայն այդ կնոջ աչքերը: Իսկապես դրանք աչքեր չէին, այլ մի զույգ փայլուն ապակիներ, սառած և անշարժ իրանց շրջանակների մեջ: Երբ նա իր հայացքը ձգեց Սոնայի վրա, խեղճ աղջկա ոտները դողացին: Չգիտեր հորի՞ց, թե՞ մորից լսել էր օձի հայացքի ձգողական ուժի մասին: Պատմել էին նրան, որ երբ գորտը նայում էր օձի սուր աչքերին, մի անհաղթելի զորությամբ մղվում է, ընկնում նրա բերանը: Սոնան չէր մղվում դեպի այդ կինը, ընդհակառակը, մի բան հրում էր նրան, բայց չէր էլ կարողանում իր հայացքը դարձնել նրանից:

Նորից սկսվեց սովորական բանակցությունը, թեև ամեն բան վճռված էր արդեն: Նորից լսվեցին փեսայի մասին գովասանքներ, խոստումներ, հարց ու փորձ, և նորից Սոնային զանազան պատրվակներով ստիպեցին խոսել, քայլել, ատամները ցույց տալ: Վերջապես, պառավ Զառնիշանը դարձավ հացթուխին.

— Աղջիկդ դրսից դուր է գալիս ինձ. եթե ուրիշ պակասություն չունի — մեր ապրանքն է:

— Լավ-վատ, տեսնում ես, հավանում ես — հալալ լինի, — արտասանեց հացթուխը, սարսափելով պառավի վերջին խոսքերից:

— Ինչքան դրսումն ես տեսնում, խնամի ջան, — մեջ մտավ պայտագործը, որ արդեն սկսել էր ձանձրանալ այդ ձևականությունից, — երկու այնքան էլ ներսումն է:

— Տա աստված, — ասաց «չոփուռ» Կարապետը:

— Ներսինը իմանալ դժվար է, — ավելացրեց նրա կինը, ապակյա աչքերը հառելով Սոնայի երեսին:

— Ես ձեզ աղջիկ չեմ տալիս, այլ հալած ոսկի,– շարունակեց պայտագործը սեփական տրամադրությունից ոգևորված, — խելք ասես — ծով, շնորհք ասես — Է՛լ ավելի: Այս տունը նրա վզին է: Կերակուրներ է եփում, որ ուտելիս մատերդ էլ հետն ես ուտում, էլ չեմ ասում կարելն ու լվանալը: Մեկ էլ որ մեր պապերի խոսքն է. լավ որդին օջախից կճանաչվի: Ախար, մենք էլ այս քաղաքում մի օջախ ենք, անուն ունինք: Տեր հայր, ի՞նչ կասես:

— Իսկությունն ես հրամայում:

Հացթուխը տեսնելով, որ իր ամուսինն արդեն պատրաստ է ստեր փչել, շտապեց ընդհատել նրա ոգևորությունը.

— Մախլաս, աղջիկ է, Է՛լի շատ էլ գովենք, ի՞նչ դուրս կգա, դո՛ւք պետք է հավանեք:

Հոգու խորքում զգում էր, որ առանց այդ էլ խաբում է իր հյուրերին, թաքցնելով նրանցից Սոնայի ցավը: Նա մտածում էր, որ իր արածը վատ է, աններելի, աստծու կամքի և մարդկանց օրենքների հակառակ: Բայց ուժ չուներ միակ դստեր բախտի դեմ կանգնելու, ինքն իր բերանով նրան խայտառակելու:

Մի վայրկյան միայն չկարողացավ իրան զսպել: Դուրս եկավ խրճիթից և իր անհանգստությունը հայտնեց Դանելին: Խենթը կանգնած էր դռների մոտ և դրսից դիտում էր ներսում կատարվող տեսարանը: Ազգականները նրան պատվիրել էին այդ երեկո չերևալ հացթուխի տանը: Բայց նա չդիմացավ, կամեցավ բարեկամների ուրախության հանդեսը կամ, ինչպես ինքն էր ասում, «Մանիշակի նշանդրեքը» իր աչքերով տեսնել:

— Բանիդ կաց, ասում եմ քեզ, — խրախուսեց նա հացթուխին, — ասլան Դանելը ոչ ոքի չի ասիլ, սո՛ւսս ...

Հետո, մի հատ կարմիր նուռ հանելով ծոցից, տվեց հացթուխին:

— Ա՛ռ, Շուշան բաջի, աստված շնորհավոր անի, իսկի մի վախենալ: Ասա Մանիշակիս, որ նրա բաշխած գուլպաները հագել եմ. ա՛յ, քոշեր էլ ունիմ...

Տեր Մարկոսը շտապեց «պահպանիչն» ասել, մատանին օրհնեց և դրեց Սոնայի մատին, կանխապես մի սուր հայացք ձգելով խնամիների բերած մի գլուխ շաքարի վրա:

Անշուք հանդեսը վերջացավ, հյուրերը գնացին: Պայտագործը հարձակվեց մնացած օղիի վրա և սկսեց բաժակ բաժակի հետևից դատարկել: Սոնան, խրճիթի մի անկյունում կուչ եկած, հեկեկում էր: Նրա ձայնը դուր չեկավ պայտագործին: Առանց այդ էլ նա արդեն ձանձրացել էր հյուրերի շատախոսությունից:

— Ի՞նչ ես քեֆս փչացնում, — գոռաց նա, — ա՛յ կնիկ, աղջկադ տզտզոցը կտրիր:

Հացթուխի համար սրբապղծություն էր այդ հանդիսավոր երեկո վիրավորել հիվանդոտ աղջկա սիրտը: Ահա ինչու չկարողացավ իրան զսպել և բարկացած արտասանեց.

— Լակում ես — լակիր, ձեռդ բռնող չկա:

— Ինչ ասացի՛ր, լակե՞մ, փահ, բաս ես շուն եմ, Է՛լի, — կատաղեց պայտագործը, ոտքի կանգնելով:

— Շուն չես, շան պես ես վարվում աղջկադ հետ:

Պայտագործի աչքերը մթնեցին: Բռունցքն ամուր սեղմելով առաջ քայլեց: Արդեն պատրաստ էր խփելու հացթուխին, երբ Սոնան վազեց, բռնեց նրա արխալուղի փեշերից երկու ձեռներով և ուժով ետ քաշեց նրան, աղաղակելով.

— Չեմ թողնիլ, չեմ թողնիլ...

Բայց բռնակալն այնքան կուրացել էր, որ երեսը ետ դարձրեց և ձեռը բարձրացրեց իր աղջկան խփելու, գոռալով.

— Խոսք խոսքի եք տվել, հա՞ա...

Այդ վայրկյանին մեկն ամուր բռնեց նրա ձեռն օդի մեջ:

— Չեմ թողնիլ, ասլան կասեն ինձ, չեմ թողնիլ...

Պայտագործի աչքերը հանդիպեցին գիժ-Դանելի կատաղի աչքերին, որոնցից կայծեր էին ցայտում: Նա ձեռը ուժով խլեց նրանից, գոչելով.

— Դո՛ւրս կորիր, դու ի՞նչ գործ ունիս իմ տանը, գիժ...

Բայց գիժ-Դանելի կերպարանքն այնքան սարսափելի էր, որ մի վայրկյանում պայտագործը այլափոխվեց, ձեռները թուլացան: Նա վախեցավ խենթից:

— Դանել աղբեր, դո՞ւ ես, համեցեք, նստիր, համեցե՛ք, Սոնայիս նշանդրեքն է...

Խենթի աչքերը մթնել էին: Նա ոչինչ չէր տեսնում և միայն գոռում էր.

— Մանիշակիս քարի տակը դրեցին, ասլան Դանելը քարը կտա գլխովդ...

Այս ասելով, բռնեց պայտագործի կոկորդը երկու ձեռներով և սկսեց մոլեգնաբար խեղդել նրան: Հացթուխը, աղաղակելով, մեջ ընկավ իր մարդուն ազատելու: Գիժ-Դանելը նրա վրա ուշք չդարձրեց և բոլոր ուժով թափահարում էր պայտագործին: Նույն միջոցին, երբ Ոսկանի լայն բացված բիբերը պտտում էին իրանց շրջանակների մեջ, Սոնան քաշ ընկավ խենթի ձեռներից, կրկնելով.

— Դանել ապեր, Դանել ապեր, Մանիշակն եմ:

Պատահեց մի տարօրինակ բան: Անկարելի էր երևակայել, որ խենթը ձեռքից բաց կթողնի պայտագործին: Բայց լսելով Սոնայի ձայնը և Մանիշակ անունը, տեսնելով նրա սարսափած երեսը, հանկարծ սթափվեց: Նա բաց թողեց պայտագործին և չոքեց Սոնայի առջև:

— Մեղա աստծու, մեղա աստծու, — կրկնեց նա երեսը խաչակնքելով և Սոնայի արխալուղի փեշերը համբուրելով: — Մանիշակ ջան, ես քո ղուլն եմ, վիզս կտրի՛ր...

VI

Երբեք հացթուխի տառապանքն այնքան ծանր չէր եղել, որքան Սոնայի նշանդրության օրից մինչև հարսանիքը, այդ չորս ամսվա ընթացքում: Նա գիտեր, որ իր աղջկա բախտը խախուտ հիմքի վրա է դնում: Նախազգում էր, որ Սոնան օտար շրջանում, թեկուզ ամուսնու հարկի տակ, երջանիկ լինել չի կարող, քանի որ մի չար ոգի հետամուտ է նրա կյանքին: Դեռ մի ամիս չէր անցել նշանդրեքից, երբ Սոնան ընկավ գավթում, և նրա ծնոտը քարին դիպչելով վիրավորվեց:

Սակայն մեծ էր այդ կնոջ հավատը դեպի նախախնամության գութը, և նրա սիրտը լիքն էր ունայն հույսերով: Նա հավատում էր, որ Սոնան անպաշտպան չի մնալ ամուսնական կյանքում: Նա Դանելի բարեկամական զգացումները վերագրում էր նախախնամության կամքին: Եթե մի մարդ, որին ամբողջ քաղաքը խելագար է համարում, այնքան համակրանք է ցույց տալիս նրա թշվառ աղջկան, անշուշտ այստեղ կատարվում է ճակատագրի վճիռը: Ինչո՞ւ, ուրեմն, կարծել, թե առողջ խելքի տեր մարդիկ քարասիրտ կլինին և չեն խղճալ մի երիտասարդ կնոջ, որի ցավը աստծուց է ուղարկված: Թող Սոնայի ապագա ամուսինը գիժ-Դանելի ասածի կիսի չափ բարեսիրտ, ազնիվ և նամուսով լինի — դա էլ հերիք է: Նա չի թողնիլ իր հարազատ մորն էլ մի թթու խոսք ասել Սոնային միայն այն պատճառով, որ ընկնավոր է: Բայց, ով գիտե, կարելի է Դանելը բան չի հասկանում, խաբվում է, լավ չի ճանաչում իր եղբոր որդուն:

— Դանել ապեր, ասա, ի՞նչպիսի տղա է Մուրադը, — հարցնում էր հացթուխն ամեն օր:

Եվ գիժ-Դանելը ամեն օր տալիս էր միևնույն պատասխանը.

— Ոսկի տղա է:

Դա էր խեղճ կնոջ միակ մխիթարությունը, և խենթը նրան թվում էր մի տեսակ սփոփիչ հրեշտակ: Մի անգամ նա հարցրեց.

— Դանել ապեր, հարսանիքից հետո Սոնայիս ցավը կբացվի խնամիների համար, ի՞նչ կանեն նրանք երեխայիս...

Ինչպես երևում էր, խենթը բնավ այդ մասին չէր մտածել: Նա գիտեր մի բան — որ ոչ ոքի չպիտի հայտնել Սոնայի ընկնավոր լինելը: Կարծում էր, թե այսքանը բավական է գաղտնիքը թաքցնելու համար: Մի վայրկյան ընկավ մտատանջության մեջ, ապա, գավազանը օդի մեջ պտտեցնելով ասաց.

— Մանիշակիս քեֆին դիպչողի գլուխը փշուր-փշուր կանեմ...

Ո՞վ էր Մանիշակը, ինչո՞ւ էր խենթը Սոնային այդպես անվանում — հայտնի չէր: Նկատելի էր միայն, որ միշտ այդ անունը արտասանելիս նրա աչքերն առանձին արտահայտություն էին ստանում, և նա առանձին գգվանքով էր նայում Սոնայի երեսին: Իսկ Սոնան խենթի հայացքի մեջ զգում էր մի խոշոր հեռավոր

վիշտ, ամրացած նրա սրտի անթափանցելի խորության մեջ: Շատ անգամ ձգտում էր գուշակել այդ վիշտը: Եվ ոչինչ չէր կարողանում պարզել: Զգում էր սակայն, որ օրեցօր իր համակրանքը դեպի այդ մարդն ավելանում է: Նա ուրախանում էր, երբ խենթին տեսնում էր ուրախ և անհոգ, տխրում էր, երբ խենթը երևում էր տխուր:

Մի օր գիժ-Դանելը ներս մտավ կռնատակին դրած մի կտոր հասարակ կապտագույն կտավ և, ձգելով Սոնայի գիրկը, ասաց.

— Սոնա խանում, արխալուղ կարիր ասլան Դանելի համար, հարսանիքդ մոտենում է:

Խենթը պիտի արխալուղ հագներ: Դա Սոնայի համար չտեսնված բան էր:

Արդեն երեք շաբաթ էր մնում մինչև հարսանիքի օրը: Այժմ Սոնայի միտքը զբաղված էր մի խնդրով. արդյոք ի՞նչ է սպասում նրան ամուսնական կյանքում: Իբրև իր շրջանի հարազատ զավակ, ամուսնության մասին ուներ մի շատ պարզ և անբարդ գաղափար: Աղջկա վիճակը համարում էր ծնողների կամքին ենթարկված: Նրանք են պահում, մեծացնում իրանց զավակին, նրանք էլ պետք է նրա կյանքի ընկերն ընտրեն: Տանը մնացած աղջիկն իր ծնողների համար մի ծանր բեռն է: Կնիկարմատը պետք է իր մարդու աշխատանքով ապրի, ծնողները պարտավոր չեն նրան մինչև մահ կերակրել: Այս պատճառով ամեն աղջիկ, եթե նա երկու աչքերով կույր չէ, պետք է ամուսնանա թեկուզ մի մուրացկանի հետ:

Բայց այս պարզ գաղափարը բարդանում էր և անլուծելի խնդիր դառնում, երբ կապվում էր այն մտքի հետ, որ ինքը Սոնան, ընկնավոր է: Աստված նրան ստեղծել է թշվառ, իսկ մայրն ուզում է անպատճառ բախտավորեցնել նրան: Այսօր-վաղը կբռնեն նրա թևից և մի օտար տուն կտանեն: Գիտե՞ փեսացուն, նրա գլխի ապագա տերը, որ իր հարսնացուն ցավագար է: Եթե գիտե, ինչո՞ւ է ամուսնանում մի անբախտ աղջկա հետ և իրան էլ անբախտացնում: Եթե չգիտե, մի՞ թե չպիտի հայտնել:

Եվ անթիվ կասկածներ, միմյանց հաջորդելով, պաշարում էին Սոնայի թույլ ուղեղը և կաշկանդում: Ի՞նչ կլինի, տեր աստված, եթե նա հենց պսակադրության օրը, եկեղեցում չարից բռնվի և ընկնի: Օ՜օ, ի՜նչ անպատվություն, ի՜նչ ամոթ: Նրա ամուսինը կթողնի նրան ու կհեռանա զզվանքով. մարդիկ երես կդարձնեն և Սոնան կմնա իր մոր գրկում: Երկա՞ր ժամանակ կմնա ընկած, թե՞ շուտով ուշքի կգա: Վերջապես, ի՞նչպես է ուշաթափվում, ի՞նչ է անում, ի՞նչ է խոսում:

— Ասա, մայրիկ, խոսո՞ւմ եմ, դելի՞ն եմ տալիս, ի՞նչ եմ անում, — հարցնում էր երբեմն իր մորից:

— Ի՞նչ ես հարցնում, բալաս, ինչ որ լինում է, աստծու կամքով է լինում:

Ավելի լավ չէ՞ , որ Սոնան մեռնի և իր մորն ազատի խայտառակությունից. մեռնի հենց այժմ, այս րոպեին: Բայց ո՞րտեղ է մահը, որ գար, ազատեր նրան այս ցավերից:

— Մեղա քեզ, մեղա քեզ, — շշնջում էին Սոնայի շրթունքները, երբ նա մահ էր աղերսում, — ասում են, մահ ուզելը մեղք է:

Կիրակի և հինգշաբթի օրերը արբշիռ պայտագործը ճշտությամբ այցելում էր խնամիներին և, եթե ամոթը մի քիչ չզսպեր նրան, պատրաստ էր ամեն օր այցելել,

այն էլ ճիշտ այն միջոցին, երբ կարող էր ճաշի հրավիրվել: Նա ասում էր կնոջը, թե փեսացվին հավանում է, իսկ խնամիներին — ոչ: Բռի գյուղացիներ են, մարդավարի վարվելու շնորհք չունեն:

Իսկությունը այն էր, որ ինքը, Ոսկանը, շատ անախորժ տպավորություն էր գործում խնամիների վրա: Նրա մրոտ ձեռները և կեղտոտ դեմքը դուր չէին գալիս մանավանդ փեսացվի մորը և եղբոր կնոջը: Առանց այն էլ այդ կանայք հոգով-սրտով հակառակ էին հացթուխի աղջկան ուզելուն և միայն փեսացվի կամքին էին հպատակվում: Իսկ այժմ մրոտ ու կեղտոտ պայտագործն արդեն սկսել է գլուխ ցավեցնել:

Մի օր նրանց կողմից «չոլախ» Սահարնազն եկավ հացթուխի մոտ և խոսակցության միջոցին ակնարկեց պայտագործի հաճախ այցելությունների մասին: Սոնան ներկա էր և լսում էր: Միջնորդ կնոջ արտասանած յուրաքանչյուր բառը նա ընդունում էր իբր կծու և ամոթալի նախատինք իր հասցեին: Հոր փոխարեն նա ինքն էր տանջվում ամոթից, որովհետև իրան էր համարում այդ նախատինքի պատճառը: Եթե խնամիները չեն ներում իրանց հարսնացվի հոր հարբեցողությունը, ի՞նչպես կներեն, եթե իմանան, որ հարսնացուն ընկնավոր է: Մի վայրկյան Սոնայի մեջ միտք ծագեց պարզապես հայտնել ամեն ինչ Սահարնազին: Թող գնա պատմի նրա ապագա սկեսրին, որ ցավագար է, աստծուց պատժված: Թող միանգամից բանը պարզվի «նշանը» ետ վերցնեն, Սոնան խայտառակվի: Նա պատրաստ էր մինչև անգամ բերանը բանալ և այս բոլորն ասել Սահարնազին, երբ մոր աղերսական հայացքն ընկավ նրա աչքին: Արդյոք, գուշակե՞ց հացթուխը, ինչ է կատարվում իր աղջկա սրտում, թե՞ դա միայն աննպատակ հայացք էր, բայց Սոնայի լեզուն կաշկանդվեց:

Նույն միջոցին պառավ Ջառնիշանն ու Գյուլնազն աշխատում էին Մուրադին համոզել, որ քանի ուշ չէ, ձեռք քաշի իր հարսնացվից:

— Մայրը հացթուխ, հայրը հարբեցող, աղքատ, տկլոր, կեղտոտ, ի՞նչ ես կպել այդ աղջկանը, — ասում էր «չորաթան» Ջառնիշանը:

— Լավ պտուղ չի լինիլ այնպիսի ծնողների զավակը, — կրկնում էր Գյուլնազը:

— Լավ է, թե վատ, կաղ է, կույր, թե թևը կտրած, իմ հարսնացուն է, պիտի պսակվեմ, ես ուրիշ աղջիկ չեմ ուզում, — պատասխանում էր Մուրադը դրական եղանակով:

Կանայք ստիպվեցին լռել. գիտեին, որ ապարդյուն է դիմադրել Մուրադի կամքին: Նա իր ասածի մարդ է, մի անգամ վճռել է, պետք է կատարի, թեկուզ ամբողջ ընտանիքը նրա դեմ ոտքի կանգնի և թշնամանա: Իսկ երկար հակառակվել Մուրադին՝ նրանք վտանգավոր էին համարում: Նա տան «սյունն» էր. եթե բարկացնեին, կբաժանվեր եղբորից և առանձին կապրեր:

Հասավ, վերջապես, հարսանիքի օրը: Հացթուխը հրավիրեց միայն ամենամոտիկ ազգականներին, որոնցից ոչ մեկի հետ նա մինչև այժմ հարաբերություն չէր ունեցել: Նա ուզում էր, որ հարսանիքը որքան կարելի է անշուք անցնի, ոչ ոքի ուշադրությունը չգրավի: Ընդհակառակը, պայտագործը պնդում էր, թե պետք է հրավիրել քաղաքի «պատվավոր» ընտանիքներին, թեև ինքն էլ չգիտեր, որտեղ պետք է նստեցնի, եթե հրավիրի: Հաղթությունն այս անգամ հացթուխի կողմը մնաց, երբ պայտագործը համոզվեց, որ շատ հյուրեր

կանչելը մեծ ծախս է պահանջում, իսկ ծախսերի համար փող չկա: Բայց նախքան հարցի վճռելը, ամուսինների մեջ դարձյալ տեղի ունեցավ մի անախորժ վեճ, դարձյալ պայտագործն ուզեց կնոջը հարվածել և դարձյալ Սոնան արտասուքն աչքերին մեջ ընկավ ու նրանց բաժանեց:

Արդյոք, ճշմարի՞տ է, որ հարսանիքի օրն ուրախություն է բերում: Ո՛չ, երևի, այդպես չի, սուտ են ասում: Ինչո՞ւ Սոնայի համար այդ օրը դարձավ սուր տանջանքների, գաղտնի հառաչանքների, հարյուրավոր չար կասկածների և սարսափների շղթա:

Ահա նա: Կանգնած է մի անկյունում, որ բաժանված է վարագուրով խրճիթի մյուս մասից: Երկու երիտասարդ հարսներ հագցնում են նրան պսակի զգեստ: Նա չգիտե ինչ է կատարվում իր շուրջը, միայն լսում է, որ այսօր հարսանիք է: Նա դողում է, կարմրում, գունատվում, նրա ամբողջ մարմինը մերթ զգում է սառույցի պաղություն, մերթ կրակի տաքություն:

Նա ինքն իրան լիովին հանձնել է ուրիշների կամքին և անշունչ մեքենայի պես կատարում է այն բոլորը, ինչ որ ուրիշներն են կամենում: Կյանքում նա հինա չէր գործածել. երկու շաբաթ էր արդեն նրա գլուխը ստեպ-ստեպ ներկում էին: Նրա գանգուր և շքեղ մազերի գեղեցիկ մուգ ոսկեգույնը, քաղաքի սովորության համեմատ, տգեղ են համարել և աշխատել են սևացնել: Եվ այժմ նրա դեմքի դեղնությունն ավելի է աչքի ընկնում մազերի սևությունից: Հայելի են տալիս նայելու, և նա ինքն իրան չի ճանաչում:

— Ի՜ֆ, թուրքի աղջկա եմ նման, — ասում է նա ժպտալով:

Բայց ո՜րքան թույլ է այդ ժպիտը և ի՜նչպես սազ չի գալիս նրա դեմքի մռայլությանը: Նրան հրամայում են թույլ տալ մի ինչ-որ պառավ թրքուհու, որ նրա դեմքը «գեղեցկացնի»: Մի փոքրիկ մկրատի ծայրով թրքուհին մեկ-մեկ պոկում է նրա գեղեցիկ ունքերի ավելորդ համարած մազերը, սուրմայում է արտևանունքը, ոլորում է վարսերը: Հետո նրան հրամայում են կանգնել, երեսը ծածկում են քողով, գլխին չարսավ են ձգում: Ապա նրան նստեցնում են, նորից հրամայում են կանգնել, նորից նստել: Այնուհետև նորահարսերը բռնում են նրա թևերից և առաջ են տանում: Նրա աչքերը ծածկված են, ոչինչ չի տեսնում: Նա լսում է միայն նորահարսերի շշնջյունները և կատարում նրանց պատվերները:

Հանկարծ լսվում է քահանայի ձայնը, որին հետևում է տիրացվի ձայնը: Սկսում են երգել: «Պահպանիչը» վերջանում է, լսվում է ամեն կողմից «շնորհավո՜ր լինի, շնորհավոր լինի»: Ապա նա զգում է մի թարմություն: Բաց օդը, թափանցելով քողը, զովացնում է նրա երեսը: Նրան տանում են առաջ: Ո՞ւր: Այժմ մեկը քայլում է նրա հետ կից առ կից: Ո՞վ է: Սառն օդը մի փոքր սթափեցնում է նրան: Զգում է, որ կից առ կից գնացողը շուտով իր գլխի տերն է դառնալու:

Լսվում է զուռնայի սուր ձայնը: Աա՛, այդ է, ուրեմն այն ձայնը, որ նա քանի-քանի անգամ լսել է հայրական խրճիթի գավթում, հեռվից: Ինչո՞ւ այսօր այնպես ուրախ չի հնչում, ինչպես նրա ընկերուհիների հարսանիքին: Ինչո՞ւ Սոնային թվում է, որ իրան թաղելու են տանում: Ո՞րտեղ է նրա խեղճ մայրը, ինչո՞ւ իր աղջկանը թողել է մեն–մենակ, օտարների ձեռքում...

Ահա, վերջապես, եկեղեցումն է: Նախ լսվում են ինչ-որ խուլ շշնջյուններ, որ նրա մարմինը ծակծկում են սուր ասեղների պես: Քահանայի և տիրացուների

ձայները, կարծես, գալիս են գետնի տակից, մի մթին անդունդի հատակից: Նրա աչքի առջևով անցնում են սոսկալի տեսարաններ, գերեզմաններ, ուր տարածված են շղթայակապ դիակներ, դագաղներ, որոնք լցված են խոշոր որդներով, օձեր, որ ահագին բազմությամբ խլրտում են օդի մեջ: Այդ ինչ սարսափելի ձայներ են, ինչո՞ւ Սոնային բերեցին այստեղ, ի՞նչ են անում, այդ ո՞վ է նրա կողքին կանգնած, ինչո՞ւ են նրան անդադար բոթում: Այդ Ի՞նչ սառը ձեռ էր, որ բռնեց իր ձեռից և դրեց մի ուրիշ ձեռի մեջ: Ինչո՞ւ են սեղմում նրա ձեռը: Դարձյա՛լ սոսկալի տեսարաններ. որդներով լի գանգեր, արյունով լի դույլեր, քայլող կմախքներ, ծիծաղող դիակներ...

— Որդի, հնազա՞նդ ես:

Մեկը ձեռը դնում է նրա պարանոցին, երեք անգամ սեղմում և երեք անգամ գլուխը թեքում դեպի կուրծքը: Հետո նրան առաջ են տանում և վզին մի ինչ-որ թել ձգում, նորից հանում: Ապա նրա երեսը դարձնում են մյուս կողմ: Ժամերգությունը ընդհատվում է, նորից սկսվում են խուլ շշնջյուններ: Այս անգամ շշնջյունները չեն ծակծկում Սոնայի մարմինը: Դարձյալ սկսվում է մի երկար, անվերջ ճանապարհորդություն, որին ուղեկցում է զուռնայի զիլ ձայնը և մարդկանց գոռում ու գոչյունները:

Հետզհետե նա ուշքի է գալիս: Այժմ հասկանում է, որ ամեն ինչ վերջացավ, այլևս չպիտի վերադառնա իր ծնողների խրճիթը: Ա՛խ, այն ողորմելի խրճիթը, ուր այնքան տառապել է: Այժմ նա չի հիշում այդ տառապանքները և սրտի կսկիծով է բաժանվում իր ծննդավայրից:

Ահա այն տունը, ուր նա պիտի ապրի մինչև մահ: Նմա՞ն է արդյոք իր հայրենի խրճիթին: Նա ոչինչ չի տեսնում. երեսի քողը խանգարում է: Բայց ո՞ւր է մայրը: Կանչեցե՛ք նրան, Սոնայի սիրտը մորմոքվում է այս անծանոթ շրջանում: Քողը հանդարտիկ շարժվում է, նրա տակից լսվում է նորահարսի հեկեկանքը:

Ոչինչ, դա մի նորություն չի: Բոլոր նորապսակները լալիս են, ա՛յո, իհարկե, ուրախությունից: Եվ ինչո՞ւ չպիտի ուրախանա Սոնան: Մի խեղճ հացթուխի ու մի արբշիռ, կեղտոտ պայտագործի աղջիկ, և հանկարծ այդպիսի ամուսի՛ն: Հարուստ տուն ու տեղ, աջող առուտուր, տղան երիտասարդ, խելոք, գեղեցիկ: Իսկ ինքը, նորահարսը, ի՞նչ է բերում հետը: — Մի ձեռք հագուստ: Ճշմարիտ, այդ բախտ ասված բանը իսկի աչքեր չունի, պտույտ է գալիս, պտույտ և հանկարծ փաթաթվում մի հացթուխի աղջկա վզին:

Այսպես էին մտածում և այս մասին էին քչփչում կանայք, մանավանդ Սոնայի մանկության ընկերուհիները: Օ՜օ, հիշում են նրանք այդ նորահարսին: Նա մի լալկան և վախկոտ աղջիկ էր, միայն լավ վազել գիտեր: Ոտաբաց, գլխաբաց կվազվզեր փողոցներում:

— Միտս է, միտս է, ջհուդի մազերով աղջիկ էր, — գոչեց Բարղամանց Մարջանը:

— Ամեն օր փափուկ հաց էր ուտում, — ավելացրեց Միսկարանց Ձառվարդը:

— Մայրը սրա ու նրա համար հաց էր թխում, կուտեր, բաս ինչ, — մեջ մտավ Ծավալյանց խորամանկ Հռուսիկը:

Մի որպե խոսակցությունը ընդհատվեց: Խոսակիցները մեկ-մեկ մոտեցան նորահարսին շնորհավորելու և հերթով, քողը բարձրացնելով, նայեցին նրա երեսին: Սևիկ Մարգարիտը, հանկարծ մի բան մտաբերելով, դարձավ իր ընկերուհիներին.

— Աղջի, միտնե՞րդ է այն օրը:

— Ի՞նչ օր, ի՞նչ օր, — կրկնեցին ամենը հետաքրքրված:

— Այն օրն է՛է, որ Սոնան, մեզ հետ խաղ անելիս, լափաշվեց հողի վրա ու կապտեց:

— Հա՛ա, գիժ-Դանելն էլ եկավ վերցրեց, տուն տարավ:

— Իսկի չիմացանք, ի՞նչ պատահեց այդ աղջկան:

— Էլ այն օրից երեսը չտեսանք:

Դարձյալ խոսակցությունը ընդհատվեց: Խոսողները սկսեցին ծափահարել նորափեսայի մեծ քրոջը, որ, մեջտեղ ընկած պարում էր, «մինթանայի» փեշերն օդի մեջ ֆրֆրացնելով:

— Ասում են, որ է՛հ... սկսեց դարձյալ Սևիկ Մարգարիտը և խոսքն իսկույն կուլ տվեց…

— Ի՞նչ են ասում, ի՞նչ են ասում:

— Ես ինչ գիտեմ, մեղքը ասողի վզին, ասում են, որ Սոնայի այս տեղը դրուստ չէ…

Նա մատով խփեց ճակատին:

— Ախար, ես էլ ասում եմ, մի բան պետք է լինի, մի բան պետք է լինի...

— Իսկի խելք չկա, է՛է, իսկի:

Մի քանի վայրկյան ամենը հեգնաբար և ցավակցությամբ նայեցին նորահարսի կողմը:

— Բաս ասա «չորաթան» Զառնիշանի աչքը լույս էլի, խոմ աշխարհը տակնուվրա կանի, եթե հարսի խելքը տեղը չի, — ասաց Բարղամանց Մարջանը:

— Աստված ազատի նրա ձեռից, սաթայել է, — ավելացրեց խորամանկ Հռուսիկը:

— Պակասը նրա մեծ հարսն է՞, Գյուլնազը, — մեջ մտավ Միսկարանց Զառվարդը — կուտեն խեղճին, կուտեն:

— Է՛հ ինչ եք խոսում, չեմ իմանում, գիժը գժին կգտնի էլի, — խոսեց դարձյալ սևիկ Մարգարիտը. — իրանց Դանելը խոմ նրանից լավ չի:

— Հա, լավ ասացիր, Դանելը այսօր խնամի է: Տեսա՞ ր, ինչպես ժամից զալիս մաշալա էր պահել հարսի առաջ, ուրախ-ուրախ թռչկոտում էր ու հուռռա, հուռռա կանչում:

— Ընկեր է գտել...

Արդարև, եթե կար այդ երեկո պայտագործից հետո մի մարդ, որ ամբողջ հոգով ուրախ էր — դա խենթն էր: Հակառակ իր ազգականների ցանկության, նա ոչ միայն հարսանիքի հանդեսին մասնակցեց, այլև ինքն իրանից կարգադրություններ էր անում: Նա ընթանում էր ամենից առաջ, ճանապարհ բանալով նորապսակների համար, երգելով, պարելով և զուռնաչիներին զանազան եղանակներ պատվիրելով: Այժմ ոտաբաց, գլխաբաց չէր և ոչ էլ կեղտոտ ու կիսամերկ: Նա հագել էր Սոնայի կարած նոր արխալուղը, հյուսած գուլպաները, գլխին դրել էր մի սև մորթյա և կիսով չափ ցեցից մաշված գտակ: Պարծանքով ամենին ցույց էր տալիս արխալուղը և գուլպաները, ասելով, թե նորահարսն է կարել և հյուսել իր համար: Այդ երեկո նա, իր ասելով, երկու հարսանիք ուներ, մեկ որ նրա եղբորորդի Մուրադն է պսակվում, մեկ էլ «խաթուն Սոնան» է մարդու գնում:

— Ուխտ եմ արել նրանց հարսանիքի մաշալան տանելու, տվեք ինձ, — ասաց նա, նավթային ջահը խլելով մի մշակի ձեռից:

Եվ եկեղեցուց մինչև նորափեսայի տունը խենթը ձեռից բաց չթողեց այդ ջահը...

VII

Կիսավեր քաղաքի հասարակության մեջ հացթուխի խնամիները համարվում էին ունևոր: Քսանուհինգ տարի առաջ այդ ընտանիքը մի մոտակա գյուղից գաղթեց և մշտապես հաստատվեց այդ քաղաքում:

Այն ժամանակ ընտանիքի գլուխը Սոնայի ամուսնու հայրն էր — հանգուցյալ Սարգիսը: Նրա ավագ որդին «չոփուռ» կոչված Կարապետը դեռ ամուսնացած չէր, իսկ Մուրադը տակավին երկու տարեկան երեխա էր: Սարգսից հետո ընտանիքի մեջ երկրորդ տեղն էր բռնում նրա փոքր եղբայր Դանելը: Այժմյան խենթը մի համեստ ու աշխատասեր դերձակ էր և վայելում էր իր արհեստակիցների շրջանում պատիվ ու հարգանք: Տասը տարեկան հասակում նա, առաջինը քաղաք գալով, մտել էր աշակերտ մի դերձակի մոտ և այժմ արդեն վարպետ էր: Միևնույն ժամանակ, իր եղբոր հետ միասին պարապում էր առևտուրով: Նրանք գյուղերում գնում էին գինի, ընկույզ և ուրիշ մթերքներ, վաճառում էին քաղաքացիներին: Չնայելով առևտրի հաջողության, Դանելը չէր ուզում իր արհեստից ձեռք վերցնել և միշտ ասում էր.

— Իմ ասեղը միլիոնով չեմ ծախիլ:

Նա ամուսնացած էր իր նախկին վարպետի դստեր հետ, ուներ երեք տարեկան մի աղջիկ: Վերին աստիճանի ընտանեսեր մարդ էր, փայփայում էր կնոջն ու աղջկան այնպես, ինչպես կարող էր փայփայել մի խաղաղասեր արհեստավոր, որի գոյության նեցուկը ընտանիքն է: Այդ տգետ շինականի մեջ բռնակալական ոգու նշույլ անգամ չէր երևում: Նրա սրտի մեղմությունն երբեմն հասնում էր

թուլության, մանավանդ իր զավակի վերաբերմամբ: Հաճախ, համբուրելով իր աղջկան, ասում էր.

— Տեր աստված, կա՞ աշխարհիս երեսին երեխայից քաղցր բան...

Աստված ասաց — չկա, և մի օր Դանելի աղջկան զոհ դարձրեց ծաղիկ հիվանդության: Կորուստը հոր վրա սաստիկ ազդեց: Ամբողջ մի տարի Դանելի դեմքի վրա ժպիտ չէր երևում: Երկրորդ տարին աստված նրան կրկին մի սիրուն աղջիկ պարգևեց: Բայց նրա առաջին վերքը դեռ չէր բժշկվել, երբ ստացավ երկրորդ և ավելի խոր մի վերք: Մի օր նրա կինը, ջուրը քաշելիս, հանկարծ սայթաքեց և գլխիվայր ընկավ ջրհորի մեջ: Նրա գլուխը դիպել էր քարե պատերին և ջախջախել:

Երկու օր տանջվելուց հետո նա հոգին ավանդեց:

Այս անգամ կորուստը Դանելի հոգու մեջ առաջացրեց հեղաշրջում: Մի քանի ամիս շարունակ գաղտնի լալիս էր և ամեն օր այցելում իր կնոջ գերեզմանը: Հետո նրան տիրեց ծանր թախիծ: Ուրվականի պես շրջում էր տան գավթում օր ու գիշեր, ուտում էր շատ քիչ, աշխատում էր մեքենաբար, խոսում էր, երբ միայն խոսեցնում էին: Միակ բանը, որ նրան հետաքրքրում էր, աղջիկն էր, որ, օր-օրի վրա մեծանալով, նմանվում էր իր մորը: Նա դնում էր փոքրիկին իր ծնկների վրա, շոյշոյում էր թաթիկները և երկար, երկար ժամանակ նայում պայծառ աչիկներին, որ մի զույգ մայիսյան ցողեր էին հիշեցնում: Հակառակ իր շրջանի մարդկանց, Դանելը երբեք չէր ափսոսում, որ աստված նրան աղջիկ է պարգևել և ոչ տղա: Նա ավելի ուրախ էր այդ բանին և կարծում էր, որ աղջիկն ավելի է սփոփում իր սիրատը, քան կարող էր սփոփել արու զավակը:

Հետզհետե նրա վիշտը սկսեց ամոքվել: Նրա դեմքի վրա երևաց ժպիտ: Բայց ճակատագիրը ներհակ էր այդ մարդու բախտին: Արդեն նրա աղջիկը յոթ տարեկան էր, երբ մի օր տեղի ունեցավ մի ողբալի անցք:

Մայիսի սկիզբն էր, մի պայծառ և սիրուն օր: Որքան գեղեցիկ էր բնությունը, այնքան անողոք դարձավ աղքատիկ քաղաքի բնակիչների համար: Մարդիկ, առանց գուշակելու իրանց գլխին գալիքը, զբաղված էին առօրյա մանր-մունր հոգսերով, երբ լսվեց մի ստորերկրյա որոտ: Կենդանիները սկսեցին մռնչել, երկիրը ուժգնաբար երերվեց, քաղաքը կորավ թանձր փոշիի մեջ: Քար քարի վրա չէր մնում: Ամեն ինչ ճարճատվում էր, խորտակվում, դղրդում և թափվում: Քանի մի վայրկյան առաջ շեն քաղաքը սոսկալի երկրաշարժից դարձավ ավերակների մի կույտ, և բնակիչները թափվեցին փողոցները:

Այդ միջոցին դերձակ Դանելը իր դազգահի մոտ նստած կար էր անում: Ամենից առաջ, հարկավ, նա հիշեց իր աղջկան, թողեց խանութը բաց և ոտաբոբիկ, գլխաբաց վազեց տուն: Երբ բակը մտավ, ականջին հասան լացի ձայներ: Մի խումբ կանայք շրջապատել էին, մի հողային բլուր: Ճանապարհ տվեցին Դանելին: Նա առաջ վազեց, և այն, ինչ որ տեսավ, առ միշտ խորտակեց նրա կյանքը…

Հողային բլրակի վրա երեսնիվեր ընկած էր նրա յոթ տարեկան զավակը: Հինգ րոպե չկար դուրս էին բերել նրան քարերի և հողի տակից: Մի կոճղ ընկել էր նրա կրծքի վրա և ջախջախել: Դեմքն անվնաս էր: Արևը լուսավորում էր նրա գունատ ճակատը: Շքեղ և գանգուր մազերը, սփռվելով այդ ճակատի շուրջը, կազմել էին մի շրջանակ: Դա նրա մահվան պսակն էր...

Մի շաբաթվա նորահարս էր Սոնան, երբ իր ամուսնու սենյակի լուսամուտի առջև նստած, լսում էր այս բոլորը: Պատմողը նրա ամուսնու մեծ քույրն էր, Նարգիզը, որ զինագործի կին էր: Այդ կինը, որ դեմքով և բնավորությամբ նման էր Մուրադին, բոլոր ազգականների մեջ ամենից շուտ և ամենից ավելի մտերմացավ նորահարսին:

— Աստված է իմանում ինչ պատահեց այդ մարդուն, — շարունակեց Նարգիզը, — հենց որ տեսավ իր աղջկան: Նա ոչինչ չխոսեց, ձայն ու ծպտուն չհանեց, չհառաչեց մինչև անգամ: Նա մտիկ արավ մեր երեսին, աչքերը չռած, հետո մտիկ արավ աղջկա երեսին: Միտս չի ինչքան ժամանակ նա մնաց սառած, քարացած: Մեկ էլ լսեցինք մի ձայն. մի ձայն, որ կասեիր գայլ է մռնչում: Դանելը ընկավ աղջկա պաղած մարմնի վրա և մինչև երեկո մնաց այնպես: Ոչ ոք չուզեց նրան բաժանել դիակից: Չէր էլ կարելի բաժանել, այնքան խեղճը պինդ էր կպել աղջկա մարմնին...

Ուշքի գալով, Դանելը սկսում է բարձրաձայն ծիծաղել, երկու ձեռները զարկելով կրծքին:

Մյուս օրը տանում են նրա աղջկանը թաղելու: Դանելը գնում է դագաղի հետևից ոտաբաց, գլխաբաց:

Այն օրից հետո մենք նրա գլխին գդակ, ոտներին կոշիկ չենք տեսնում, — ավելացրեց Նարգիզը, հառաչելով: — Սպասիր, սպասիր, ի՞նչ պատահեց...

Խոսքն ընդհատելով, Նարգիզը զարմացած նայեց Սոնայի երեսին և հանկարծ գոչեց.

— Միտս է, միտս է, հարսանիքիդ երեկո նա գդակ ու կոշիկներ էր հագել, զարմանալի է, զարմանալի...

Արդարև, շատերը զարմացան այդ երեկո, երբ տեսան Դանելի գլխին գդակ, ոտներին կոշիկներ: Աղջկա մահից հետո առաջին անգամն էր, որ նա հագնվեց մարդավարի:

Նա մոռացավ իր խանութը: Տնից տուն թափառելով, երբեմն կանգնում էր այս կամ այն փլատակների վրա և, մերկ ոտները քարերին զարկելով, կրկնում էր.

— Մանիշակս, Մանիշակս...

Գործ դրվեցին տեղական բոլոր հաքիմների դեղերը, բոլոր հմայիչների անեծքները, բոլոր կախարդական բույսերը — ոչինչ չօգնեց: Եղբայրը ծախեց Դանելի խանութի ապրանքը և նրա կնոջ ու զավակների գերեզմանների վրա քարեր գցել տվեց: Ամեն օր Դանելն այցելում էր այդ շիրիմները, և երբ նա քաղաքի շուկայով դիմում էր դեպի գերեզմանատուն, ամենքն ասում էին.

— Գիժ-Դանելը գնում է...

Նարգիզի պատմությունը կսկծեցրեց Սոնայի սիրտը: Նա չկարողացավ իրան զսպել և արտասվեց: Այսպես, ուրեմն, ահա թե ինչ է նշանակում Դանելի համար Մանիշակ անունը, որ այնպես շուտ-շուտ արտասանում է:

— Խե՜ղճ Դանել ապեր, խե՜ղճ Դանել ապեր, — կրկնեց նորահարսը, աչքերի արտասուքը սրբելով:

— Սոնա ջան, ինչպես տեսնում եմ, լավ սիրտ ունիս, լաց ես լինում, — ասաց Նարգիզը, համբուրելով եղբոր հարսին:

Նա չգիտեր, ինչ էր անցնում այդ միջոցին նորահարսի սրտով: Սոնան հիշում էր իր մոր պատմությունն այն օրվա մասին, երբ Դանելը նրան փողոցից վերցրել էր և տուն բերել: Այն ժամանակ նա յոթը տարեկան է եղել — ճիշտ այն հասակում, երբ Մանիշակը մնացել է քարերի ու հողի տակ: Նա ընկած է եղել հողային բլրակի վրա այնպես, ինչպես Մանիշակն արևի տակ — երեսնիվեր, մազերը գլխի շուրջը թափված: Անբախտ հայրը, տեսնելով նրան, հիշել է իր հարազատ աղջկանը, գրկել է ընկնավորին, տուն բերել: Այստեղից է սկսվել նրա համակրանքը դեպի մի անծանոթ աղջիկ և նրա թշվառ մայրը: Ուրեմն խենթը Սոնային տեսնելով, մտաբերում է իր Մանիշակին և, ով գիտե, մխիթարվում էլ է:

— Ես նրան սիրում եմ. օրիցս դենը տասնապատիկ կսիրեմ, Նարգիզ բաջի: Ասա նրան, որ ամեն օր գա, ես ուզում եմ նրան շուտ-շուտ տեսնել:

— Նա այս տնից փախչում է, — պատասխանեց Նարգիզը: — Ա՛յ, տեսնո՞ւմ ես այն ծառը. նրանից մի քիչ հեռու էր ընկած Մանիշակը, այնտեղ էր մեր հին տունը: Տարենը մի քանի անգամ կանգնում է այն ծառի տակ, փայտը կրծքին բռնում, գլուխը բարձրացնում ու երգում: Առաջ շատ քիչ-քիչ էր գալիս, հիմա էլի շաբաթը մի անգամ երևում է...էլի լա՞ց ես լինում, Սոնա. չէ, լավ սիրտ ունիս, շատ լավ սիրտ ունիս...

— Ես կուզենայի նրան մի բանով մխիթարել, անբախտը անբախտի ցավը կհասկանա...

Սոնան ընդհատեց խոսքը: Նա զգաց, որ շատ հեռու է գնում: Նարգիզը կարող է նրա խոսքերից մի բան հասկանալ: Իսկ Սոնան սոսկում էր այդ բանից, որ տակավին գաղտնիք էր նրա ամուսնու և ազգականների համար: Այնինչ օր-օրի վրա լարված ջղերով սպասում էր սարսափելի ճգնաժամին, ինչպես կախաղանին դատապարտվածը իր կյանքի վերջին րոպեին:

Հարսանիքի առաջին երեք օրերը անցան Սոնայի համար մի տեսակ մառախուղի մեջ: Տպավորությունները անծանոթ էին և բազմակողմանի: Նա չէր կարողանում կարգի բերել նրանց և հասկանալ, ինչ է զգում կյանքի անծանոթ շրջանում: Նա դեռ երազի մեջ էր, և այդ երազն արճիճի պես ճնշում էր նրա սիրտը:

Անցան այդ երեք օրերը, վերջացավ հարսանիքի հանդեսը, դադարեցին հյուրերի այցելությունները: Այն ժամանակ միայն Սոնայի մտքերը սկսեցին պարզվել: Չորրորդ օրը հարսանիքի քողը հանեցին նրա երեսից: Այդ քողի հետ ընկավ և նրա հոգու վարագույրը… Ամուսնական կյանքի և կնոջ կոչման ամենատարրական, բայց և ամենանուրբ գաղտնիքը լուծվեց նրա համար: Նույն օրն առավոտ, առանձնացած իր ննջարանում, երկար և երկար ժամանակ հեկեկաց: Նա ոչ ոքի չէր ուզում տեսնել: Սկեսրի համբույրն այրում էր նրա շրթունքները: Իսկ ամուսնու երեսին նայել չէր ուզում, զզվում էր անգամ նրանից: Մարդիկ նրան թվում էին անբան անասուններ, որոնց համար չկար ամոթի զգացում: Բայց որքա՜ն խոր էր այդ զգացումը նրա սրտում և ի՜նչպես տառապում

էր, հիշելով իր մոտիկ անցյալը և համեմատելով ներկայի հետ: Գնաց, անհետացավ այդ անցյալը, և այժմ, կարծես, ննջարանի պատերն անգամ ծաղրում են իրան:

Երբ նա տեսավ իր մորը — իսկ այդ օրը տեսավ սովորականից ավելի վաղ — փաթաթվեց պարանոցին, գլուխը սեղմեց կրծքին և նորից սկսեց հեկեկալ: Նա ամոթից չէր համարձակվում նայել հարազատ ծնողի երեսին և, միևնույն ժամանակ, զգում էր դեպի նա մի անբացատրելի ատելություն: Ինչո՞ւ այդպես վատ վարվեցին նրա հետ: Ինչո՞ ւ, ինչո՞ւ: Ախ, Սոնան ավելի բախտավոր էր իր ծնողների խրճիթում, անհամեմատ բախտավոր: Զգո՞ւմ է արդյոք նրա մայրը իր արած սխալը: Սոնան գլուխը բարձրացրեց և մի վայրկյան նայեց մոր երեսին, սպասելով այնտեղ կարդալ ցավակցություն: Բայց, զարմանալի բան, հացթուխը ոչ միայն չէր զգում, այլև այդ օրը ուրախ էր ավելի, քան երբևէ: Ի՞նչ, մի՞թե հարազատ աղջկա ամոթը երջանկացնում է նրան:

— Թող այսօրվա բախտավոր օրով, — ասաց հացթուխը, համբուրելով Սոնայի երեսը, աչքերը, շրթունքները, — աստված վերջ տա մեր ցավերին: Թող օրհնվի ճակատիդ գիրը, չարը կալին-կապին ընկնի, բարին պահպանի քեզ էլ, մարդուդ էլ: Տարիներով տանջվեցի, հիմա բախտավոր եմ: Տեր աստված, տեր աստված, թող լույս աչքով տեսնեմ այն օրը, որ աղջիկս կարողանա իր մարդու ու ազգականների երեսին մտիկ անել պարզերես, ինչպես նա այսօրվա օրն է պարզերես...

Սոնան զարմացած նայում էր մոր երեսին: Ինչո՞ւ է այդ կինը ուրախ:

— Հա, որդի, — շարունակեց հացթուխը, պատասխանելով նրա անլուր հարցին, — աստծու տվածի չափ ուրախ եմ այսօր, հույս ամենակարողին, որ էլ ավելի ուրախանամ: Երկու երազ եմ տեսել, մեկը կատարվեց, մյուսն էլ կկատարվի... Դու լաց ես լինում, Է՛է, ես էլ շատ եմ լաց եղել երեսիս քողը հանելիս... Կսովորես, որդի, կտեսնես, որ աշխարհում ապրելը լավ բան է... քո մարդը իմ մարդու նման սևերես չէ: Ես անբախտ էի, դու բախտավոր կլինես, եթե աստված ուզենա...

Իսկապես Սոնան հասկանում էր իր մոր խոսքերի քողարկված իմաստը: Չէր հասկանում միայն, ի՞նչպես կարող է ինքը բախտավոր լինել, քանի որ չի ուզում իր ամուսնու երեսին անգամ նայել:

Սակայն անցավ ժամանակ, և այդ խնդիրն էլ սկսեց նրա համար պարզվել: Նա հետզհետե ընտելանում էր իր վիճակին: Կյանքը գնալով քաղցրանում էր: Անցնում էր նրա անբացատրելի երկյուղն ամուսնուց, ծագում էր նրա սրտում մի անսովոր ախորժելի զգացում: Վերջապես, տեսավ, որ ամուսինը կոպիտ անասուն չէ: Ոչ, ընդհակառակը, բարեսիրտ և քաղցրաբարո մի բարեկամ է, որ ուզում է նրան երջանկացնել: Նա Սոնայի հետ վարվում էր ինչպես մի նոր բուսած նուրբ ու անգին ծաղկի հետ, վախենալով շոշափել նրան, մի գուցե քնքուշ տերևները թափվեն: Նայում էր նրան ոտից գլուխ, լուռ ժպտալով և սքանչանում այնպես, ինչպես կարող էր սքանչանալ մի մանուկ, որի ձեռն են տվել, վերջապես, նրա սիրած խաղալիքը: Նա չգիտեր խոսքերով արտահայտել իր սերը: Բայց ակնածությամբ և գուրգուրանքով լի հայացքները զգալ էին տալիս Սոնային, որ այդ մարդն իրան երջանիկ է համարում:

Սոնայի սիրտը բաբախում էր այդ հայացքներից: Դա ամուսնական սիրո անդրանիկ սերմն էր, որ արդեն սկսել էր արագ-արագ աճել, զարգանալ, որովհետև ընկել էր պարարտ և կարոտ հողի վրա: Այժմ ամուսնու փաղաքշանքները ո՛չ միայն չէին վախեցնում նրան, այլև հաճելի էին թվում: Շատ անգամ նա ինքն էր զգում փաղաքշելու պահանջ: Բայց ամոթխածությունը կաշկանդում էր նրան: Նա չէր համարձակվում իր սրտի զգացումն արտահայտել ոչ մի արտաքին ձևով:

Երբեմն հիշում էր այն մոտիկ անցյալը, երբ մահ էր աղերսում աստծուց և սարսափում էր: Ինչո՞ւ այս ծաղիկ հասակում աշխարհից բաժանվել, քանի որ կյանքն այսքան քաղցր է: Ա՛խ, նրա մայրը զուր չէ ասում, թե կարող է երջանիկ լինել: Սոնան հիմա է հասկանում նրա խոսքերի միտքը: Այժմ այն չէ, ինչ որ հարսանիքի առաջին օրերն էր:

Բայց կա էլի մի չար կասկած, որ Սոնային անհանգստացնում է: Ասենք, նա սիրում է իր ամուսնուն, իսկ ինքը իրավունք ունի՞ սիրվելու:

«Չէ, չէ, — պատասխանում էր նա ինքն իրան, — ես անարժան եմ. ես ընկնավոր եմ, նա չի իմանում, շուտով կիմանա»...

Ո՛վ գիտե, կարելի է Մուրադին հենց այժմ էլ հայտնի է նրա ցավը, կարելի է Սոնան արդեն ընկել է նրա առջև: Չէ՞ որ նա երբեք չի զգում իր ընկնելը: Եվ ստեպ-ստեպ երկյուղածությամբ նայում էր իր ամուսնու աչքերին, հուսալով այնտեղ կարդալ նրա միտքը: Մի օր, երբ Մուրադը քնքշաբար կատակով իր մատի ծայրով շոշափեց Սոնայի ծնոտը, նորահարսը բռնեց նրա ձեռը երկու ձեռներով, ամուր սեղմեց իր ափերի մեջ և, խոր-խոր նայելով նրա աչքերին, ժպտաց: Նա պատրաստ էր բերանը բանալ և հարցնել. «Գիտե՞ս, որ ես ցավագար եմ». բայց նույն վայրկյանին ցնցվեց, և հարցը խեղդվեց կոկորդում: Մինչդեռ նորափեսայի դեմքը սքողված էր հոգեկան երջանկության ստվերով: Նրա աչքերի մեջ փայլում էր սիրո և միայն սիրո կրակը: Այդ մարդը, որ ծնված էր ընտանեկան կյանքի համար, բնավորությամբ հիշեցնում էր իր հորեղբորը, Դանելին: Ո՛չ այժմյան խենթին, այլ նախկին Դանելին, որի ստվերն էր այժմ շրջում աշխարհի վրա: Նա պարծենում էր իր կնոջով և շատ անգամ մոր և եղբոր կնոջ մոտ գովում էր նրա հեզությունն ու գեղեցկությունը: Նա պնդում էր, թե հազիվ ամբողջ քաղաքում Սոնայի պես մի ուրիշ կին ճարեր, եթե բախտի բերմամբ չհանդիպեր նրան:

— Ի՛նչ անենք, որ ծնողները աղքատ են, — ասում էր, — դա ամոթ բան չէ: Թող ի՛նքն ինձ դուր գա, ուրիշ բան չեմ ուզում: Գոհություն աստծո, շատ ու շատ շնորհակալ եմ իմ բախտից:

— Տա աստված, որդի, մենք խոմ քո թշնամիները չենք, որ վատդ ուզենք, — պատասխանում էր պառավ Զառնիշանը, որ տակավին չէր հաշտվում այն մտքի հետ, թե մի հացթուխի, մի պայտագործի աղջիկ կարող է իր որդուն բախտավորացնել:

Այնինչ Գյուլնազը ոչինչ չէր ասում, միայն գլուխը երկդիմի շարժում էր: Այդ նշանակում էր. «Դեռ սպասենք և տեսնենք»:

Այդ կինը հոգով-սրտով ցանկանում էր Սոնայի մեջ մի որևէ արատ գտնել, ոչ միայն իր բնազդական կասկածն արդարացնելու համար, այլև այն պատճառով, որ նախանձում էր նորահարսի երիտասարդությանը և գեղեցկությանը: Իբրև

ավագ հարս, ընտանիքի մեջ ավելի մեծ իրավունք ուներ, բայց գիտեր, եթե Սոնան գրավի իր սկեսրի հավատարմությունը, կարող է իշխող դիրք ստանալ: Առ այժմ նա սկսեց ցույց տալ իր իրավունքները և իշխել Սոնայի գլխին: Նորահարսը խոնարհությամբ լսում էր նրա խրատները, թեև ոչ մի խրատի կարիք չուներ, քանի որ գիտեր իր բոլոր պարտականությունները: Նա չէր ուզում ընդդիմանալ այդ կնոջը, դեպի որը զգում էր մի անբացատրելի երկյուղ, մանավանդ երբ նայում էր նրա ապակյա աչքերին: Նույն երկյուղը Սոնան զգում էր դեպի սկեսուրը, որի ոսկրոտ ճակատի տակ նստած փոքրիկ ու պսպղուն աչքերի մեջ փայլում էր մի առանձին չարախնդություն, երբ պառավը կարող էր նորահարսին նախատել թեկուզ մի աննշան սխալի համար:

Բայց, չնայելով այդ երկու զույգ երկյուղալի աչքերին, որ գիշեր-ցերեկ հալածում էին Սոնային, նա տակավին երջանիկ էր, որովհետև սիրում էր յուր ամուսնուն և սիրվում նրանից: Երբեմն այդ փոխադարձ սիրո գիտակցությունն այնքան տիրում էր նրա հոգուն, որ մոռանում էր անցյալի բոլոր թշվառությունները և անձնատուր լինում երջանիկ հոգեզմայլության: Այդ միջոցներին նրա ճակատը պայծառանում էր, դեմքի գույնը թարմանում, կիսով չափ անրջոտ աչքերի մեջ վառվում էր կենսասիրության հուրը: Նա գեղեցկանում էր, ուրախ, աշխույժ դառնում և այսպիսով ավելի գրգռում Գյուլնազի նախանձն ու ատելությունը:

Մի անգամ Սոնան, լուսամուտի մոտ նստած, սպասում էր ամուսնուն, որ պետք է շուտով վերադառնար շուկայից: Բակից լսվեց գիժ-Դանելի ձայնը: Սոնան գլուխը բարձրացրեց ուրախացած: Վաղուց փափագում էր տեսնել իր բարեկամին:

Խենթը, գավազանն ուսին դրած, մոտենում էր լուսամուտին, ցածր ձայնով երգելով: Դարձյալ նա ոտաբոբիկ էր և գլխաբաց: Գավազանի ծայրը զարդարված էր վայրի ծաղիկների մի մեծ փնջով: Մոտենալով լուսամուտին, խենթն այդ փունջը զգուշաբար բաց արավ գավազանի ծայրից և առաջարկեց Սոնային ասելով.

— Խանում-խաթունիս հազար բարով: Ղըզ-Ղալասիի սարից եմ գալիս, քեզ համար քաղեցի այս ծաղիկները:

Սոնան սիրալիր ժպտալով, ընդունեց փունջը, հոտ քաշեց և ասաց զգացված.

— Ի՞նչ բարի սիրտ ունիս, Դանել ապեր: Ես կդնեմ այս ծաղիկները ջրի մեջ, կպահեմ...

— Մինչև որ կպշկեն, նորերը կբերեմ, — լրացրեց խենթը: — Ամեն կիրակի կգնամ Ղըզ-Ղալասի: Քոլերի մեջ եմ քաղել, սիրուն ծաղիկներ են, հոտ արա, տես...

— Շատ լավ են, շատ լավ են, — ասաց Սոնան, շարունակ հոտոտելով փունջը և մատներով ուղղելով նրա տերևիկները: — Ո՞րտեղ ես մնացել, Դանել ապեր, ինչո՞ւ շուտ-շուտ չես գալիս մեզ մոտ:

Այս հարցը, կարծես, ազդեց խենթի տրամադրության վրա: Նա հայացքը ձգեց բակի խորքը և խորհրդավոր եղանակով արտասանեց.

— Չկա՛...

Հետո, արագությամբ երեսը դարձնելով Սոնային, ասաց.

— Իգիթ տեսա, ձի էր նստած, սիրեցի, կյանքս կտամ թողեք գնամ իմ յարին... Լա՞վ ես, Սոնա խանում, ուրա՞խ ես: Մուրադին հավանո՞ւմ ես...

Սոնան ամոթխածությամբ գլուխը թեքեց կրծքին: Խենթը նայեց աջ ու ձախ, թեքվեց դեպի Սոնան ու ցածր ձայնով շարունակեց.

— Սկեսուրդ քեզ հետ լա՞վ է վարվում, Կարապետի հարսը խոմ չի՞ նեղացնում...

— Չէ, Դանել ապեր, սկեսուրս էլ լավ կնիկ է, Գյուլնազ-բաջին էլ, ամենքն էլ լավ են: Շնորհակալ եմ քո ազգականներից, շատ, շատ շնորհակալ եմ:

— Չխաբե՛ս...

— Ի՞նչ ես ասում, Դանել ապեր, ես քեզ ե՞րբ եմ խաբել:

— Քեֆիդ դիպչողին պատառ-պատառ կանեմ...

Սոնան ժպտաց, հիշելով այն ժամանակները, երբ խենթի այս սպառնալիքներից վախենում էր:

— Դանել ապեր, ինչո՞ւ էլի գլխաբաց ու ոտաբաց ես, — հարցրեց նա հանկարծ:

— Հարսանիքդ տեսա, հերիք է... Եթե քեֆիդ դիպչեն, ի՛նձ ասա, ի՛նձ ասա: Մնաս բարով, գնամ ժամհարիս մոտ...

Նա շտապով դիմեց դեպի դուրս ահագին քայլերով:

Հեռվից լսվում էր նրա խռպոտ ձայնը, որ տարածվելով ամայի փողոցում, մի առանձին մռայլություն էր տալիս արևի վերջին ծիրանագույն շողերով օծված ավերակներին:

Նրա տխուր երգի հնչյունները արձագանք էին գտնում այդ ավերակների մեջ և երիտասարդ նորահարսի սրտում...

VIII

Հացթուխը Սոնային այցելում էր շաբաթը մի կամ երկու անգամ: Պայտագործը գալիս էր գրեթե ամեն օր: Հացթուխը երբեք չէր ընդունում իր խնամիների հրավերը — ճաշի մնալու կամ գոնե մի բաժակ թեյ խմելու: Պայտագործը հենց մի այդպիսի հրավերի էր սպասում: Բավական էր մի երկդիմի ակնարկ — իսկույն ծալապատիկ նստում էր, ահագին գդակը գլխից հանելով և կողքին դնելով: Ահա ինչու նրա այցերը ավելի անախորժ էին խնամիների համար:

Երբեմն Սոնան լսում էր պառավ Զառնիշանի և Գյուլնազի ակնարկներն իր հոր «աներեսության» մասին: Ոչ կարողանում էր պաշտպանել հորը և ոչ էլ ուզում էր հայտնել նրան, որ իր այցելությունները կրճատի:

— Մարդ պետք է իրան ծանր պահի, որ ուրիշներն էլ պատվեն, — ասաց մի օր Զառնիշանը, քթախոտն ուժգնությամբ ներշնչելով քթի պնչերով ներս — թե չէ,

նրա գինը — մի գրոշ: Ասենք, ես խոսողը չեմ, բաս, մարդ աստծու, դու ինքդ ֆիքր չե՞ս անում, որ ցեխոտ ոտներդ կեղտոտում են իմ տուն ու տեղը. փիյե՛...

Նա նստած էր ծալապատիկ սենյակի վերին կողմում, Սոնան կանգնած էր նրա առջև, ձեռները կրծքին, գլուխը ցած թեքած:

— Ես մի կտոր հաց ոչ ոքի չեմ խնայում, — շարունակեց պառավը, ավելի ու ավելի տաքանալով, — ուզում է, ամեն օր նրա համար կուղարկեմ կերակուրներ էլ, արաղ էլ, գինի էլ: Թող իր տանը ինչքան ուզում է խմի, քեֆ անի, իսկ մեր տունն օղետուն չէ...

Հետևյալ օրը Սոնան, արտասուքն աչքերին, սկեսուրի նախատինքը հաղորդեց մորը և խնդրեց համոզել Ոսկանին, որ նա խնայի իր պատիվը:

— Մենակ սկեսո՞ւրդ է նախատում, թե մարդդ էլ — հարցրեց հացթուխը:

— Չէ, — պատասխանեց Սոնան, — մարդս ոչինչ չի էլ իմանում: Եթե իմանա, մոր հետ կկռվի: Ես էլ չեմ ուզում ասել, ինչո՞ւ մեր խաթրու մայր ու որդի թշնամանան:

Նույն օրը երեկոյան հացթուխի և պայտագործի մեջ տեղի ունեցավ մի խոշոր վեճ: Կինն ասում էր, թե ամոթ է ամեն օր խնամիներին ձանձրացնելը, թե նրա պատճառով Սոնան է նախատինք ստանում: Մարդը չէր հավատում, որ խնամիները ընդդեմ են նրա այցելություններին: Նրա կարծիքով, ընդհակառակը, այդ «բռի շինականները» շատ ուրախ են, որ Ոսկանի պես մի պատվավոր քաղաքացի արժանի է համարում նրանց տունը ոտ դնել:

— Սոնայի ընտրածն է, ես գիտեմ, այ ես նրա... — գոչեց պայտագործը, մի քանի կոպիտ հիշոցներ ուղղելով աղջկա հասցեին: — Ախր հիմա ունևոր մարդու կնիկ է, ամաչում է մրոտ ձեռներիցս: Լա՛վ, ինչ ուզում է, թող անի, մենք էլ մեր խելքի կտրածը կանենք: Հենց էգուց կբռնեմ բազարում նրա մարդուն ու հարցուփորձ կանեմ: Ինձ Պուլուզանց Ոսկան կասեն: Եթե Մուրադն ասի, որ չի ուզում ինձ իր տանը տեսնել, լախտակ կթքեմ նրա երեսին: Աստված, երկինք վկա, պատվավոր մարդկանց մոտ կթքեմ ու հավիտյանս հավիտենից ամեն, Է՛լ ոտ չեմ դնիլ նրա շեմքը...

Զուր հացթուխն ասաց, թե Սոնան մեղավոր չէ, թե Մուրադին ոչինչ հայտնի չէ և չպիտի հայտնել: Պայտագործը կատաղած կրկնում էր,

— Չէ, չէ, ու չէ, հենց Մուրադի բկից պետք է կպչեմ. ես Չորթանի կամ Չոփուռի կնկանը չեմ տվել աղջկաս...

Նա իր ասածը կատարեց: Մյուս օրն ևեթ շուկայում հանդիպեց Մուրադին ու սկսեց պարզապես նախատել նրան: Փիյե՛, այդ ի՞նչ նոր կարգ ու կանոն են բերել քաղաք «շինականները»: Տեսնված բա՞ն է, որ փեսան աներոջն իր տնից փախցնի, այն էլ մեղրամիսը չլրացած:

— Թքել եմ ձեր մի բաժակ օղիի վրա, կարո՞տ եմ, ինչ է:

Մուրադը, որին իրավ ոչինչ հայտնի չէր, զարմացած նայեց պայտագործի երեսին և մեղմ ձայնով ասաց.

— Չեմ հասկանում էշիդ ո՞վ է կաղ ասել, որ փրփրամ ես: Իմ տանը դռները առավոտ-երեկո քեզ համար կրունկների վրա բաց են: Երբ ուզում ես, եկ, գնա, կեր, խմիր, ինչպես քո տանը:

Պայտագործը մեղմացավ:

— Հաա՞, — ասաց նա, խոսելու եղանակը փոխելով, — որ այդպես է, բաս քիչ թե շատ օրինավոր մարդ ես: Ջահիլները մեծի-պստիկի պատիվը պետք է ճանաչեն: Բաս լավ կլինի, որ քո տանեցիներին էլ մի քիչ քաղաքավարություն սովորեցնես:

— Իմ տանեցիներն իրավունք չունին քեզ ասելու, «Ա մարդ, ոտդ էրվում է, դենը դիր»: Դու իմ աներն ես, կթողնեմ քեզ իմ տունը, չեմ թողնիլ — իմ գործն է...

— Ա՛ֆերիմ տղա, — գոչեց Ոսկանը, միանգամայն հափշտակվելով — ա՛յ, տղամարդի խոսք, ա՛ֆերիմ, արի բերանդ պաչեմ...

Բայց հանկարծ նրա ամբիցիան գրգռվեց, և նա չկամեցավ միանգամից հաշտվել փեսայի հետ:

— Փա՛հ, — ավելացրեց նա, ուսերը քաշելով և ձեռները կաշվի գոտիի մեջ խրելով, — դու կարծում ես, շատ կարոտ եմ քո տանը: Ինձ Պուլուզանց Ոսկան կասեն, հազար չխնդրեն, մեկ չեմ գնալ: Թքել եմ հարուստների վրա, դու պատիվ ու քաղաքավարություն ասա՛, թե չէ — փողն ինչ է, ձեռի կեղտ, այսօր կա, վաղը չկա: Ես քեզ համար եմ մտածում. թե չէ — ինձ ի՞նչ: Որ դու ինձ պատիվ չանես, օրինավոր մարդիկ մատներով աչքերդ կհանեն:

— Իհարկե, իհարկե, — համաձայնվեց Մուրադը պայտագործին հանգստացնելու համար:

Նույն օրը Մուրադը Սոնային թախանձեց բացատրել գործի էությունը: Նորահարսը երկար ժամանակ. աշխատում էր խույս տալ ուղիղ պատասխանից, բայց վերջը ստիպվեց եղելությունը պատմել: Երբ Մուրադն իմացավ, որ իր մայրը նախատել է Սոնային, անմիջապես գնաց պառավի մոտ և սկսեց վրդովված հանդիմանել նրան:

— Առաջին և վերջին անգամն եմ ասում, — ավարտեց նա խոսքը դրական եղանակով, — եթե մեկ էլ իմ կնոջ երեսին խոսել եք, կվերցնեմ նրան, դուրս կգամ այս տնից ու ջոկ կապրեմ:

Խնդիրը քանի գնում՝ բարդանում էր: Պառավ Ջառնիշանը վախեցավ որդու սպառնալիքից և ավելի սուր ատելություն զգաց դեպի Սոնան: Տեսեք, տեսեք այդ հացթուխի աղջկան. մի ամիս չկա ոտք է դրել այս տունը և արդեն ուզում է որդուն բաժանել մորից, եղբորը — եղբորից: Չէ, պետք է այդ անկապի կապը քաշել, որ շատ էլ ձին չափ չտա:

— Համբերիր, համբերիր, — ասում էր Գյուլնազը պառավին գրգռելու համար, դա կծիկի ճոնդն է, տես վերջն ինչ կլինի: Աչքերս կհանեմ շներին կգցեմ, եթե այդ խլեզն ինձ էլ չբաժանի իմ մարդուց:

Հարս ու սկեսուր սկսեցին խորհրդակցել իրանց անելիքի մասին: Խնդիրը շատ կարևոր էր: Եթե Մուրադը շարունակեր կնոջ կողմը բռնել, հետևանքը կարող էր

վատ լինել: Բանն այն է, որ առևտրական գործերը գլխավորապես Մուրադի ձեռքումն էին կենտրոնացած: Նա գիտեր գրել-կարդալ, հաշիվներ պահել, իսկ Կարապետը մի անգրագետ մարդ էր, շատ անգամ չէր իմանում, ումից ինչքան ստանալիք ունի, կամ ում ինչքան է պարտք: Ինքը Կարապետը շատ լավ էր զգում եղբոր արժեքը և շատ անգամ խոստովանում էր, որ առանց նրա-ինքը «կոպեկ չարժե»: Նա վշտացավ, երբ կնոջից լսեց, թե Մուրադը սպառնում է բաժանվել և առանձին ապրել, եթե նրա կնոջ ու աներոջ հետ լավ չեն վարվիլ: Իսկապես Կարապետը շատ էլ դեմ չէր պայտագործին և ոչ էլ որևէ ատելություն էր զգում դեպի նրա աղջիկը: Բայց Գյուլնազը համոզել էր նրան, որ Սոնան ընտանիքի մեջ խլրտումներ է գցում, ուստի նա էլ լարվել էր նորահարսի դեմ:

Այդպիսով Սոնայի դեմ կազմվեց մի եռանձնյա դաշնակցություն: Շուտով նա զգաց իր վիճակի փափկությունը: Չնայելով նրա բարեկամական զգացումներին և հեզ վարմունքին, հակառակորդները ճգնում էին նրա վարկը գցել ամուսնու մոտ:

Սկզբում Մուրադը բարկանում էր, երբ կողմնակի ակնարկներ էր լսում Սոնայի ծուլության կամ անհնազանդության մասին: Ապա ուշադիր եղավ այդ համառ ակնարկներին և կամեցավ վերստուգել իր մոր գանգատները: Փորձը համոզեց նրան, որ Սոնան ոչ միայն ծույլ չէ, մեծերի պատիվը ճանաչում է, այլև ամբողջ տան գործերը նրա վզին են, և հարգում ու մեծարում է ընտանիքի ավագներին գուցե ավելի, քան պահանջվում է: Այս պատճառով Մուրադը մի օր ընդհարում ունեցավ տնեցիների հետ: Գրգռված րոպեին այս անգամ բացարձակ կասկած հայտնեց իր եղբոր կնոջ բարեխղճության մասին: Գյուլնազը, հարկավ, վիրավորվեց, լաց եղավ իր ամուսնու մոտ: Հերթը հասավ «չոփուռ» Կարապետին: Նա հանդիմանեց Մուրադին իր կնոջ վերաբերմամբ, և առաջին անգամ երկու եղբոր մեջ տեղի ունեցավ մի անախորժ վեճ:

Արդեն պառավ Զառնիշանը և Գյուլնազը համոզվել էին, որ անկարելի է Մուրադին լարել իր կնոջ դեմ, երբ... ճակատագիրը դավաճանեց Սոնային:

Կիրակի առավոտ էր: Ամբողջ ընտանիքը խմբված էր միջին, ընդհանուր սենյակում: Սոնան թեյ էր պատրաստում, բերանը երեսքողով ծածկած, անբաժան շալը գլխին: Այն վայրկյանին, երբ, բաժակներով լի մատուցարանը ձեռքին, մոտենում էր Զառնիշանին, մարմնի վրա զգաց մի անսովոր ցուրտ: Նրան թվաց, իբր մի քանի խոնավ և պաղ որդեր մեջքի վրայով սողում են դեպի վեր: Նա սարսռեց ոտից մինչև գլուխ, մի սուր ճիչ արձակեց, դողաց և, մատուցարանը ձեռից բաց թողնելով, ընկավ հատակի վրա:

Գյուլնազը երկյուղից գոռաց: Զառնիշանը ձեռները զարկեց ծնկներին: Կարապետը չիբուխը բերանից հանեց և ապշած նայեց հատակի վրա թափված թեյին ու փշրտված բաժակներին: Իսկ Մուրադը մի ակնթարթում ոտքի թռչելով, մոտեցավ Սոնային բարձրացնելու: Բայց նայեց նրա դեմքին, սարսափեց և ապշած մնաց տեղն ու տեղն արձանացած: Կարապետի երեխաները բարձրացրին անասելի աղմուկ: Մեծերը սկզբում կարծեցին, որ Սոնան պատահաբար ընկավ: Բայց երբ տեսան նրա կարմրած երեսը, փրփրոտ բերանը, ատամների մեջ սեղմված լեզուն, լսեցին չարագուշակ խռխռոցը, քողը սկսեց ընկնել նրանց աչքերից:

Ամենից առաջ Գյուլնազն արտասանեց.

— Ընկնավոր է:

Նա իր գլխի շալը ձգեց Սոնայի երեսին և երեխաներին դուրս տարավ: Պառավը դարձյալ ձեռները զարկեց ծնկներին և ճչաց: Կարապետը ցավակցաբար նայեց եղբոր երեսին: Մուրադը դեռ արձանացած էր միևնույն տեղում, աչքերը հառած կնոջ անզոր թավալվող մարմնին:

Տեսարանը տևեց ընդամենը երկու րոպե: Սոնայի երեսը բաց արին: Նա արդեն ուշքի էր գալիս:

Անմիջապես մարդ ուղարկեցին հացթուխի ետևից: Դեռ կասկածում էին, որ Սոնան ընկնավոր է: Միայն Գյուլնազն էր պնդում, թե կյանքում ընկնավորներ շատ է տեսել, բոլորն էլ Սոնայի պես են ուշաթափվում:

Երբ հացթուխը ներս մտավ, պառավ Զառնիշանը գոռաց.

— Աղջիկդ ցավագար Է...

Խե՜ղճ մայր. այս մի հատիկ բառը բավական էր նրան: Նա գունատվեց, ոչինչ չասաց, և ի՞նչ ասեր: Կասկածը փարատվեց: Հացթուխն անցավ իր աղջկա սենյակը: Սոնան այնտեղ հագուստով պառկած էր անկողնում: Սենյակի մի անկյունում, սնդուկի վրա, նստած էր նրա ամուսինը, ձեռները կռնատակին դրած, աչքերն ուղղած հատակի մի կետին: Նա գլուխը բարձրացրեց և նայեց իր զոքանչի երեսին: Նա աղերսանքով և տանջանքով խառն մի հարցական հայացք էր, միևնույն ժամանակ, տակավին հույսով լի: Նա ուզում էր հացթուխից լսել, թե ո՜չ, Սոնան ընկնավոր չէ, թե նրա ուշաթափվելը պատահական էր: Բայց հացթուխի լեզուն պապանձվել էր, և այս խորտակեց Մուրադի հույսը:

— Աղջիկդ ընկնավո՞ր է, — արտասանեց նա և լռեց:

Սոնան պառկած էր երեսը դեպի պատը: Նա զգաց, որ մայրը ներս մտավ, չոքեց իր մոտ, բայց երեսը չդարձրեց նրա կողմը: Նա վախենում էր հանդիպել ամուսնու աչքերին, որովհետև հազիվ ուշքի էր եկել, երբ Գյուլնազը ուղղակի և անխնա նրա երեսին ասաց, թե նա ընկնավոր է և հենց այս րոպեին ուշաթափվեց:

— Աղջիկդ ընկնավո՞ր է, — կրկին անգամ արտասանեց Մուրադը:

— Երկինքը կրակ դառնար, թափվեր նրա մոր գլխին, — գոչեց հացթուխը:

Այլևս Մուրադը ոչինչ չասաց և շարունակեց իր հայացքը հառել հատակի մի կետին: Այս լռությունը հացթուխի համար ավելի անտանելի էր, քան եթե նախատեին, հայհոյեին, թուք ու մուր ածեին նրա երեսին: Նա բախտավոր կհամարեր իրան, եթե այդ բարեսիրտ մարդը, որ այնքան սիրում էր Սոնային, վերկենար հանկարծ և դաշույնի մի հարվածով վերջ տար նրա կյանքին: Բայց Մուրադը լուռ և անշարժ էր:

— Մի քիչ ջո՞ւր, — շշնջաց Սոնան, կարծես, վախենալով, որ մի գուցե ամուսինը լսի:

Հացթուխը նայեց այս ու այն կողմ: Հարկավոր էր ջուրը մյուս սենյակից բերել: Այնտեղ թշվառ կնոջը սպասում էր եռանձնյա դաշնակցության դատաստանը: Խորին ատելությամբ և զզվանքով լի երեք զույգ աչքեր միաժամանակ բևեռվեցին նրա վրա, երբ ներս մտավ: Նա զգաց իր սրտում այդ սուր ասեղների ծակոցները:

Հասկացավ, որ այդ դատավորներն իրանից բացատրություն են պահանջելու, որ պետք է, վերջապես, դեմ առ դեմ կանգնել նրանց առջև: Ահա ինչու, երբ Սոնային ջուր տվեց և ջրաշիշը տարավ մյուս սենյակ կրկին իր տեղը դնելու, կանգ առավ այնտեղ: Առաջինը խոսեց պառավ Զառնիշանը, որի հողագույն դեմքը թույն էր արտահայտում:

— Բախտավոր աղջկա բախտավոր ծնողին շատ, շատ բարով: Մոտեցիր, փեշերդ պաչենք, գլխիդ վարդաջուր ածենք, ոտներիդ հինա դնենք, ա՛յ մեր աչքի լույս խնամի: Աղջիկդ անգին մարգարիտ է, շահնշահի մատին դնելու, խանըմ-խաթուն, հյուլ ու մյալաք: Գնա՛, նրա ոտները ջուր արա, խմիր, հա՛ հա՛ հա՛: Փա՛հ, երես ունիս աստծու լույսին մտիկ անելու. փա՛հ, տափը պատառ-պատառ չի լինում, որ քեզ կուլ տա. փա՛հ, ոտդ դրած տեղն օձ չի բուսնում, որ ջիգյարդ դաղի, կերակուրդ աղու-լեղի չի դառնում, որ սիրտդ ու փորդ կտրտի: Խայտառակ լինիս աշխարհումս, ինչպես մեր անունը խայտառակեցիր...

Հացթուխը լսում էր այս կծու և դառն նախատինքը, չհամարձակվելով նայել խնամիների երեսին:

— Մենք էլ ուրախ էինք, որ ջահիլ, սիրուն հարս ենք բերել մեր տուն, — շարունակեց սկեսրի փոխարեն Գյուլնազը, աչքերը դարձնելով դատապարտյալի վրա, — լա՛վ ուրախացանք: Հե՞րիք չէր թոնիր լպստողի ու աներես, անպատկառ հարբեցողի խնամի դարձանք, հիմա էլ մենք մեր տան մեջ պետք է ուրիշների ցավագար աղջկանը ծառայենք:

Հացթուխը գոգնոցի փեշը բարձրացրեց աչքերի արտասուքը սրբելու: Հերթը հասավ երրորդ դատավորին:

— Ես կարճ կկապեմ, — ասաց չոփուռ Կարապետը, ծխախոտի կրակն ուղղելով, — հենց այսօր, հենց հիմա, ա՛ռ աղջկադ, տար տունդ: Մենք ընկնավորներ պահելու գլուխ չունինք:

Դռների մեջ, շեմքի վրա երևաց Մուրադի կերպարանքը: Նրա դեմքը գունատ էր, շրթունքները դողում էին, երեսի մկանունքները ցնցվում: Կարապետը չնկատեց նրան:

— Ա՛ռ, աղջկադ, ասում եմ կրկնեց նա, — տար տունդ, քոնը լինի ծախած ապրանքդ:

— Ո՞վ է քեզ դատավոր կարգել, — գոչեց Մուրադը հուզված ձայնով, — ո՞վ է քեզ դատավոր կարգել, որ ուզում ես իմ կնկան իմ տնից դուրս անել:

Ոչ մեկը չէր սպասում, որ նա կպաշտպանի իր կնոջն այն պահին, երբ այդ կինը խորտակել էր նրա բախտը: Կարապետը զարմացած նայեց նրա երեսին: Զառնիշանը չկարողացավ զսպել իր կատաղությունը:

— Մեր ամենի դատավորը աստված է, — դարձավ նա Մուրադին, — բայց ես մայր եմ, չեմ թողնիլ իմ որդուն, որ ցավագարի հետ ապրի:

Մուրադը մոտեցավ, պատկառանքով խոնարհվեց և համբուրեց պառավի ձեռը:

— Որդին պարտավոր է, — ասաց նա, — իր ծնողների առաջ խոնարհվել: Մինչև օրս ես քո կամքին չեմ հակառակվել, ամեն բանում քո ուզածն եմ արել: Կյանքումս մի անգամ խոսքդ չկատարեցի, աստված ինձ պատժեց: Հիմա ուզում եմ պատիժս տանեմ. թո՛ղ տանեմ, ես արժանի եմ:

— Ուրեմն չե՞ս ուզում ընկնավորից բաժանվել, — գոչեց պառավը, շեշտելով «ընկնավոր» բառը, որպեսզի որդու սիրտը սարսափ ձգի:

— Չեմ ուզում:

— Չե՞ս ուզում չարով բռնվածից, դիվահարից երես դարձնել, ինչպես աստված է նրանից երես դարձրել:

— Չեմ ուզում:

— Կփոշմանես:

— Ինչ որ ճակատիս գրված է, պիտի կատարվի:

Այդ րոպեին Մուրադը բնազդումով երեսը դարձրեց ետ: Սոնան գլուխը բարձրացրել էր անկողնուց և ականջ էր դնում խոսակցության: Նրա ճակատը սպիտակ էր, ինչպես թուղթ, աչքերի բիբերն անշարժ մի փոքր դեպի վեր բարձրացած:

Մուրադը խղճաց նրան իր հոգու խորքում: Այդ վայրկյանին մոռացել էր իր վիշտը և միայն համակվել թշվառ կնոջ ցավով: Նա զգում էր, որքան տանջվում է այդ երիտասարդ էակը: Բայց միայն սեր և ցավակցության զգացումը չէին, որ ստիպում էին նրան պաշտպանել Սոնային: Ավելի մեծ դեր էր խաղում ինքնասիրությունը: Նա ինքն էր ընտրել այդ աղջկանը, պետք է պաշտպանի նրան:

— Ես նրանից չեմ բաժանվիլ, — ասաց նա վճռական

եղանակով, — եթե ամենքդ էլ ինձանից բաժանվեք:

Նա անցավ շուտով մյուս սենյակը, դռները հետևից ծածկելով: Այնտեղ հանդիպեց նրան Սոնայի շնորհակալությամբ, երկյուղով և հույսերով լի հայացքը:

— Կախարդել են որդուս, — աղաղակեց պառավ Ջառնիշանը, — կախարդել են ու սատանաների ճանկը գցել...

IX

Հարվածը նորափեսայի համար անսպասելի էր և անողոք: Հազիվ սկսել էր ճաշակել ամուսնական փոխադարձ, խաղաղ և օրինական սիրո հրապույրը, ճակատագիրը քայքայում էր նրա կյանքը: Նա մտիկ էր անում նորատի կնոջ դեմքին, սեղմված շրթունքներին և կրծքից արձակում ծանր ու երկարատև հառաչանքներ:

Երբեմն նրա սիրտը լցվում էր ատելությամբ դեպի այն էակը, որին ոչ միայն սիրում էր, այլև սկսել էր պաշտել, և որի կենակցությամբ երազում էր ստեղծել

ընտանեկան անդորր երջանկություն: Ինչո՞ւ նրան խաբեց այդ կինը անգթաբար, ինչո՞ ւ հավիտյան սևացրեց նրա օրը:

Բայց երկար չէր տևում այդ ատելությունը, անցնում էր Մուրադի սրտի ոոպեական գրգիռը և տեղի տալիս անհուն վշտերի ու վշտակցության զգացմանը:

Նա բացարձակ չէր բողոքում ճակատագրի դեմ, որովհետև ամենից առաջ իրան էր համարում մեղավոր: Նա այն տկարոգի անհատներից չէր, որոնք կյանքի տագնապալի միջոցներին իրանց թշվառության պատճառները միայն և միայն ուրիշներին են վերագրում: Այնքան քաջություն ուներ, որ կարող էր բաց ճակատով կանգնել սեփական խղճի կշտամբանքների դեմ: Եվ եթե նա ոչ ոքի չէր մեղադրում, միևնույն ժամանակ, ոչ ոքի էլ իրավունք չէր տալիս իր գլխին դատավոր կանգնելու: Բայց ո՞վ կարող էր նրան այնպես խիստ պատժել, որքան նա ինքը: Նա խորասուզվել էր ցավերի մեջ և գիշեր-ցերեկ կրծում էր իր սիրտը: Մի շաբաթ էր անցել այն դժբախտ օրից, և նա դեռ տնից չէր դուրս գալիս: Թվում էր նրան, որ եթե շուկայում երևա, ամենքը պետք է մատնացույց անեն նրան, ծաղրեն կամ խղճան: Երբ ավագ եղբայրը խնդրում էր նրան ուշքի գալ և գործերով զբաղվել, նա մի հուսահատ շարժում էր անում ձեռով և ասում.

— Ես գործեր չունիմ. արա՛, ինչ որ ուզում ես:

Այժմ նա, կարծես մոռացել էր ամեն ինչ: Նա ոչ կանոնավոր ուտում էր, ոչ հանգստանում. գիշերը մեծ մասամբ ՛անց էր կացնում անքուն, շարունակ անց ու դարձ անելով գավթում: Նայում էր աստղերին, ականջ էր դնում շների հաչոցին, փողոցային պահապանների գոռոցներին գիշերային լռության մեջ և հառաչում, շարունակ հառաչում:

Շուտով նրա դեմքի վրա երևան եկավ մի դեղնություն, իսկ աչքերի մեջ հոգու դառնություն: Ամենից առաջ Սոնա՛ն նկատեց այդ բանը, որովհետև ամենից զգաստ աչքերով նա էր հետամուտ Մուրադի ամեն մի քայլին: Նա զգում էր, որքան խորն է այդ մարդու տանջանքը, քանի որ արտասուքը սրտի մեջ է թափում: Նա փափագում էր և չգիտեր ինչպես ամոքեր ամուսնու վիշտը: Չոքե՞լ նրա առջև, ներո՞ւմն խնդրել: Մի՞թե այդ բավական է: Գոնե Մուրադը լիներ ոչ այնպես բարեսիրտ, այլ քինախնդիր և կատաղի, գոնե նա չպաշտպաներ իր ողորմելի կնոջը տնեցիների մոտ: Այն ժամանակ Սոնան ավելի քիչ կտանջվեր խղճի խայթոցից, զգալով, որ մասամբ պատժված էր իր մեղքի համար: Չէ, այսպես շարունակել անհնարին է. Սոնան անկարող է տանել այդ մարդու լռությունը:

— Ականջ դիր ինձ, — արտասանեց նա մի օր, այլևս չկարողանալով համբերել:

Նա նստած էր իր սենյակում, լուսամուտի առջև: Մուրադը անցուդարձ էր անում պատշգամբի վրա: Նա կանգ առավ, ծխախոտը հանեց բերանից և երեսը դարձրեց դեպի կինը: Եվ ոչ մի թեթև հանդիմանություն, նախատինքի և ոչ մի թույլ նշան այդ մռայլ դեմքի վրա:

— Ինչո՞ւ չես խոսում,– — շարունակեց Սոնան, մինչև ե՞րբ պիտի սիրտդ մըղ-մըղ ուտես:

— Մինչև այն ժամանակ, քանի որ սիրտ կա ուտելու,– պատասխանեց Մուրադը:

Նա շարունակեց անց ու դարձ անել:

— Թող մեղավորն ուտի իր սիրտը, դու ի՞նչ մեղք ունիս, — խոսեց դարձյալ Սոնան:

— Ո՞վ է մեղավորը:

— Կնիկդ, ղուլդ, ինչո՞ւ նրան չես պատժում:

Մի դառն հեգնական ժպիտ սահեց Մուրադի դեմքով: Նա ուսերը թոթվեց, գլուխը երերեց: Ասելն էր. ի՞նչպես պատժեմ քեզ, խեղճ էակ, քանի որ աստված ինքն է պատժել:

Սոնան գուշակեց այս լուռ պատասխանի իմաստը:

— Ես ինքս էլ չեմ հասկանում, — շարունակեց նա, — ինչ երեսով աստծուց պատժվածը ուզում էր մարդկանց շարքն ընկնել: Մի շաբաթ է գիշեր-ցերեկ մտածում եմ, մտածում ու տեսնում, որ ես իրավունք չունիմ այս տանն ապրելու: Թո՛ղ ինձ գնամ իմ ծնողների մոտ, մենակ նրանց գլխին պատուհաս լինիմ: Թե չես ուզում թողնել, գցի՛ր ինձ ոտներիդ տակ, շանսատակ արա, մի՛ պահիր այս դրության մեջ:

— Հապա ինձ ո՞վ կսպանի, եթե ես քեզ սպանեմ, բաս իմ ցավե՞րը որտեղ ուղարկեմ, եթե քեզ ծնողներիդ մոտ ուղարկեմ: Ուշ է...

— Աստծուն է հայտնի, որ քանի-քանի անգամ հորս տնից ուզեցել եմ քեզ հայտնել, որ ընկնավոր եմ, ի՞նչ անեմ, լեզուս կալին-կապին ընկավ — չկարողացա:

Նա շալի ծայրը բարձրացրեց իր աչքերը սրբելու, ուր երեք օր էր արտասուքը ցամաքել էր:

— Հե՛րիք է, հե՛րիք է, կես բարկացած և կես ընկճված ձայնով արտասանեց Մուրադը. — աստծու դեմ կռվել չենք կարող: Ինչ որ ճակատներիս գրված է, պետք է տանենք: Աչքերս այնքան մթնել էին, որ եթե ամբողջ աշխարհը հակառակվեր, էլի ես քեզ հետ պիտի պսակվեի: Ուրեմն աստծու կամքն էր: Հիմա հերիք է, ասում եմ, վեր կաց, մի բաժակ թեյ ածա՛, տուր ինձ:

Այն վայրկյանին, երբ Սոնան թեյով լի բաժակը դնում էր լուսամուտի հատակի վրա, նրա գլխի գցած շալի եզրերը միմյանցից բաժանվեցին և կոկորդը բացվեց: Մուրադը նայում էր կնոջ երեսին և այժմ էլ հիանում էր նրա գեղեցկությունով:

— Այդ ի՞նչ է, — գոչեց նա հանկարծ, երբ տեսավ Սոնայի կոկորդը:

Սոնան իսկույն շալը քաշեց կրծքին և երեսը ետ դարձրեց:

— Այդ ի՞նչ է, — կրկնեց Մուրադը:

— Ոչինչ, ոչինչ...

Երբ երրորդ անգամ Մուրադը իր հարցին ուղղակի պատասխան չստացավ, մտավ սենյակ և ստիպեց Սոնային շալը գլխից վերցնել: Նրա կոկորդի վրա երևացին քանի մի արյունոտ կարմիր-կապտագույն գծեր:

— Ո՞վ է քեզ սովորեցրել կուրծք պատռել, — գոչեց Մուրադը զայրացած:

Հոգեկան կսկիծն էր ստիպել թշվառ ընկնավորին ճանկռտել իր մարմինը: Եթե Մուրադն ավելի խոր նայեր, կտեսներ, որ Սոնայի ամբողջ կուրծքը շերտավորված է արյունոտ գծերով: Այսպես էր պատժում ինքն իրան նորահարսը:

— Եթե մեկ էլ անես, երեսս չես տեսնի այս տանը, — ասաց Մուրադը վճռական եղանակով:

Սոնան հեզ և երախտագիտական հայացքով նայում էր նրա երեսին: Նա Մուրադի աչքերի մեջ նկատում էր վշտակցության հետ նաև նախկին սիրո ցոլքը: Նրա ընկճված սիրտը կրկին բաբախեց փոխադարձ զգացման բուռն հոսանքից:

— Երանի ոտներիդ փոշուն արժանի լինեի, — շշնջաց նա ինքն իրան:

Նույն վայրկյանին ուրախության մի թույլ ժպիտ անցավ նրա դեմքով: Նա տեսավ գիժ-Դանելին, այն մարդուն, որի տեսությունը միշտ մի առանձին ուրախություն էր պատճառում նրան: Խենթը բակ էր մտնում այս անգամ առանց երգելու, լուռ, կամացուկ քայլերով, գլուխը կրծքին թեքած: Նույն տեսակ մի ուրախ ժպիտ սահեց և Մուրադի դեմքով: Ամբողջ ընտանիքի մեջ, Սոնայից հետո, նա էր մենակ, որ ոչ միայն դեմ չէր խենթի այցելություններին և չէր ամաչում նրա ազգակցությունից, այլև միշտ ինքն էր խնդրում նրան ամեն օր այցելել:

Խենթը կանգնեց բակի մեջտեղում, ձեռները հենեց գավազանի ծայրին, մտիկ արավ Սոնային, հետո Մուրադին և, գլուխը երերելով, մռայլ ձայնով արտասանեց.

— Կրծքիս խփեցի, ձայն բարձրացրի, ասացի. «Ֆարհադ, կա՞ աշխարհում բախտավոր մարդ»: Երկինքը որոտաց, երկիրը գոռաց, Ֆարհադը պատասխանեց. «Մա՛րդ, տա՛ր ճակատիդ գրվածը. բախտ ասածդ այն է, ինչ որ ես եմ ճակատիդ գրել...»

Այս ասելով, նա մի զույգ խնձոր առաջարկեց Մուրադին, ավելացնելով.

— Առաջ դու հոտ արա, Մյաջնուն, հետո կտաս Լեյլիին: Ասլան Դանելը երկուսիդ համար է բերել: Սպիտակ խնձորը անմեղություն է, կարմիրը — բախտավորություն: Երազ տեսա, Հովհաննես Մկրտիչը ասաց. «Ով որ անմեղ է, նա բախտավոր է»:

Հետո նա ծոցից հանեց մի մոխրագույն լաթի կտոր և, տալով Սոնային, շարունակեց.

— Ա՛ռ, համբուրի՛ր, ճակատիդ դիր: Մեյսարիի սուրբ Նշանի գերեզմանի հողից է: Գիշերը քնելիս վրեն մոմ վառիր, աղոթք արա, հետո դիր բարձիդ տակ: Թող նրա սուրբ զորությունը քեզ պահի, պահպանի չար աչքից, չար նյութից:

Հացթուխը արդեն հաղորդել էր խենթին Սոնայի ուշաթափվելու լուրը:

Մինչև Սոնան, ակնածությամբ լի հայացքը իր ամուսնու վրա ձգած, սպասում էր, ինչ պիտի խոսի նա խենթի հետ, Մուրադը ցույց տվեց պատշգամբի վրա ձգած բազմոցը, խնդրեց Դանելին նստել, թեյ խմել:

Խենթը, ձեռը փորի վրա դնելով, գլուխ տվեց եղբորորդուն, բայց չնստեց: Օրը դեռ չէր մթնել: Մայր մտնող արեգակի դեղնագույն շողերը խաղում էին բարձր բարդենու վերին տերևների հետ, փայլեցնելով նրանց ինչպես բազմաթիվ փոքրիկ հայելիներ: Խենթն արևակեզ դեմքը դարձրեց դեպի արևելք, երեսին երեք անգամ խաչակնքեց, հետո դարձավ դեպի արևմուտք: Մուրադը և Սոնան լուռ նայում էին նրան: Խենթի աչքերի մեջ փայլում էր մի օտարոտի ոգևորություն: Կարծես նրա քայքայված ուղեղը իր վերջին ուժերով կենտրոնացել էր մի ինչ-որ խորհրդավոր մտքի վրա, իսկ սիրտը լցվել բուռն զգացումներով: Լուռ նայում էր երկնքի հեռավոր հորիզոնին, ուր վերջնամառային ամպերը ներկայացնում էին նուրբ գույներով օծված անվերջ լեռների մի հսկայական շղթա: Նրա շրթունքները մեղմիկ շարժվում էին: Թվում էր, որ մտքում աղոթում է կամ լուռ խոսակցում ամպերի հետ: Նրա զզգզված միրուքը, որ այժմ բոլորովին ճերմակել էր, պղնձագույն դեմքին տալիս էր մի առանձին խորհրդավորություն: Նա հիշեցնում էր այն ծերունի արևապաշտին, որ խորին հոգեզմայլության մեջ ձգտում է ըմբռնել իր աստծու էությունը:

Նա հանդարտ քայլերով մոտեցավ Մուրադին, երեք անգամ խաչակնքեց նրա երեսին: Գավազանը հենեց պատին, մտավ սենյակ, բռնեց Սոնայի ձեռից, դուրս բերավ նրան պատշգամբ և կանգնեցրեց Մուրադի մոտ: Մարդ ու կին տակավին լուռ էին և մի ինչ-որ աներևույթ ուժից դրդված, հետևում էին խենթի լուռ պատվերներին: Նա մի ձեռով բռնեց Մուրադի ձեռը, մյուսով Սոնայինը և ինքը կանգնեց մեջտեղ:

— Մտիկ արեք երկնքին, — արտասանեց նա հանդիսավոր եղանակով, — մտիկ արեք այն երկու կտորներին. մեկը սպիտակ, մյուսը վարդի գույնով: Տե՛սեք, տեսեք, մոտենում են միմյանց: Ասլան Դանելը բարձրացել էր սարի գլուխը, այնտեղից աչքերով փնտրում էր ձեր տունը: Տեսավ այս ծառի գագաթը, ասաց. «Ա՛յ, Մանիշակը այնտեղ ընկավ հողի տակ»: Սիրուն ճակատ ուներ, մոտեցա պաչեցի... Տեսեք Դանել ապորը, ոտները բաց, գլուխը բաց, աշխարհից ոչինչ չի ուզում: Տեսե՛ք, ամպերը միացան, հիմա մի կտոր է: Տո՛ւր ինձ ձեռդ, Մուրադ, տո՛ւր ինձ ձեռդ, Սոնա: Ասլան Դանելը ասում է. «Սաթայելի բաժին կդառնա ձեզ միմյանցից բաժանողի հոգին...»: Գիշերները չար երազներ եմ տեսնում: Ինձ տանում են թուրքերի թաղը, որ շան պես խեղդեն: Գավազանս խլում են: Մանիշակս լաց է լինում, հաց է ուզում, խաղող է ուզում: Տեսնում եմ Մանիշակիս հողի վրա ընկած, արևի տակ: Վեր է թռչում, ասլան Դանելին ազատում է դահիճների ձեռից: Մուրադ, Մուրադ, նրան սիրում էի աչքիս լույսի պես, սիրիր Սոնային, ասլան Դանելը խեղճ է, բալա չունի: Տեր, մեղա քեզ, մեղա քեզ... Սոնա խաթուն, մի լաց լինիր, ասլան Դանելը ղուլդ է: Մուրադը քեզ անտեր չի թողնիր Նա ընկած էր արևի տակ, երկու մեծ քարեր էին ընկել, մեկը կրծքին, մյուսը ճակատին: Նրան խլեցին ինձանից...

Արտասուքի երկու խոշոր կաթիլներ, նրա վառ աչքերից գլորվելով ցած, կանգ առան արևակեզ այտերի վրա: Առաջին անգամն էր Սոնան արտասուք տեսնում այդ թշվառի աչքերում: Եվ ով գիտե, ո՛ր ժամանակից այդ կաթիլները զորացել էին, քարացել նրա աչքերի մեջ: Այժմ կակղեցին և դուրս գլորվեցին:

Բոլոր իր տասնօրյա դառն կսկիծները Մուրադին այդ վայրկյանին թվացին մի խաղալիք, համեմատելով խենթի հոգու խորքում տարիներով տիրող հսկայական վշտի հետ: Այդ մարդը թշվառացավ նույնպես իր երիտասարդ հասակում, այն ժամանակ, երբ ընտանեկան երջանկություն էր վայելում: Նրանց ճակատագրի մեջ կար մի նմանություն — այս զգում էր Մուրադը: Եվ այս նմանությունը

երիտասարդի գլխում ծագեցրեց վայրկյանաբար մի միտք: Արդյոք Մուրադը կունենա՞ր այնքան ուժ, որ Դանելի չափ վիշտ կրեր, Դանելի պես խենթանար և հետո Դանելի պես աշխարհի երեսին սիրեր մի մարդկային էակ:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, հորեղբայր, ասա՛, ես ուզածդ կկատարեմ, — գոչեց Մուրադը ոգևորված:

— Երդվիր մեր հոր գերեզմանով, — ասաց խենթը, ամուր սեղմելով նրա ձեռը, — երդվիր մեր հոր գերեզմանով:

— Երդվում եմ:

— Ասա՛. Սոնայիս կսիրեմ մինչև մահ, ասա՛ Մանիշակիս խաթրու, ասա՛ խեղճ է Դանելը...

— Երդվում եմ, որ Սոնային սիրում եմ ու կսիրեմ մինչև մահ, — արտասանեց Մուրադը հուզված ձայնով և ավելի ու ավելի ոգևորվելով:

Նույն վայրկյանին նա իր թևի վրա զգաց մի ծանրություն: Այնքան բուռն էր նորահարսի հուզմունքը, որ չկարողացավ դիմանալ խենթի սրտաշարժ համակրանքին, նվազեց և գլուխը հենեց իր ամուսնու թևին: Մուրադը գրկեց նրան, օգնեց վերադառնալու սենյակ և նստեցրեց անկյունում դրած սնդուկի վրա:

Խենթը նայում էր դեպի դուրս: Նա գավազանը վերցրեց պատի տակից և, սպառնական ձևով շարժելով օդի մեջ, քայլերն ուղղեց դեպի փողոց: Բակի մի անկյունում կանգնած էր Մուրադի մայրը, եղբայրն ու եղբոր կինը, զարմացած և ուշադրությամբ նայում էին տարօրինակ տեսարանին: Երթ խենթն արագ քայլերով անցավ նրանց մոտով, պառավ Ձառնիշանը մոտեցավ Մուրադի սենյակին:

— Թողեք տեսնեմ, գիժը գժի հետ խոսք խոսքի տված ուզում են բալիս էլ խելքից հանեն, — ասաց նա, մտնելով որդու սենյակը:

Նրա դեմքն արտահայտում էր վճռողականություն: Պարզ էր, որ այս անգամ նա մտադիր էր իր վերջնական խոսքն ասել որդուն:

— Ի՞նչ գործ ուներ այստեղ գիժը, — գոչեց դառնալով Մուրադին:

— Հորեղբայրս է, հյուր էր եկել:

— Ի՞նչ էր խոսում այնքան երկար:

— Օրհնում էր մեզ:

— Հացթուխն էր ուղարկել նրան: Ցույց տուր, տեսնեմ, ի՞նչ կապոց տվեց կնոջդ:

— Սուրբ Նշանի գերեզմանի հողից է:

— Սուտ ես ասում, գայլի բերան է կամ սև կատվի ոտի պճեղ կամ ագռավի աչք, ջադու է:

Որպեսզի պառավը երկար չվիճի, Մուրադը վերցրեց Սոնայից խենթի բերած կապոցը, բաց արեց և ցույց տվեց մորը սև հողը: Պառավը խլեց նրանից կապոցը և դրեց իր ծոցը:

— Եթե սրբերն ուզենային դիվահար կնոջդ օգնել, — ասաց նա, — մինչև հիմա օգնած կլինեին: Հերի՜ք է, էլ ես չեմ թողնիլ, որ դու սատանաների ճանկերում մնաս: Մտիկ արա հայելուն, ինքդ քեզ չես ճանաչիլ, լղարել ես, դեղնել, աչքերդ փոսերի մեջ են ընկել: Չես ուտում, չես խմում, գիշերները քուն չունիս, դիվահարի պես երկար ման ես գալիս: Սև լիներ այն օրը, որ այդ չարը իմ տունը ոտ դրեց. սևացրե՜ց մեր օրը: Թոռներս հիվանդացել են, մեծ որդիս ախ ու վախով է օրերն անցկացնում. մեծ հարսս վախից գիշերները տասն անգամ տեղից վեր է թռչում: Իմ գլխին խելք չի մնացել, քունն աչքերիցս փախել է: Երեք օր է, խելք խելքի տված, մտածում ենք, ուրիշ ճար չենք գտնում: Դու պետք է այդ դիվահարից ձեռ քաշես: Դո՜ւրս հանիր իմ տնից չարին, թող գնա ծնողների մոտ:

— Հենց ա՞յդ էիր ուզում ասել, — հարցրեց Մուրադը, — ուրիշ ասելիք չանի՞ս:

— Ես ունիմ, մեջ մտավ Կարապետը: — Տասն օր է տնից չես դուրս գալիս, գործերդ մնացել են անտեր, ես մենակ ոչինչ չեմ կարողանում անել: Թե չես ուզում, որ կոտր ընկնենք, խայտառակվենք, խելքդ գլխիդ հավաքիր, դո՜ւրս եկ տնից: Կարճ-կտրական եմ ասում. եթե այս անգամ էլ խոսքս չես լսիլ, եղբայրդ չեմ, կթքեմ, կհեռանամ: Ես կնիկ ունիմ, երեխաներ ունիմ, եթե քեզ համար չմտածեմ, նրանց համար պարտավոր եմ մտածել:

Մինչ Կարապետը խոսում էր, նրա կինը, — Գյուլնազն աչքերը հառել էր Սոնայի վրա և չարախնդությամբ ժպտում էր: Նրա դեմքն այնքան ատելի թվաց Մուրադին, որ սա չկարողացավ իրան զսպել և գոչեց.

— Երևի կնիկդ է սովորեցրել քեզ կարճ-կտրական խոսել: Որ այդպես է, ես էլ իմ վերջին խոսքն կասեմ. ինչ ուզում ես, կարող ես անել, ես իմ կնոջից բաժանվողը չեմ, թեկուզ կոտր ընկնենք ու խայտառակվենք քաղաքում:

— Դա վերջին խո՞սքդ է, — հարցրեց Կարապետը:

— Վերջին խոսքս է:

— Լավ: Մենք էլ մեր ասածը կանենք:

Ասաց Կարապետն և երեսը խստորեն ետ դարձնելով հեռացավ: Երեք օր անցած՝ իր մոր միջոցով կրկնեց նույն սպառնալիքը և Մուրադից ստացավ միևնույն պատասխանը: Մնում էր, որ նա իր խոսքը կատարի, բայց այդ էլ շատ դյուրին չէր: Նախ, պառավ Զառնիշանը ավելի կհամաձայնվեր ինքն երկու կտոր լինել, քան թե տեսնել իր երկու որդիներին միմյանցից բաժանված: Երկրորդ, Կարապետը բացի այն, որ առանց Մուրադի անթև էր զգում իրան, սիրում էր և խղճում էր նրան: Նա տեսնում էր, որ օր-օրի վրա Մուրադն ընկճվում է վշտի ծանրության ներքո և անկեղծ սրտով ուզում էր նրան փրկել: Նա համոզված էր, որ եթե այդպես շարունակվի — Մուրադը կխելագարվի: Գիժ-Դանելի օրինակը նրա աչքերից չէր հեռանում: Նա միշտ փիլիսոփայորեն կրկնում էր.

— Վա՛յ այն մարդուն, որ իր ցավերը ներսումն է պահում...

X

Դժբախտ օրից հետո հացթուխը մի երկու անգամ փորձեց իր աղջկանը տեսնել. խնամիները դռներից ետ դարձրին նրան: Այնուհետև նա այլևս չէր գնում աղջկա մոտ: Իսկ պայտագործը վաղուց արդեն դադարել էր այցելել Սոնային: Եվ կարիք էլ չէր զգում, քանի որ ամեն օր շուկայում տեսնվում էր իր փեսայի հետ: Մուրադը քաղաքավարի կերպով իր աներոջ ափի մեջ գրեթե ամեն անգամ սեղմում էր մի թղթադրամ, իսկ պայտագործը կրկնում էր.

— Մինչև եղբորիցդ չբաժանվես, երեսս տանդ չես տեսնիլ:

Այժմ, երբ Մուրադը շուկայում չէր երևում, Ոսկանի տրամադրությունը շատ վատ էր:

— Այնքան աղջկաս չեմ ուզում տեսնել, ինչքան փեսայիս, — ասում էր նա վրդովված:

Եթե համոզված լիներ, որ Մուրադը չի վռնդիլ, անհապաղ կվազեր նրա մոտ սովորական տուրքը ստանալու հույսով: Բայց չկար մեկը, որ նրան ասեր, թե կարելի է Մուրադի հետ տեսնվել: Նա փորձեց դիմել գիժ-Դանելի միջնորդությանը, բայց խենթը բարկացավ և երեսը դարձրեց նրանից:

Ամեն օր Դանելը շտապով գալիս էր հացթուխի մոտ, շշնջում էր նրա հետ և շտապով հեռանում: Կարծես, նա այժմ չարաչար զբաղված էր մի շատ կարևոր և անհետաձգելի գործով: Նա գնում էր Սոնայի մոտ ժամանակ-անժամանակ: Շատ անգամ նորահարսի հետ չէր տեսնվում և ոչ էլ Մուրադի հետ էր խոսում: Մտնում էր բակը, անցնում էր այս ու այն կողմ, նայում էր այս ու այն անկյունը և իսկույն անհետանում, որպեսզի նորից երևա անսպասելի կերպով: Երբեմն մոտենում էր այս կամ այն լուսամուտին, նայում էր ներս, խույս տալով տնեցիների հայացքից, և գավազանը սպառնական ձևով օդի մեջ պտտեցնելով, հեռանում էր: Պատահում էր, որ պառավ Զառնիշանը կամ Գյուլնազը նկատում էին պատշգամբի վրա, բակում կամ փողոցի դռների առջև մի կապույտ շապիկ, որ մի վայրկյան փայլում էր և իսկույն չքանում: Նրա հոգին տիրում էր ամբողջ տան վրա: Բոլորն և ամեն որպե զգում էին նրա ներկայությունը, միևնույն է, այնտեղ էր նա, թե ոչ: Ամենից ավելի զգում էր Սոնան: Նրան թվում էր, որ իր գլխին հավաքվում են սև ամպեր, և խենթի ոգին ճգնում էր մի սոսկալի որոտման առաջն առնել:

Այդ սև ամպերը նա տեսնում էր Գյուլնազի չարախինդ աչքերի մեջ և Զառնիշանի հողագույն դեմքի վրա: Պառավը տենդային հուզման մեջ էր: Այն օրից, երբ Մուրադը դրականապես մերժեց բաժանվել կնոջից, նա սկսեց ամեն միջոց գործ դնել իր որդուն «չարից» փրկելու: Սոնայի աչքից խույս չէին տալիս այդ միջոցներից և ոչ մինը: Նա տեսնում էր Զառնիշանին չոքած, կուրծքը ծեծելիս և աղոթելիս, լսում էր նրա անեծքներն իր դեմ և շրթունքները ներքին կսկծից ամուր կրծոտում էր: Նա գիտեր, որ իր սկեսուրը ոչ մի միջոց չպիտի խնայի իր տան մեջ բուն դրած «դևից» ազատվելու համար և երբեմն խղճում էր պառավին:

Բոլոր սրբերին աղոթելուց, բոլոր հմայիչներին դիմելուց հետո, մնում էր մի պառավ պարսկուհի, որ բնակվում էր քաղաքի ետ ընկած թաղերից մեկում: Զառնիշանն մի օր այցելեց նրան և խնդրեց օգնել իր որդուն: Պարսկուհին մի մեծ գավաթ ջրի վրա հմայեց և ասաց, որ պետք է անձամբ տեսնի Մուրադին:

Մյուս օրը Զառնիշանն ընդունեց հմայիչին իր տանը: Սոնան տեսավ պարսկուհուն և իսկույն հասկացավ, ինչու համար է կանչված: Հմայիչը դիտեց Մուրադին ոտից մինչև գլուխ, հետո խոսեց Սոնայի հետ: Նրան ուղղակի ոչ ոք չէր ասել, թե նորահարսը ընկնավոր է, ասել էին միայն, թե նա է Մուրադի «հիվանդության» պատճառը:

Մի շարք կողմնակի հարցեր տալուց հետո, պարսկուհին հայտնեց, թե նորապսակները չար աչքի են ենթարկված, թե Սոնայի աչքերում մի ինչ-որ սև բան է տեսնում, Մուրադը նրան թվում է կախարդված: Զառնիշանը հիացավ պարսկուհու գուշակությունից և ավելի հավատաց նրա գաղտնի զորությանը: Պարսկուհին պատվիրեց մի ագռավ բռնել, գլխիվայր պահած խեղդել և թաղել բակի այն տեղում, ուր Մուրադը սովորաբար անցուդարձ է անում գիշերները: Դա բժշկության նախերգանքն էր. բուն միջոցները պետք է գործադրվեին հետո: Պարսկուհին մի շաբաթ ժամանակ խնդրեց այդ միջոցների մասին մտածելու և, մի կտոր թել կապելով Սոնայի ցուցամատին, հրամայեց չբացանել այդ թելը, մինչև մյուս անգամ գալը:

Մի ծանր բեռն էր թվում այն մի կտոր թելը: Սնահավատությունը նրան թելադրում էր, թե այդ թելի կտորից է կախված նրա վիճակը: Ամեն գիշեր նա տեսնում էր տարօրինակ երազներ, որոնց մեջ նրա ցուցամատը միշտ գլխավոր դեր էր կատարում: Առավոտյան զարթնելիս նա իսկույն նայում էր ցուցամատին, կարծես, սպասելով մի որևէ հրաշքի: Առանց այն էլ, գիշեր-ցերեկ հանգստություն չուներ, այժմ իրան զգում էր երկաթյա շղթայով կապկապված, և այդ շղթան դարձյալ մատի թելն էր: Այժմ մահ էր ցանկանում, ինչպես ցանկանում էր մի ժամանակ իր ծնողների տանը: Տեսնում էր ամուսնու լուռ տանջանքները, լսում էր նրա խուլ հառաչանքները և այն միտքը, որ ինքն է բոլորի պատճառը, մորմոքում էր նրա սիրտը: Հիշում էր մորը և զգում, թե այժմ որքան է նա տանջվում:

— Ա՛ռ հոգիս, աստված, ա՛ռ, — շշնջում էին նրա շրթունքները առավոտ-երեկո:

Պատահեց մի անսպասելի փոփոխություն: Մի առավոտ Մուրադը հանկարծ տնից դուրս եկավ և գնաց շուկա: Տնեցիները ուրախացան. ուրեմն պարսկուհու միջոցները ազդում են: Նույն օրը Կարապետը ասաց, որ Մուրադը այժմ սկսել է գործերով հետաքրքրվել:

Իսկությունն այն է, որ Մուրադը, տեսնելով իր մոր տանջանքը և եղբոր անհանգստությունը, փորձեց գործով զբաղվեր նրանց թախանձներից ազատվելու համար: Այնուհետև ամեն օր դուրս էր գալիս: Բայց տանը տակավին շարունակում էր լռել և տխուր անցուդարձ անել գիշեր — ցերեկ:

Ուղիղ յոթ օր անցած կախարդուհին եկավ: Նորից հարց ու փորձ արավ, նորից տան բոլոր սենյակներն և անկյունները դիտեց: Նա բաց արավ Սոնայի մատի թելը, բարձրացրեց օդի մեջ, նայեց, նայեց և, կամացուկ քայլերով մոտենալով նորահարսի ննջարանին, հանկարծ մի ճիչ արձակեց, չոքեց շեմքի վրա և սկսեց իր սուր եղունգներով հատակը փորել: Բոլոր տնեցիները երկյուղով և ապշած նայում էին նրան:

— Այս տան մեջ դև կա, — ասաց պարսկուհին և ոտքի կանգնեց:

Աչքերը լայն բաց արած՝ նայում էր չորս կողմը, իր ոսկրոտ ձեռները օդի մեջ շարժելով: Կարծես նա աշխատում էր դևին որսալ, որ խեղդի իր մագիլներով:

— Տվեք ինձ մի կտոր կուպր, սև թել և մի հատ վեգ, — ասաց նա խորհրդավոր:

Սոնային հրամայեցին իսկույն բերել պարսկուհու ուզած բաները: Դողալով և սարսափահար գտավ այդ բաները և բերավ: Պարսկուհին յոթն անգամ թելը չափեց, յոթ թիզաչափ կտրեց, յոթն անգամ փաթաթեց վեգի շուրջը, յոթն անգամ կշկուռեց և յոթն անգամ զարկեց հատակին: Հետո վեգը փաթաթեց կուպրով, տրորեց ձեռների մեջ, երեսը դարձրեց դեպի արևմուտք, աղոթեց, անեծք կարդաց երկրին, կպրած վեգը կպցրեց Մուրադի ննջարանի դռան շեմքի վրա և թելի ծայրը բևեռեց հատակին:

Այս բոլորը նա կատարում էր դեմքը ծռմռելով և խորամանկ աչքերը պսպղացնելով: Տնեցիները լուռ և զարմացած դիտում էին նրան: Նայում էր և՛ Սոնան: Կախարդուհու ամեն մի շարժումը նրան ցնցում էր պատճառում: Նա և՛ վախենում էր պարսկուհուց, և՛ զզվում: Եվ այս երկու զգացումներն այնքան զորեղ էին, որ նա մերթ զգում էր կրակիդ տաքություն, մերթ սառույցի պաղություն:

Երևի, պարսկուհին զգում էր, որ ինքը նորահարսի վրա ազդում է, և այդ ազդեցությունը ավելի զորացնելու համար նա շուտ-շուտ կնճռում էր և սուր ու անշարժ հայացքով նայում նրա աչքերի միջին: Այդ հայացքը Սոնային հիշեցրեց դարձյալ օձային աչքերի ձգողական ուժը: Դարձյալ հիվանդ երևակայությունը սկսեց բորբոքվել: Նրա աչքերի առջև պատկերացան միմյանցից այլանդակ, անբնական և սոսկալի տեսարաններ: Հանկարծ նրան թվաց, որ պարսկուհին չքացավ և նրա կանգնած տեղում բացվեց մի մթին անդունդ: Սոնան քաշ էր ընկած այդ անդունդի վրա, օդի մեջ, առանց որևէ նեցուկի: Այդ տևեց ընդամենը մի վայրկյան, ապա ամեն ինչ ստացավ նրա աչքում սովորական տեսք: Բայց նրա հոգին տակավին պատած էր մի տեսակ մառախուղով: Նա անգիտակցաբար անցավ իր ննջարանը, դռները հետևից ծածկեց: Քանի մի րոպե անցած, տնեցիները այնտեղից լսեցին մի ինչ-որ խուլ թրմփոցի ձայն: Իսկույն դիմեցին այն կողմը: Հատակի վրա թավալվել էր Սոնան և ցնցվում էր: Պարսկուհին խոր-խոր նայեց նրան և գոչեց.

— Դևը, դևը...

Նա սկսեց կատաղի պտույտներ գործել ընկնավորի շուրջը: Ապա պահանջեց մի սուր: Պատի վրա քարշ արած էին Մուրադի զենքերը: Գյուլնազը վերցրեց մի դաշույն և տվեց պարսկուհուն: Պարսկուհին մերկացրեց դաշույնը, թքեց երեք անգամ նրա սայրերին և ծայրով հատակի վրա, ընկնավորի շուրջը, գծեց մի շրջան, արտասանելով.

— Յահուդի, ջհուդի, յահուդի, ջհուդի, այրել, խեղդել, հալած կուպրի մեջ գցել, խաշել, խաշել, խաշել...

Եթե Զառնիշանի սրտում կասկածի նշույլ մնացել էր կախարդուհու զորության մասին, չքացավ: Պարսկուհին դաշույնը ցցեց հատակին և հրամայեց դռները փակել ու ընկնավորին թողնել մենակ: Բոլորն անցան մյուս սենյակը: Սոնան մնաց մենակ, հատակի վրա ընկած, երեսը դեպի լուսամուտը:

Մեկը լուսամուտի փեղկերը կամացուկ բաց արավ և մի ոստյունով թռավ ներս: Նա չոքեց հիվանդի մոտ և գգվանքով ու ցավակցությամբ լի հայացքը ձգեց նրա երեսին: Երբ ընկնավորը սթափվեց, նայեց շուրջը, չճանաչեց իր մոտ նստողին:

— Ես եմ, Մանիշակ, ես եմ, — ասաց ոտաբոբիկ, գլխաբաց և կիսամերկ ծերունին, իր կոշտ ձեռով շոյշոյելով նրա մազերը...

Այդ միջոցին մյուս սենյակում Զառնիշանը աղերսում էր կախարդուհուն փրկել Մուրադին այդ «դևից»: Նա չէր հոգում ընկնավորի մասին. թող Սոնան ոչնչանա, միայն թե պառավի որդին ազատվի:

— Դևը դև է կանչում, սատանան ընկեր է սիրում, — արտասանեց կախարդուհին խորհրդավոր եղանակով:

Երբ նրան հարցրին այս խոսքերի միտքը, նա իր ոսկրոտ ձեռների ցուցամատերը կպցրեց միմյանց և ցցեց օդի մեջ:

— Հասկանում եմ, — ասաց Գյուլնազը:

Կախարդուհին խոստացավ Մուրադի փրկության մասին մտածել և, վարձն առնելով հեռացավ:

Մի ամբողջ շաբաթ չէր երևում: Այնինչ Մուրադի թախիծը ոչ միայն չէր անցնում, այլ օրից-օր ծանրանում էր: Ճշմարիտ է, այժմ նա տնից դուրս էր գալիս, բայց, Կարապետի ասելով, ավելի լավ էր տանը նստեր, քան թե դուրս գար և այնպես պահեր իրան:

— Մի բան ես հարցնում, աչքերը չռում է, երեսիդ մտիկ անում: Մարդկանց հետ խոսել չի ուզում: Եթե խոսեցնում են — նեղանում է: Երեկ մի գյուղացու փող տալիս, տասը մանեթ ավել է տվել, մյուսից պակաս է վերցրել: Հաշիվ բան չի պահում, դավթարներն ուզում է պատռել: Իմ տունը քանդում է, աղատեցեք նրան այդ ցավից...

— Կսպանեմ ինձ ու իմ որդուն կազատեմ չարերի ձեռքից, — գոչեց Զառնիշանը, իր գլխի մազերը փետտելով:

— Պետք է ազատել, — ավելացրեց Գյուլնազը:

Այժմ նրանց ցանկությունն էր, որ Սոնան մեռնի, այնքան ձանձրացել էին այդ կարճ միջոցում: Քաղաքում արդեն տարածվել էր Սոնայի ցավագար լինելու լուրը: Կանայք զանազան պատրվակներով գալիս էին Զառնիշանի մոտ, ընկնավորին տեսնելու: Ոմանք ակնարկում էին, թե առաջ էլ գիտեին Սոնայի ցավագար լինելը, միայն չէին ուզում ասել: Իսկ ոմանք, կարծես, մի առանձին հաճույք էին զգում՝ շոշափել Զառնիշանի սրտի վերքը — մանրամասնաբար հարցնելով Սոնայի մասին: Պառավը զգում էր, որ շատերը թեև արտաքուստ ցավակցություն են ցույց տալիս, ներքուստ ուրախ են նրա դժբախտությանը: Այդ ավելի գրգռում էր նրան և ավելի նրա սիրտը լեցնում ատելությամբ դեպի Սոնան:

Գյուլնազին առանձնապես կատաղեցնում էր Սոնայի դեմքը: Այդ դեմքը տակավին փայլում էր գեղեցկությամբ, թեև օր-օրի վրա նրա կենսականությունը պակասում էր, սքողվելով թմրության թանձր ստվերով:

Այժմ կախարդ-պարսկուհին հաճախ երևում էր Զառնիշանի տանը: Հարս ու սկեսուր միշտ խորհրդակցում էին նրա հետ: Պարսկուհու գործ դրած միջոցները չէին օգնում: Մուրադը քանի գնում՝ այնքան լռակյաց, անմատչելի և մռայլ էր դառնում և այնքան նիհարում:

— Որդիս կայծակ խփած ծառի պես ոտի վրա չորանում է, — ասում էր Զառնիշանը պարսկուհուն, ձեռները կրծքին խփելով, — ազատի՛ր նրան:

Չորս ամսվա ընթացքում Սոնան վեց անգամ ուշաթափվեց: «Հարվածները» քանի գնում՝ այնքան շուտ-շուտ էին կրկնվում, միևնույն ժամանակ այնքան թուլանում էին: Այլևս ընկնավորն առաջվա պես սաստիկ չէր խրխռում, չէր թավալվում և ոչ էլ այնքան երկար միջոց ընկած մնում: Ախտը հաճախ կրկնվելով, նվազում էր առանձին հարվածների ուժը: Բայց ընկնավորի մարմնի թուլությունը, դեմքի դեղնությունը, աչքերի ապշությունը քանի գնում՝ այնքան ավելանում էին: Նա օրից օր դառնում էր մտամոլոր, մոռացկոտ, անտարբեր: Շատ անգամ մի սենյակից մյուսը մի բանի համար գնալիս մոռանում էր, թե ինչու համար էր գնում: Կանգ էր առնում և ապշած աջ ու ձախ նայում: Երբեմն ձեռին բռնած իրերը դուրս էին սլկվում և ընկնում: Գրեթե օր չէր անցնում, որ մի ամսան չկոտրեր: Մի անգամ խոհանոցից դուրս գալիս, ձեռներից բաց թողեց մի ամբողջ տասնյակ ափսեներ և փշրտեց: Մի ուրիշ անգամ թաց թողեց նավթով լի կանթեղը: Ապակին կոտրվեց, նավթը, տարածվելով հատակի վրա, ապականեց թանկագին պարսկական գորգը: Զառնիշանը այնպես կատաղեց, որ նորահարսի գլխին ձեռով խփեց: Այլևս նա չէր վախենում Մուրադից: Այնուհետև պառավի ձեռը սովորեց հարվածվել: Գյուլնազը շտապեց նրա օրինակին հետևելու: Սոնան ընդունում էր այդ հարվածները լուռ ու մունջ և չէր ուզում առ այժմ այս մասին հայտնել իր ամուսնուն: Բայց նա տանջվում էր, և տանջվում էր ոչ այնքան այդ հարվածներից, որքան կախարդուհու գործ դրած միջոցներից: Իսկապես այդ միջոցները անմիջապես նրան չէին վերաբերվում, բայց այն միտքը, թե պառավ պարսկուհին վարձված է Մուրադին փրկելու ընկնավոր կնոջից, մթին ուրվականի պես գիշեր-ցերեկ հալածում էին Սոնային, պահելով նրան անընդհատ սարսափի մեջ:

— Ինձ տանջում են, չարչարում են, — ասաց նա մի անգամ միայն գիժ — Դանելին:

Խենթի աչքերն արյունով լցվեցին կատաղությունից:

— Ո՞վ է տանջում, ո՞վ, — գոչեց նա, գավազանը ձեռի մեջ սեղմելով:

Սոնան զղջաց իր գանգատի մասին և ետ վերցրեց իր խոսքը: Գիտեր, որ խենթը պատրաստ է բոլորի գլուխը ջախջախել իր գավազանով:

— Քավթառ ֆալչին ինչո՞ւ է գալիս այստեղ, — հարցրեց գիժ-Դանելը, — պատառ-պատառ կանեմ նրան...

Մի օր նա, փողոցում բռնելով պարսկուհու կոկորդից, սեղմեց նրան պատին և գոռաց.

— Դու ի՞նչ գործ ունիս այս տանը, հը՞մ, ասա՛, թե չէ — կխեղդեմ:

Բարեբախտաբար նույն միջոցին Մուրադը տուն էր վերադառնում, կախարդուհուն ազատեց խենթի ձեռից: Պարսկուհին կատաղած մտավ

Զառնիշանի մոտ, գանգատվեց, որ «դևերը» նրան քիչ էր մնում խեղդեին փողոցում և ասաց, թե այլևս չի կարող Մուրադի բժշկությունով զբաղվել: Զառնիշանը աղերսեց նրան անօգնական չթողնել իր որդուն:

Այն ժամանակ պարսկուհին պահանջեց մի գավաթ ջուր և հմայեց: Ձեռները հենած գավաթի եզրին, աչքերն հառել էր առաստաղին և ինքն իրան շշնջում էր: Նա մտքում խոսում էր դևերի հետ, կամենալով թափանցել նրանց գաղտնիքը: Հանկարծ նրա բիբերը սկսեցին արագ-արագ պտտել շրջանակների մեջ, և մի տեսակ ինքնամոռացության մեջ, մատներով խեղդելով իր կոկորդը, արտասանեց,

— Այսպես, այսպես, պրծա, վյաս սալամ, շյուդ թամամ...

Զառնիշանը և Գյուլնազը նայեցին միմյանց աչքերին ու գունատվեցին: Կախարդուհու գնալուց հետո նրանք երկար ժամանակ խորհրդակցեցին: Հայտնվեց, որ պարսկուհու խորհրդավոր ձևերի և խոսքերի իմաստը երկուսն էլ միատեսակ են հասկացել...

Օրերն անցնում էին, ընտանիքի դրությունը ավելի ու ավելի անտանելի էր դառնում: Կարապետը հուսահատված էր, գործերը քայքայվում էին: Ձմեռվա սկզբին բկացավից մեռավ նրա երկու տարեկան աղջիկը, իսկ մեծ որդին ծանր հիվանդությունից հազիվ առողջացավ: Զառնիշանը և Գյուլնազը այս բոլորի պատճառը Սոնային էին համարում: Նա, միայն նա բերեց նրանց տուն այդ թշվառությունները: Նա պետք է տակն ու վրա անի ամբողջ օջախը, կոտորի ընտանիքի բոլոր անդամներին:

— Երազ տեսա, չար երազ, — աղաղակեց մի առավոտ Զառնիշանը, անկողնից վեր թռչելով:

— Սայլերով սուրբ էինք գնում: Մուրադը նստած էր դեղին ձի: Նրանց առջև դուրս եկան հազարավոր սև կատուներ: Մուրադը մտրակով կռվում էր նրանց հետ: Հանկարծ կատուներից մեկը մարդու պես բռնեց նրա կոկորդից և սկսեց խեղդել: Մուրադի բերանից փրփուր էր գալիս, երեսը կապտել էր:

— Դեղին ձին նրա կնիկն է, սև կատուները դևերն են, որդուս ազատեցե՛ք, — գոչեց պառավը, ավարտելով իր պատմությունը:

Դեկտեմբերի ցուրտ օրերից մեկն էր: Մոտակա ձյունապատ լեռներից փչում էր շունչ կտրող սուր քամի: Կարապետը և Մուրադը շուկայումն էին: Գյուլնազի զավակները գնացել էին իրանց հորաքրոջ — Նարգիզի տուն նրա երեխաների հետ խաղալու:

Զառնիշանը և Գյուլնազը նստած էին մեջտեղի ընդհանուր սենյակում, որ «դահլիճ» էր անվանվում: Պառավը քրսինի վրա քառասուներկու սիսեռներով հմայում էր, հարկավ, Մուրադի մասին: Գյուլնազը կար էր անում: Երկուսի էլ դեմքերը մտազբաղ էին, երկուսն էլ միևնույն մտքով էին զբաղված, այն է — ի՞նչպես ընտանիքն ազատել չարից:

Ներս մտավ կախարդ պարսկուհին, մի ծուռ փայտի վրա հենվելով և ցրտից դողդողալով: Նա բարևեց և անմիջապես նստեց քրսինի մոտ:

— Սա ինչ պաղ է, — ասաց նա, երբ իր սառած ոտները մտցրեց քրսինի տակ:

— Ասա անունը կտրվածին, կրակ դնի, — դարձավ Զառնիշանը Գյուլնազին:

«Անունը կտրված» նա կոչում էր Սոնային: Մինչև նորահարսը դրսում քրսինի համար նոր կրակ էր վառում, Զառնիշանը, Գյուլնազը և պարսկուհին խոսում էին նրա վերաբերմամբ: Այսօր երեքի աչքերն էլ արտահայտում էին մի առանձին չարություն: Թե ինչ խոսեցին — այդ մնաց գաղտնիք: Բայց թե մի բան վճռել էին, այդ գուշակեց նրանց դեմքերից Սոնան, հենց առաջին վայրկյան, երբ ներս մտավ:

Նա ձեռին բռնած էր մի մեծ երկաթի ածխակալ, որ լիքն էր վառ ածուխով: Թեժ կրակի կապույտ լեզվակները բարձրանում էին վառ ածուխից, միմյանց շփվելով և միմյանց կլանելով: Խոշոր կայծերը ճարճատելով ցնդվում էին օդի մեջ, հանգչում և սև բծերի պես ընկնում հատակի վրա:

— Կրակը լավ չի վառված, — ասաց Զառնիշանը Սոնային. գլուխներս կբռնի:

Սոնան երեսը ետ դարձրեց, որ կրակը դուրս տանի նորից փչելու...

— Լա՛վ, չի ուզիլ, ցրտից փետացանք, ածա՛, ինչ կլինի, թող լինի...

Սոնան վերադարձավ, մեջքից թեքվեց, բարձրացրեց քրսինի վրա ձգած կարպետն ու վերմակը և կրակն ածեց քրսինի տակ, ուղիղ կենտրոնում փորված մի ձմերուկի չափ փոսի մեջ: Զառնիշանը զգաց թեժ կրակի տաքությունը, ոտները հանեց քրսինի տակից և հրամայեց Սոնային բաց թողնել քրսինի մի կողմը, որպեսզի ածուխի վտանգավոր հոտը դուրս գա:

Պարսկուհին անթարթ աչքերով նայում էր Սոնայի երեսին: Նայում էր և՛ Գյուլնազը իր ապակյա անշարժ աչքերով: Այն վայրկյանին, երբ Սոնան, իր սկեսրի հրամանը կատարած, ձեռը հենեց հատակին ոտքի կանգնելու, նկատեց այդ երկու զույգ չարաշուք աչքերի սուր հայացքները: Նա հիշեց այն երեկոն, երբ առաջին անգամ տեսավ Գյուլնազի ապակյա աչքերը և սարսափեց: Այժմ այդ սարսափը նրան թվաց նախախնամության կողմից տրված նախազգուշության նշան ապագայի մասին... Նույն վայրկյանին նա հիշեց իր մորը, հորը, որոնց վաղուց չէր տեսել: Դեռ առավոտից մի առանձին փափագ էր զգում տեսնել իր մորն և վճռել էր, եթե Դանելը գա, խնդրի նրան մի կերպ հացթուխին գտնի — բերի — իր աղջկա հետ տեսնվելու: Ամբողջ օրը նրա աչքերի առջև էր այն աղքատիկ խրճիթը, ուր անց էր կացրել իր մանկության տարիները, — այն կավյա խաղատիկինները, որոնց հետ ուրախացել էր և վշտացել: Այժմ, այն վայրկյանին, երբ պարսկուհու և Գյուլնազի չարագուշակ հայացքները բևեռված էին նրա վրա, հիշեց և՛ Մուրադին, որ ծխախոտը ձեռին, աչքերն անորոշ տարածության մեջ հառած, անցնում էր նրա առջևով, գունատ, մտամոլոր, դժբախտ: Նրա հետևից անցնում էր գիժ-Դանելը, գավազանը կրծքին բռնած, գլուխը վեր բարձրացրած, երգելով իր մելամաղձիկ և վշտահնչյուն երգերից մինը: Ախ, որքա՜ն պարզ և կենդանի էին այդ բոլոր պատկերները: Նա զգում էր նրանց մերձավորությունը, լսում էր նրանց շնչառությունն անգամ... Բայց բոլորը հեռու էին նրանից: Մի ինչ-որ աներևույթ ձեռ ձգեց մի սև վարագույր նրա աչքերին...

Եվ ամեն ինչ մթնեց Սոնայի համար...

Պարսկուհու և Գյուլնազի հայացքները շարունակ հառած էին նորահարսի վրա: Իսկ պառավ Զառնիշանը նայում էր նրան: Գյուլնազը սփրթնած էր:

Կախարդուհու սեղմված, հողագույն և բարակ շրթունքները ցնցվում էին, բայց ոչ ցրտից, ինչպես առաջ, այլ գուցե աներևույթ դևերի սարսափից:

Այն վայրկյանին, երբ Սոնան ընկավ հատակի վրա, Գյուլնազը բնազդմամբ ոտքի թռավ, կախարդուհին նույնպես: Երկուսն էլ նայեցին Զառնիշանին:

— Ազատեցե՛ք որդուս, — շշնջաց պառավը մի տեսակ ինքնամոռացության մեջ, ձեռներով աչքերը ծածկելով:

Այդ շշնջման և այդ շարժման մեջ կար սոսկալի բան:

Առաջինը Գյուլնազը բռնեց Սոնայի ցնցվող բազկից, բայց իսկույն ետ քաշվեց: Նրա ձեռները կաշկանդվեցին: Կախարդուհին իր ջղոտ, պղնձագույն ձեռներով բռնեց ընկնավորի թևերից և քաշեց նրան դեպի քրսինը: Գյուլնազը փակեց դռները և լուսամուտները: Զառնիշանը շարունակ ծածկում էր աչքերը ձեռներով: Չար վիուկը նստել էր քրսինի վերմակի վրա, աշխատելով, որ չբարձրանա և դրսից օդ չմտնի քրսինի տակ:

Լսվում էին խուլ խրխռոցներ, ապա մի երկարատև ճչոց և հետո ծանր, սարսռեցուցիչ հառաչանքներ, որ, կարծես, երկրի ստորոտիցն էին գալիս: Ընդամենը այդ տևեց հազիվ մի քանի րոպե:

Այնուհետև ամեն ինչ լռեց...

Դռները դղրդացին և սենյակի մեջտեղում արձանացավ մի ոտաբոբիկ և գլխաբաց ծերունի, որի կապտագույն շապիկը հազիվ հազ ծածկում էր նրա մարմինը: Նրա կարմրած աչքերը պտտում էին շրջանակների մեջ, աջ ու ձախ փնտրելով մեկին, իսկ գլխի գզգզված մազերը ցցվել էին վեր, ինչպես ամեհի առյուծի բաշը:

Գյուլնազը կանգնեց պարսկուհու առջև, որպեսզի անտեսանելի կացուցանի նրան խենթի աչքերից: Պարսկուհին բարձրացրեց քրսինի վերմակն ու կարպետը և, բռնելով ընկնավորի ոտներից, դուրս քաշեց նրան:

— Տվե՛ք ինձ, տվե՛ք ինձ, — աղաղակեց գիժ-Դանելը և, ուժգնաբար հրելով պարսկուհուն և Գյուլնազին, հարձակվեց Սոնայի վրա:

Ընկնավորը անշնչացած էր: Ոչ ցնցվում էր, ոչ խրխռում և ոչ նրա բերանում փրփուր կար: Միայն նրա դեմքը սաստիկ կապտած էր և ուռած, աչքերի բիբերը դուրս ցցված, մազերը խանձված և ճակատը տեղ-տեղ սևացած...

— Պատառ-պատառ կանեմ, գոռաց խենթը և, մի ձեռով թավալելով կախարդուհուն հատակի վրա, սկսեց խեղդել նրան:

Զառնիշանն անշարժ, սարսափած և ապշած նայում էր եղերական տեսարանին: Գյուլնազը փորձեց ազատել պարսկուհուն կատաղած Դանելի ձեռքից: Բայց արդեն ուշ էր...